

ԱՐԴՅՈՒՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ ԱՍՏՕՈ ԽՈՍՔՆ Է.

[Հայերեն - Armenian – أرمني]



Պրոֆեսոր- Սունքիթ Իբն Մահմուդ Աս-Սաքքար



Թարգմանությունը:

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող հանձնաժողով:

Աբու Առամ

هل العهد الجديد كلمة الله؟



منقذ بن محمود السقار



ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

وآنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Առաջնահերթ, ամբողջ փառքը և երախտագիտությունը Ալլահին, Ամենաբարձրյալ Աստծուն: Մեծ պատվով ես ներկայացնում եմ այս համեստ աշխատությունը իմ ընթերցողներին, հուսալով, որ Ամենաբարձրյալ Աստվածը կօգնի նրան շահել դրանից և նրան և ինձ կհամարի այն մարդկանցից, ովքեր տեղյակ են ճշմարտությանը և ուղղորդությանը:

Հետևելով մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) սովորույթին երախտապարտ լինել մարդկանց, ովքեր մեր հանդեպ բարի են եղել, ես ցանկություն ունեմ իմ շնորհակալական խոսքը ուղղել այն մարդկանց, ովքեր օժանդակել են ավարտելու այս աշխատանքը և այս աշխատանքի իմ հաջողության հնարավորությունը արդյունք էր Ամենաբարձրյալ Աստծո նրանց աղոթքների:

Ես ցանկություն ունեմ իմ երախտագիտությունը և շնորհակալությունը արտահայտել իմ առաքինի ծնողներին, ում դերակատարությունը մեծ է շարունակաբար ինձ խթանելու և փայփայելու մեջ: Ես նույնպես իմ երախտագիտությունն եմ հայտնում իմ հավատարիմ կնոջը, շարունակական աջակցության, օժանդակության և աշխատանքի ավարտման գործընթացին իմ կողքին լինելու համար:

Ես ցանկություն ունեմ նույնպես իմ սրտագին երախտագիտությունը հայտնել թարգմանչին, Դոկտոր Ալի Քասիմին ով մեծ դեր է խաղացել ներկայացնելու այս գիրքը անգլիախոս ընթերցողներին: Ես նույնպես իմ երախտագիտությունն ու շնորհակալություն եմ հայտնում իմ բոլոր եղբայրներին, ընկերներին և գործընկերներին, ովքեր մեծ դեր են խաղացել գրքի ավարտման գործընթացին:

Մունքիդ իբն Մահմուդ Աս-Սաքքար, Դոկտոր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ալլահը¹ Ամենաբարձրյալը² իր մարգարեներին մեկը մյուսի ետևից ուղարկել է նշաններով, ճշմարիտ ուղղորդությամբ և լույսով, բացահայտելու այդ մարդկանց:

Այդ հավատարիմ մարգարեների մեջ էին ամենահայտնի մարգարեները և առաքյալները, Մեսսիան, Հիսուսը³ (Ի.Ա.Ո.Ն): Ալլահը շնորհեց նրան Ավետարանը: **«Այնուհետ, Մենք ուղարկեցինք նրանց ետևից Մեր Մարգարեներին և Մենք ուղարկեցինք Իսային (Հիսուսին)- Մարիամի որդուն և տվեցինք նրան Ինջիլ, (Ավետարան): Եվ Մենք հաստատել ենք նրանց սրտերում, ովքեր հետևում են նրան, զթասրտություն և**

¹- Մահմեդականները գերադասում են կիրառել «Ալլահ» անունը, որը հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահի ամենահզոր անուններից մեկը, անգլերեն «Աստված» բառի փոխարեն: Ի տարբերություն անգլերեն «Աստված» բառի, այն եզակի և անբիժ է: Եթե մենք «Աստված» բառին ավելացնենք «ներ» մասնիկը, կստացվի «Աստվածներ», որը հոգնակի թիվ է: Ալլահը մեկ և եզակի է, գոյություն չունի այդ բառի հոգնակի թիվը: Եթե մենք բառին ավելացնենք «ուհի» վերջավորությունը, ապա կստացվի «Աստվածուհի», որը հանդիսանում է իզական սեռի Աստված: Գոյություն չունի իզական կամ արական Ալլահ: (Քաղվածք «Մեծ Կրոնների Աստծո Գաղափարը», հեղինակ Դոկտոր Ջաքիր Աբդուլլահի, էջ.18) (Ձետեղել է թարգմանիչը):

² - Մահմեդականները չեն նշում Ալլահի անունը առանց փառաբանության: Ամենաբարձրյալ բառը նշանակում է «Թող նա լինի փառաբանված և բարձրյալ»: (17:43) Ուստի, այս գրքի մեջ ես կկիրառեմ «Ալլահը, Ամենաբարձրյալ» խոսքերը, որը վերաբերվում է Աստծուն, բացառությամբ հատվածների և մեջբերումների: (Լրացրել է թարգմանիչը)

³ - Մահմեդականները նույնպես չեն նշում Մարգարեների անունները, առանց նրանց պատվելու և խնդրելու: (Ի.Ա.Ո.Ն) հապավումը նշանակում է Խաղաղություն և Օրհնանքը լինի Նրան, երբ նշում են Անբիժ Կույս Մարիամին և ավելի քան մեկ մարգարեի: (Լրացրել է թարգմանիչը)

կարեկցանք: Սակայն վանականությունը, որը նրանք հայտնագործել են իրենց համար, Մենք չենք նախատեսել նրանց համար, սակայն նրանք փնտրել են միայն գոհացումը Ալլահի միաժամանակ, սակայն, նրանք չեն դիտարկել այն, ճիշտ դիտարկությամբ: Այսպիսով, Մենք տվել ենք նրանց, ովքեր հավատք են ընծայել, իրենց արժանի պարգևը; սակայն նրանցից շատերը Ֆասիքուն (ըմբոստ, անհնազանդ) են Ալլահին»: (Ալ-Հադիդ :27)

Ամենաբարձրյալ Ալլահը հավատացյալներին ասել է հավատք ընծայել բոլոր մարգարեներին և հայտնություններին; որը Նա, Ամենաբարձրյալը տվել է նրանց: **«Ասա, Օվ Մահմեդականներ, Մենք հավատք են ընծայում Ալլահին և ինչ ուղարկել է մեզ և ինչ ուղարկել է Իբրահիմին, (Աբրահամին), Իսմայիլին, (Իշմաելին), Իսահակին (Իսաակին), Յակուբին, (Հակոբին) և Ալ-Ասքաաթին, (Յակուբի, Հակոբի տասներկու որդիների ժառանգներին) և ինչ տվել է Մուսային (Մովսեսին) և Իսաային (Հիսուսին) և ինչ տվել է Մարգարեներին իրենց Տիրոջից: Մենք որևէ տարբերություն չենք դնում նրանց միջև և մենք հնազանդվում են է Նրան (Իսլամին)»:** (Ալ-Բակարահ :136)

Նկարագրելով հավատացյալներին, Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. **«Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) հավատք էր ընծայում այն ամենին, ինչ ուղարկել էր նրան իր Տերը և այդպես են վարվում հավատացյալները: Յուրաքանչյուրը հավատք է ընծայում Ալլահին, Նրա Հրեշտակներին, Նրա Գրքերին և Նրա Մարգարեներին: (Նրանք ասում են), «Մենք ոչ մի տարբերություն չենք դնում Նրա Մարգարեների միջև»:** (Ալ-Բակարահ :285)

Ավետարանը, որ Ամենաբարձրյալ Ալլահը հայտնել է Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) չի հանդիսանում Նոր Կտակարանի գլուխները, որոնք Քրիստոնյաները սուրբ են համարում և որը գրառել են Հիսուսի

(Խ.Ա.Ո.Ն) աշակերտները և հետևորդները: Այս մարդկային պատմությունները, կենսագրականները և նամակները չեն հանդիսանում Ամենաբարձրյալ Ալլահի հայտնությունը Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) :

Ինչպե՞ս են կարող մարդիկ իրենց իսկ գրառումները կեղծորեն վերագրել Ամենաբարձրյալ Ալլահին:

«Ապա, անե՞ք նրանց, ովքեր գրում են Գիրքը իրենց իսկ ձեռքերով և այնուհետ ասում են. «Սա Ալլահից է», մի փոքր գումար ստանալու համար: Անե՞ք նրանց, ինչ նրանց ձեռքերը գրել են և անե՞ք դրանից նրանց վաստակին»: (Ալ-Բակարահ :79)

Այս տարբերակը ակնհայտ աստվածային վկայություն է այն փաստի, որ գրքի մարդիկ (Հրեաները և Քրիստոնյաները) աղավաղել և փոփոխել են Աստծո խոսքը: Այն հայտարարում է, որ այն, ինչ այժմ գոյություն ունի (Հին և Նոր Կտակարանները) չեն հանդիսանում Ամենաբարձրյալ Աստծո խոսքը:

Այնուամենայնիվ, Մահմեդականները չեն առարկում, որ Նոր Կտակարանի որոշ հատվածներ, որոնք մեզ պատմում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) խորհուրդները, խոսքերը և արարքները ճշմարիտ են: Սա է այս խնդրի մահմեդականների կարծիքը: Քրիստոնյաները հավատք են ընծայում, որ Նոր Կտակարանը հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահի խոսքը, որը գրառել է սուրբ մարդը, Սուրբ Հոգու ոգեշնչությամբ:

Ամեն դեպքում, արդյո՞ք գիտական պատմական վկայությունները և (նույնիսկ Նոր Կտակարանի հատվածները) աջակցում են Սուրբ Դուրանի խոսքերին, կամ արդյո՞ք նրանք աջակցում են Քրիստոնեական հավատքին:

Տվյալ շարքի մեր առաջին գրքի մեջ, մենք ապացուցում ենք, որ Հին Կտակարանը չի հանդիսանում Ամենաբարձրյալ Ալլահի

խոսքը; Այս հատվածի մեջ, որը այս շարքի երկրորդն է, մենք կպատասխանենք մեկ այլ հարցի, թե արդյո՞ք Նոր Կտակարանը հանդիսանում է Աստծո խոսքը:

Հարցին պատասխանելու համար, մենք կուսումնասիրենք Սուրբ Աստվածաշունչը, Քրիստոնյա աստվածաբաններին, հետազոտողներին և գիտական ու պատմական գիտնականներին և կհետևենք գիտական մեթոդաբանությանը:

Ուղղելով խնդրանքը և աղոթքը Ամենաբարձրյալ Ալլահին ուղղորդելու մեզ բոլորիս ճշմարիտ ուղղու, ես ներկայացնում եմ իմ աշխատանքը յուրաքանչյուրին, ով փնտրում է ճշմարտությունը:

Դոկ, Մունքիթ Բեն Մահմուդ Աս-Սաքքար

Մաքքահ Ալ-Մուքարրամահ

Թուլ- Հիջջահ, 1423 Հիջրահ (Լուսնային Օրացույց)

mongiz@maktoob.com

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Նոր Կտակարանը հանդիսանում է չորս Ավետարանների հավաքածու, Գործքի գիրք, քսանմեկ Նամակներ և հայտնություն, որոնք էլ հանդիսանում են Քրիստոնյաների սուրբ գրքի բովանդակությունը: Տվյալ գրքերը վերագրում են ութ հեղինակներին, ովքեր եղել են Քրիստոնեության առաջին և երկրորդ սերունդները. Մատթեոս, Մարկոս, Դուկաս և Հովհաննես, ովքեր էլ հանդիսանում են Ավետարանների հեղինակները և Պողոսը, ով հանդիսանում է տասնչորս նամակների⁴ հեղինակը և Պետրոսը, Ջեյմսը, Հուդան, ում վերագրում են որոշ նկարները:

Մատթեոսը, Հովհաննեսը, Պետրոսը, Ջեյմսը և Հուդան հանդիսանում էին Հիսուսի (Ի.Ա.Ո.Ն) աշակերտները: Մարկոսը, ով հանդիսանում էր Պետրոսի աշակերտը և Պողոսը, ով Քրիստոնեություն ընդունեց Հիսուսից (Ի.Ա.Ո.Ն) հետո և նրանք երբեք նրան անհատապես չեն հանդիպել: Դուկասը, ով հանդիսանում էր Պողոսի աշակերտը քրիստոնեություն ընդունեց Պողոսի միջոցով, ով, ինչպես նշեցինք, չէր հանդիպել Հիսուսին (Ի.Ա.Ո.Ն):

Քրիստոնյաները խոստովանում են, որ Հիսուսի (Ի.Ա.Ո.Ն) աշակերտները և նրանց հետևորդները գրառել են Ավետարանները և Նամակները, ապա այդ դեպքում, ինչպե՞ս են կարող որոշ մարդկանց գրառումները սուրբ համարվել:

Վատիկանի Խորհրդի ընթացքում 1869-1870 եկեղեցին որոշում կայացրեց կապված Սուրբ Աստվածաշնչի, Հին և Նոր Կտակարանների հետ: Այն ասում է. «Սուրբ Աստվածաշնչի այս

⁴ - Եթե մենք ընդունենք գիտնականների կարծիքը, ովքեր կասկածելի կերպով վերագրում են Հրեաները Պողոսին

գրքերը հեղինակել է Աստվածը, որը գրառել են Սուրբ Հոգու ողբերգությանը և որպես այդպիսին տրվել է եկեղեցուն»:

Դրանից մեկ դար անց, Վատիկանում տեղի ունեցավ մեկ այլ հանձնաժողով: Այս հանձնաժողովը (1962-1965) տեղի ունեցավ քննարկելու այն խնդիրները, որոնց դեմ հանդիման էր կանգնել եկեղեցին Սուրբ Աստվածաշնչի քննադատական ուսումնասիրությունների ընթացքում: 2344 մեծամասնական և միայն վեց դեմ ձայներով այն որոշեց հետևյալը.

«Թորան ձախողվել էր լինել Աստծո խոսք և այս տեսակետից կտակարանները ավելի լավ են և նրանք, Կտակարանները եկել են մեզ Սուրբ Հոգու աստվածային ողբերգությանը: Եկեղեցին հայտնում է, մեծ հաստատականությամբ և համոզվածությամբ, որ չորս Կտակարանները միշտ հաստատում են իրենց պատմական վավերականությունը: Կտակարանները ազնվորեն ասում են մեզ Աստծո Որդի Հիսուսի գործերը և ուսմունքները: Սուրբ հեղինակները գրառել են չորս Կտակարանները որպեսզի բացահայտեն մեզ ճշմարտությունը և Քրիստոսի ազնիվ գործերը»:⁵

Եկեղեցին նույնպես հայտնում է, որ հեղինակները փոփոխել են որոշ խոսքեր, ուստի հեղինակը հանդիսանում է ոչ թե Ամենաբարձրյալ Ալլահը, այլ Սուրբ Հոգու ողբերգությանը ավետարանականները: Իրենց «Ղպտի Ազգի Պատմության Ամփոփում» գրքի մեջ, ղպտի գիտնականները ասում են, «Սուրբ Աստվածաշունչը հանդիսանում է գրքերի հավաքածու, որոնք տարբեր ժամանակաշրջաններում, Սուրբ Հոգով գրառել են Աստծո մարդիկ»:

⁵ Սուրբ Աստվածաշնչի թարգմանությունների տարբերությունները, Ահմեդ Աբդուլ Ուահաբ, էջ.91-92

Քրիստոնյաները հավատք չեն ընծայում բառացի գրական ոգեշնչմանը, այնպես ինչպես Մահմեդականները: Նրանք հավատք են ընծայում որ. «Եթե Ալլահը, Ամենաբարձրյալը, ցանկություն հայտնի մարդկանց պատմել իր որոշ գաղտնիքները, Նա կոգեշնչի ընտրյալ հեղինակին գրել գլուխը: Այնուհետ, նա կաջակցի հեղինակին և կոգեշնչի նրան ընտրել իրադարձությունը, իրավիճակը, արարքները, խոսքերը, որոնք Նա է ցանկանում ի շահ Իր ծառաների: Ալլահը նույնպես կլինի հեղինակի դաստիարակը և առաջնորդը և Նա կպաշտպանի նրան յուրաքանչյուր սխալից կամ թերությունից և կգրառի միայն այն, ինչը Ալլահն է ոգեշնչում նրան գրառել. սա բավարար է գիրքը վերագրել Ալլահին»:

Քահանա Ֆենդերը հայտնության մեջ բացատրեց Քրիստոնյաների հավատքը: Նա ասաց. «Մենք հավատք ենք ընծայում, որ մարգարեները և աշակերտները ամեն ինչում ենթարկվել են մոռացության և սխալների, սակայն, նրանք անսխալ են գրառելու և պատմելու մեջ: Եթե ընթերցողը նկատել է որոշ տարբերություններ կամ անհավանականություններ իրենց գրվածքների մեջ, ապա պատճառը ընթերցողի գիտելիքի և ընկալման պակասն է»:⁶

Սա հանդիսանում է Նոր Կտակարանի Քրիստոնյաների համառոտ հավատքը:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Նոր Կտակարանի գրքերը մենք ստացել են հազարավոր ձեռագրերից, որոնցով Քրիստոնյաները հպարտանում են: Նրանք հավատք են ընծայում, որ այս ձեռագրերը, որոնք մեծաքանակ են, հանդիսանում են Ամենաբարձրյալ Ալլահի

⁶ Հայտնված Ճշմարտությունը, Ռահմաթուլլահ Ալ-Հինդի, հատոր 1, էջ.39-42

անսխալականության ակնհայտ վկայությունը, որոնք գրառել են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աշակերտները:

Ձեռագրերի կարևորությունը և Քրիստոնյաների համար իրենց ժամկետները ընկալելու համար մենք մեջ կբերենք այն, ինչ ասաց Քահանա Ջիմմի Սուազարթը մահմեդական գիտնական Սեմեդ Դիդաթի հետ բանավեճի ընթացքում: Նա ասաց, «Գոյություն ունի Նոր Կտակարանի Աստծո խոսքի ավելի քան քսանչորս հազար գրավոր ձեռագրեր, որոնցից ամենահնագույնը պատկանում է երեք հարյուր հիսուն թվականներին: Ամեն դեպքում, Աստծո խոսքի առաջին ձեռագրի բնօրինակը գոյություն չունի»:

Նոր Կտակարանի ձեռագրերը կարելի է բաժանել երեք դասի:

ԱՌԱՋԻՆ, ՄԱԳԱՂԱԹԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Մագաղաթի գրառումը կիրառության մեջ էր երկրորդ և երրորդ դարերում: Այս ձեռագրերը պարունակում են Նոր Կտակարանի երկու հատվածները: Մեկը պարունակում է Հովհաննեսի Ավետարանի երկու հատվածները (Հովհաննես 18:31 և 18:37-38), որոնք գրառվել են երկրորդ դարում և այժմ գտնվում են Մանչեսթրում: Մյուսը պարունակում է Մատթեոսի Ավետարանի երկու հատվածները (Մատթեոս 1:1-9 և 12:14-20), գոյություն ունեն նաև որոշ պապիրոս ձեռագրեր, որոնք պատկանում են ավելի ուշ ժամանակաշրջանի և պարունակում են հակիրճ աստվածաշնչյան հատվածներ:

ԵՐԿՐՈՐԴ ՀՈՒՆԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Այս ձեռագրերը գրառել են կենդանիների կաշվի վրա և նմանատիպ գրառությունը կիրառել են չորրորդ դարում: Այս ձեռագրերը բազմաթիվ են և պարունակում են ամենակարևոր ձեռագրերը. Ալեքսանդրիոսի Ձեռագիրը, Սինաքթիքոսի Ձեռագիրը և Վատիկանոսի Ձեռագիրը:

ԵՐՐՈՐԴ, ՁԵՌԱԳՐԵՐ, ՈՐՈՆՔ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՐՈՐԴ ԴԱՐԻՆ

Բազիլենսիսի ձեռագիրը հանդիսանում է ամենակարևորը:

Ալեքսանդրիոսի, Սինաթիկոսի և Վատիկանոսի ձեռագրերը հանդիսանում են Հունական ձեռագրի ամենակարևորները: Դրանք գրառվել են չորրորդ դարում: Մենք դրանք բացատրել ենք Հին Կտակարանի մասին մեր նախորդ գրքի մեջ; ուստի մենք կնշենք միայն այն, ինչ վերաբերում է Նոր Կտակարանին:

1. ՎԱՏԻԿԱՆՈՒՄԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Կաթոլիկ Նոր Կտակարանի ներածությունը ասում է. «Ամենահին ձեռագրերը, որոնք պարունակում են Նոր Կտակարանների գրքերի մեծամասնությունը կամ ամբողջական տեքստերը, երկու սուրբ գրքեր են, որոնք պատկանում են չորրորդ դարին և Վատիկանոսի ձեռագիրը հանդիսանում է ամենակարևորը: Ձեռագրի աղբյուրը մեզ հայտնի չէ և դժբախտաբար այն ունի որոշակի վնասվածքներ; Այն պարունակում է Նոր Կտակարանը, բացառությամբ Հրեաների (9:14, 13:25) առաջին և երկրորդ Տիմոթեոսը, Տիթոսը, Փիլիպոսը և Հայտնությունը և անհայտ հեղինակը ավելացրել է այս նամակները և Թղթերը տասնհինգերորդ դարում: Այս ձեռագրի մեջ Մարկոսի Ավետարանը ավարտվում է 16:9 տարբերակով»:

2. ՄԻՆԱՔԹԻՔՈՒՄԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Նոր Կտակարանի Ֆրանսերեն ներածությունը ասում է. «Այս ձեռագիրը ոչ միայն պարունակում է ամբողջ Նոր Կտակարանը, այլ նաև Բարնաբայի նամակները և Հերմանսի հովվերգության մի մասը, որը գրառումների մեջ չէ»: Այս ձեռագիրը չի ներառում Մարկոսի Ավետարանի ավարտը (16:9-20) և գոյություն չունի ոչ մի դատարկ էջ, իսկ Ղուկասի սկիզբը սկսվում է անմիջապես 8 տարբերակով:

3. ԱԼԵՔՍԱՆԴՐԻՆՈՒՄԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Այս ձեռագիրը պարունակում է Նոր Կտակարանը, որոշակի թերի հատվածներով: Օրինակ է հանդիսանում է Մատթեոսի Ավետարանի սկիզբը մինչ (25:6) գլուխը և Հովհաննեսի Ավետարանի գլուխ (6:51) մինչ (8:52): Այն նույնպես պարունակում է Կլեմենտի երկու նամակները և այլ գրառումներ, որոնք առկա չեն Սուրբ Աստվածաշնչի մեջ:

4. ԵՓԵՍՅԱՆ ՌԵՍԿՐԻՊՏՈՒՄԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Այս ձեռագիրը ներառում է միայն Նոր Կտակարանը, որը այժմ գտնվում է Փարիզի Ազգային Գրադարանում: Գիտնականները ենթադրում են, որ այն գրառել են վեցերորդ կան յոթերորդ դարում և ոմանք ասում են, որ հինգերորդ դարում:

5. ԲԵՋԱ ՔԱՆԹԵԲԸՐԻԳԵՆՄԻՄԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Այս ձեռագիրը պատկանում է հինգերորդ դարին և այժմ գտնվում է Քեմբրիջի Համալսարանում: Այն պարունակում է չորս Ավետարաններ և Գործք գիրքը, հատվածների բազմաթիվ թերություններով, ինչպիսին է Հովհաննեսի Ավետարանի սկիզբը: Այս ձեռագրի հեղինակը ազատ կերպով կրկնօրինակում էր: Նա կրկնօրինակել է Հիսուսի տոհմաձառի ցուցակը ինչպես արձանագրել է Մատթեոսը և այնուհետ, նա կրկնօրինակել է Ղուկասի ցուցակը և նկատել է տարբերությունը, նա զետեղել է Մատթեոսի ցուցակը Ղուկասի Ավետարանի մեջ: Ամեն դեպքում, քանի որ Մատթեոսի ցուցակից բացակայում էր մի քանի անուններ, նա իրենից ավելացնում է որոշ անուններ:

6. ԲԱԶԻԼԵՆՄԻՄԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Գիտնականները առաջարկում են, որ այն պատկանում է ութերորդ դարին և այժմ գտնվում է Շվեյցարիայի Բազելի

Համալսարանում: Այն պարունակում է Նոր Կտակարանը հսկայական թերություններով:

7. ԼԱՌԻԴԻԱՆՈՒՄԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Այս ձեռագիրը պատկանում է իններորդ դարին և այժմ գտնվում է Օքսֆորդի Բողեյնի Գրադարանում: Այն պարունակում է միայն Գործքի գիրքը:⁷

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին բանը, որը մենք նկատում ենք Նոր Կտակարանի ձեռագրերի մեջ այն է, որ դրանք չեն գրառել մարդիկ, ում վերաբերվում են, դրանք չեն գրել նրանց գոյություն ընթացքում և առաջին ձեռագիրը գրառել են նրանց մահից նվազագույնը երկու դար անց:

Քրիստոնյաները չեն կարող ապացուցել, այլապես Փրիսթ Ֆրինգը կխոստովաներ դա մահմեդական գիտնական Ալ Հինդի բանավեճի ընթացքում: Ներողություն խնդրելով Փրիսթ Ֆրինգը ասաց. «Պատճառը, որ մենք, քրիստոնյաներս կորցրեցին արձանագրությունները հանդիսանում են այն դժվարությունները և խնդիրները, որոնց առջև կանգնում են Քրիստոնյաները երեք հարյուր և տասներեք տարիներ»: Մահմեդական գիտնական Ալ Հինդին ընդունել է այս բացատրությունը, սակայն չի ազատում նրանց բերել այս արձանագրությունները: Քանի որ այսպիսի գործոնները չեն կարող ապավինել ենթադրություններին, գուշակություններին և անորոշությանը: Ավելին, Նոր Կտակարանի ձեռագրերի միջև գոյություն չունեն երկու նմանատիպ ձեռագրեր: Բոլորը

⁷ Տես Կրոնների Համեմատություն աշխատությունը, հեղինակ Մուհամմեդ Էզգաթ Տահտաուլի, էջ.47-51, Մուրբ Աստվածաշունչը նժարի վրա, Աբդուս Մալամ Մուհամմեդ, էջ.91, Մուրբ Աստվածաշունչի Ընթերցումները, Աբդուր Ռահիմ Մուհամմեդ հատոր 2, էջ. 269-270

հանդիսանում են հեղինակների հայեցողության լրացումների և հեռացումների արդյունք և այս խոստովանում են Քրիստոնյաները:

Փորձելով նվազեցնել ձեռագրերի միջև առկա այս տարբերությունների կարևորությունը, Ջիմմի Մուազզարթն ասաց. «Ինչ վերաբերում է գրվածքներին, գիտական սկզբունքները մեզ ասում են, որ, եթե մենք ունենք որոշակի գրքի տաս օրինակ, ապա մեզ անհրաժեշտ չէ բնօրինակը: Մենք ունենք քսանչորս հազար կրկնօրինակ և մենք չենք ժխտում, որ դրանց միջև առկա են տարբերություններ: Ամեն դեպքում, կարևորը այն է, որ բովանդակության էությունը չենթարկվի փոփոխության»:

Իր «Աստվածաշնչի մասին ճշմարտությունը» գրքի մեջ, Դոկ. Ռոբերտը համամիտ չէ Մուազզարթի հետ և պատասխանում է: Ավելին, Ռոբերտը պատրաստել էր գիտական թուուցիկ, որը պետք է տպագրվեր Սուրբ Աստվածաշնչի հետ, սակայն նրան չթույլատրեցին: Երբ նրան հարցրեցին պատճառը, նա ասաց. «Թուուցիկը մարդկանց կստիպեր կորցնել իրենց հույսը գրքին»:

Նա նույնպես ասաց. «Գոյություն չունի ոչ մի գիրք, որը պարունակում է փոփոխություններ, սխալներ, կեղծիքներ, ինչպես Սուրբ Աստվածաշունչը» և նա ավելացրեց, որ եկեղեցական հայրերը խոստովանում են մտադրված կեղծիքի մասին, սակայն անհամաձայնությունը կայանում է նրանով, թե ով է արել դա: Նա ավելացրեց. «Ոչ ոք չի կարող հայտարարել, որ Սուրբ Աստվածաշնչի հաստատվածների հեղինակը Աստվածն է, կամ որ Նա ոգեշնչել է այս կեղծիքները»:⁸

⁸ Տես. «Ալ Հինդիի և Փրիսթ Ֆենդերի մեծ բանավեճերը» էջ.372

Քեն Ռիմն ասաց. «Այսօր աստվածաբանները համամիտ են, որ Սուրբ Աստվածաշնչի միայն մի փոքր հատված չի ենթարկվել փոփոխության»:

Բրիտանիկա Հանրագիտարանի մեջ Մորիս Նուրն ասաց. «Կանոնական Ավետարանների վաղ ձևաչափը գրառվել է հինգերորդ դարում: Աշակերտների և հինգերորդ դարի ժամանակահատվածը մեզ չի թողնում այդ չորս Ավետարանի որևէ ձևաչափ: Նույնիսկ, չնայած այն մոտ է մեր ժամանակաշրջանին, այնտեղ առկա է զգալի կեղծիք, առավելապես Մարկոսի և Հովհաննեսի Ավետարանների մեջ»:

Ինչ վերաբերում է Մարկոսի Ավետարանին, իր «Սուրբ Մարկոս» գրքի մեջ, Դենիս Նայնհամն ասաց. «Անխուսափելի փոփոխությունները կամա և ակամա, սողոսկեց հարյուրավոր ձևաչափերի մեջ, այսինքն Մարկոսի կրկնօրինակ ձևաչափ, որոնք պահպանվել են, սակայն նրանց մեջ առկա չեն երկու նույնանման»:⁹ Նա նույնպես ասաց. «Մենք չունենք որևէ գրառված ձևաչափ, որը մենք կարող ենք համեմատել մյուսի հետ»:

Քահանա Քորերը ասաց, որ Ավետարանների ձևաչափերը պարունակում են 50 000 տարբերություններ, մինչդեռ Քրիս Բախն ասաց, որ դրանք 150000 են: Բրիտանիկա Հանրագիտարանը հաստատում է սա ասելով. «Եկեղեցական հայրերի Նոր Կտակարանի ընտրությունը, որը ընդգրկում է համարյա ամբողջը, հատվածների միջև ցույց է տալիս ավելի քան հարյուր և հիսուն հազար տարբերություններ»:

Քրիստոնյաները փորձում են գտնել այս տարբերությունների արդարացումը: Իր «Ուղեցույց փնտրողները» գրքի մեջ Դոկ. Սամաան Կալիունը ասաց. «Մի զարմացեք սուրբ գրքերի

⁹ Սուրբ Մարկոս. Դ.Ե. Նայնհամ էջ.11

կրկնօրինակների մեջ գետեղված տարբերությունների վրա, քանի որ մինչ տասնհինգերորդ դարի տպագրության հայտնագործումը, այս կրկնօրինակները ձեռագիր էին և այդ հեղինակներից ոմանք անուսում և մոռացկոտ էին»:¹⁰

Սա ճշմարտություն է, սակայն միայն մի մասը, քանի որ նա անտեսում է հեղինակների կամա կեղծիքները, որի մասին խոստովանում են Նոր Կտակարանի Ֆրանսերեն ներածության հեղինակները:

Այն ասում է. «Առկա Նոր Կտակարանի ձեռագրերը, նամանտիպ չեն, սակայն կարելի է տեսնել տարբեր կարևորության շատ տարբերություններ: ... Գոյություն ունեն տարբերություններ, որոնք ներառում են իմաստային ամբողջական հատվածներ և դժվարություն չի հանդիսանում գտնել դրանց պատճառաբանությունները: Հեղինակները, ում աշխատանքի ունակությունը տարբեր է, դարերի ընթացքում կրկնօրինակել են Նոր Կտակարանի տեքստը և նրանցից ոչ մեկը ապահովագրված չէ տարբեր խախտումներից...: Ի լրացում, որոշ դպիրներ երբեմն փորձել են ուղղել այն, ինչ ըստ նրանց աստվածաբանական տեսանկյունի, պարունակել է ակնհայտ սխալներ կամ ճշգրտության պակաս և ուստի ներկայացրել են տեքստի նոր գույն, որը ամբողջովին սխալ է:

Այս ամենին մենք կարող ենք ավելացնել, որ Նոր Կտակարանի շատ հատվածների կիրառությունը երկրպագության առումով հանգեցրել է որոշ լրացումների, որոնք այն կդարձնեին ավելի գեղեցիկ և ընթերցանության համար երգեցիկ:

¹⁰ Տես Հայտնված ճշմարտությունը, Ռահմաթուլլահ Ալ Հինդի հատոր 2 էջ.542-543, Սուրբ Աստվածաշունչը նժարի վրա, Աբդուս Սալամ Մուհամմեդ էջ.94-95

Ակնհայտ է, որ այն ինչ ներկայացրեցին հեղինակները կուտակվել է դարերի ընթացքում: Տեքստը, որը հասել է տպագրության ժամանակաշրջան, լի էր փոփոխություններով և լրացումներով...Քննադատության գիտության բարձրագույն նպատակը հանդիսանում է քննել տարբեր փաստաթղթերի տեքստերը, որպեսզի տեքստը հնարավորինս մոտ գնահատել բնօրինակին, սակայն հնարավոր չէ հասնել դրան»:

Իր «Ավետարանները, իրենց բնօրինակը և աճը» գրքի մեջ, Ֆրեդերիկ Գրանթը, Նյու Յորքի Աստվածաբանության Ֆեդերալ Հաստատության Աստվածաշնչի աստվածաբանական գիտությունների պրոֆեսորը ասաց. «Տեքստերը պահպանվել են ձեռագրերի մեջ, որոնք կրկնօրինակել են հոգնած հեղինակները: Այսօր գոյություն ունեն 4700 այսպիսի լիարժեք ձեռագրեր թղթերի, կտորի կամ մագաղաթների միջև: Այս բոլոր ձեռագրերի տեքստերը զգալիորեն տարբերվում են և մենք չենք կարող անսխալ ապավինել նրանցից որևէ մեկին: Բոլոր չափերի կրկնօրինակների մեծամասնությունը վերանայողները ենթարկել են փոփոխության, ում աշխատանքները միշտ չէ, որ ճիշտ են ընկալվում»:¹¹

Նոր Կտակարանի հրատարակված տեքստերը վերջնական չեն: դրանք կախված են լրացուցիչ ձեռագրերի հայտնաբերման փաստարկից: Նոր Կտակարանի Ջեյուիթ Քահանայության ներածականը ասում է. «Այսօր, մենք կարող են Նոր Կտակարանի տեքստը պատրաստել որպես լավը, որը վերանայման կարիք չունի, հակառակ դեպքում մենք կարող ենք նոր փաստաթղթեր գտնել»:

Այն հանդիսանում է ժամանակավոր Նոր Կտակարան, մինչ հետագա ծանուցումը:

¹¹ Ավետարանները, նրանց բնօրինակը և աճը: Ֆրեդերիկ Գրանթ էջ.32

ԴՊԻՐՆԵՐԻ ՁԵԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Ոչ ոք, ով ուսումնասիրում է Ավետարանի տեքստերը, չի կարող գտնել որոշ դպիրների ականա լրացումները տեքստի մեջ: Հետևյալ հատվածները կարող են ցույց տալ դրանցից մի քանիսը:

Մատթեոսը ասաց. «Այսպիսով, երբ դուք տեսնում եք սարսափելի սրբապղծությունը, ինչպես խոսում են մարգարե Դանիելի մասին, կանգնած սուրբ վայրում, թող ընթերցողը հասկանա, ապա թող նրանք, ովքեր Հրեաստանում են, փախչեն լեռներ»: (Մատթեոս 24:15-16) «Թող ընթերցողը հասկանա» նախադասությունը լրացում է, որը ավելացրել է դպիրը, ով ցանկություն է ունեցել նշել ինդրի կարևորությունը, այդ Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերը չեն, երբ նա խոսում էր իր աշակերտների հետ:

Հովհաննեսի Ավետարանի ավարտը կարելի է ընթերցել հետևյալ կերպ. «Աշակերտն է, ով վկայում է այս բաները և ով գրառել է և մենք տեղյակ ենք, որ նրա վկայություն ճշմարիտ է»: (Հովհաննես 21:24) «Մենք տեղյակ ենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է» նախադասությունը լրացում է, որը ավելացրել է դպիրը: Տալով իր կարծիքը այս մասին, Մուրբ Աստվածաշնչի Ջեսույթ Քահանայության Տարբերակը ասում է. «Խումբը, որը գրառել է այս Ավետարանը, տեսել է այն որպես մշտական վկայություն, որը համաձայնեցված է ժամանակի հետ, որը բերել են սիրելի աշակերտները»:

Հովհաննեսի Կտակարանի մեկ այլ տարբերակը ասում է. «Անմիջապես հոսեց արյուն և ջուր, Նա, ով ականատես է եղել դարձել է վկա – վկայությունը ճշմարիտ է և նա տեղյակ է, որ նա ասում է ճշմարտությունը, որին դուք էլ կարող եք հավատք ընծայել»: (Հովհաննես 19:34-35) վերջին նախադասության մեջ

հեղինակը ցանկություն ուներ նշել և հաստատել Հովհաննեսի ազնվությունը, դրանք Հովհաննեսի խոսքերը չեն:

Ղուկասի Ավետարանի լրացումներից է Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) վերաբերող խոսքերը, երբ նա պատասխանում է իր երկու աշակերտներին, Հովհաննեսին և Ջեյմսին, երբ նրանք հարցնում են նրան, թե արդյոք նա կարող է կրակ իջեցնել Սամարատացիներին կործանելու համար: Նա (Խ.Ա.Ո.Ն) այնուհետ շրջվում և հանդիմանում է նրանց: Ամեն դեպքում, դպիրը ավելացրել է «ասելով. դուք տեղյակ չեք, թե ինչ ոգի ունեք դուք»: (Ղուկաս 9:55)

Հայր Մաթթա Ալ Միսքիինը ասաց. «Առանց բացառության, բոլոր աստվածաբանները համամիտ են, որ այս տարբերակը լրացում է, որը վաղ ժամանակահատվածում ավելացրել է դպիրներից մեկը, որովհետև վաղ ձեռագրի մեջ այն առկա չէ: Ամեն դեպքում, այն համամիտ է տեքստի իմաստին և իրավիճակին: Հնագույն ձեռագրի մեջ տարբերակը ավարտվում է «հանդիմանեց նրանց» խոսքերով:¹²

Այս լրացումը հեռացրել են Սուրբ Աստվածաշնչի մի քանի տարբերակներից, ինչպիսիք են Ամերիկյան Տիպական Տարբերակը, Անգլերեն Տիպական Տարբերակը և Ավետիսի Աստվածաշունչը:¹³

Նմանապես դպիրները կամ ավելացրել կամ հեռացրել են Հովհաննեսի Ավետարանի հինգերորդ գլխի մի հատվածը: Այն

¹² Ղուկասի Ավետարան Հայր Մաթթա Ալ Միսկիին էջ.428

¹³ Այս լրացումը կարելի է գտնել Արքա Ջեյմսի Տարբերակների մեջ, ինչպես նաև Եպիսկոպոսների Աստվածաշնչի 1568, Ժնևի Աստվածաշնչի 1587, Դարբի Աստվածաշնչի 1889 Դուայ-Ռեյմսի Աստվածաշնչի 1899 և Մուրդոքսի Նոր Կտակարանի մեջ: «Սակայն, Նա շրջվեց և հանդիմանեց նրան, դուք տեղյակ չեք, թե ինչ ոգի եք»: Ավելացրել է Թարգմանիչը

ասում է. «Նրանց մեջ պատկած էին տկար ժողովրդի մի բազմություն, կույր, կաղ, գառամյալ, ուլքեր սպասում էին հոսող ջրին: Քանի որ հրեշտակը իջնում է որոշակի եղանակին ջրավազան և ալեկոծում էր ջուրը, այնուհետ, նա, ով առաջինը կմտնի այնտեղ ալեկոծությունից հետո, կատարյալ կառողջանա, ինչ ախտ էլ որ լինի: Եվ այնտեղ էին որոշակի մարդիկ, ուլքեր տկար էին երեսուն և ութ տարի»: (Հովհաննես 5:3,4,5 Արքա Ջեյմսի Տարբերակ)

Ըստ հայր Մաթթա Ալ Մասկիինի¹⁴ կարևոր ձեռագրերի մեծամասնության մեջ առկա չէ հետևյալ նախադասությունը, «սպասել ջրի շարժմանը»: Քանի որ հրեշտակները իջնում են որոշակի եղանակին ջրավազան և ալեկոծում են ջուրը, ով այնուհետ առաջինը ալեկոծությունից հետո մտնի, նրա ամբողջ ախտը կհեռանա: Ուստի, Ավետիսի Աստվածաշունչը և այլ տարբերակների խմբագիրները հեռացրել են դա: «Տկար մարդկանց մի ամբոխ պատկած էին սյունասարահում – կույր, կաղ և կաթվածահար: Այնտեղ կար մի տղամարդ, ով տկար էր երեսունութ տարի»: (Հովհաննես 5:3 և 5 – առանց համարի 4, Ավետիսի Աստվածաշունչ)

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՐՈՅԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Նոր Կտակարանի հեղինակներից ոչ մեկը, բացառությամբ Պողոսի, չի հայտարարել, որ նրանց ներշնչել են, սակայն նրանց աշխատանքները խոստովանություն են, որ դրանք հանդիսանում են մարդկային ջանքերի արդյունք, որոնք չպետք է համարել սուրբ գրքեր:

Իր գրքի մեջ Ղուկասը խոստովանում է, որ նա ոչ մի գաղափար չունի ներշնչանքի կամ որևէ այլ բանի մասին: Նա ասաց.

¹⁴ Հովհաննես Ավետարան Հայր Մաթթա Ալ Միսկիին հատոր 1 էջ.328

«Նկատի ունենալով, թե որքան են շատերը ձեռնարկել ինչ որ բաների պատմությունը, որոնք կատարվել են մեզանում, ինչպես նրանք, ովքեր ի սկզբանե ակնատեսներ են և բառի կառավարիչները նրանց տվել են մեզ, ինձ թվում է լավ է, հետևել անցյալի ամենին ավելի մոտիկից, ձեզ գրառել պատշաճ հաշիվ, ամենապատվելի Թեոֆիլոս, որ դուք համոզված լինեք այն բանին, ինչ ձեզ ուսուցանել են»: (Ղուկաս :1 :1-4)

Նրա ներածականը ցույց է տալիս, որ իր Ավետարանը անձնական նամակ է, որը նա գրառել է անձնական առումով, նա ճշգրտորեն կրկնօրինակել է որոշ հղումներից և շատ այլ նամակներ, որոնք վերաբերվում են այս խնդրին: Ղուկասը իր ներածականի մեջ չի նշել աստվածային ներշնչանքը, որը ներշնչել է նրան գրառել, ոչ էլ, որ Սուրբ Հոգին իջել է նրան, նա չի հայտարարել, ոչ էլ տեղյակ է եղել որ նրան ներշնչել են:

Սա չի վերաբերվում միայն Ղուկասին, այլև Նոր Կտակարանի բոլոր հեղինակներին: Նրանք չեն հայտնել իրենց ներշնչանքի մասին: Քահանա Դոկ. Մանիիս Աբդեն Նուրը ասաց. «Երբեք չեմ հանդիպել Նոր Կտակարանի հեղինակներից որևէ մեկի կարծիքին, որ նրա գրառումը Քրիստոսի մասին կդառնա Քրիստոնյաների սուրբ Գիրքը, որը դարեր շարունակ Քրիստոնյաները կընթերցեն ամբողջ աշխարհում»:¹⁵

Եթե աշակերտները և նրանց հետևորդները տեղյակ չէին և չէին հայտնում, որ նրանց ներշնչել են, ապա ինչպես են Քրիստոնյաները տեղեկացել այդ մասին: Ավետարանների մեջ առկա չէ ոչ մի Ավետարան, որը աջակցում է այդ հայտարարությանը, բացառությամբ, ինչ հայտնել է Պողոսը իր մասին:

¹⁵ - Կեղծ կասկածներ Աստվածաշնչի մասին, Քահանա Մանիիս Ա. Նուր էջ.42

ԱՆՁՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՊՎԱԾ ՉԵՆ ՈԳԵՇՆՉՄԱՆ ՀԵՏ

Ընթերցելով Պողոսի և աշակերտների նամակները, կարելի է տեսնել շատ հատվածներ, որոնք վկայում են, որ նամակները և թղթերը անձնական են և ոչ մի կապ չունեն ոգեշնչման հետ:

Հովհաննեսն ասաց. «Ձեր ընտրյալ քրոջ երեխաները ողջունում են ձեզ»: (Հովհաննես (2) 1/13) Նա շարունակեց ուղարկել ավելի շատ ողջույններ իր սիրելիներին: «Միրելի Գայուս, ում ես սիրում եմ իրականում: Միրելիս, ես աղոթում եմ, որ բոլորը լավ լինեն և որ դու լինես առողջ, քանի որ դա լավ է քո հոգու համար... Ես հույս ունեմ շուտով տեսնել քեզ և մենք դեմ առ դեմ գրույց կունենաք: Խաղաղություն քեզ: Ընկերները հղում են ողջունները քեզ: Ողջուններ ընկերներին, նրանցից յուրաքանչյուրին»: (Հովհաննես (3) 1-14)

Պողոսի նամակները ներառում են նույնը: «Ասիայի եկեղեցիները հղում են ձեզ ողջունները: Աքիլյան և Փրիսքան հղում են քեզ սրտանց ողջույններ... Բոլոր եղբայրները հղում են քեզ ողջույններ: Ողջունեք մեկը մյուսին սուրբ համբույրով»: (Կորնթացիներ (1) 16/19-20)

Պողոսը նամակի սկզբի հատվածի մեջ նույնպես գրառել է իր զգացմունքները իր ընկեր Թիմոթեոսին: Նա ասաց. «Ես մշտապես, գիշեր և ցերեկ հիշում եմ ձեզ իմ աղոթքներում: Ես հիշում եմ ձեր արցունքները, ես սպասում եմ տեսնել ձեզ, որպեսզի ի վիճակի լինեմ լցվել ուրախությամբ: Ես հիշում եմ ձեր անկեղծ հավատքը, հավատք, որը բնակվում էր սկզբում ձեր մեծ մոր Լուիսի և ձեր մոր Յունիսի մեջ և այժմ, ես համոզված եմ, բնակվում է նույնպես ձեր մեջ»: (Թիմոթեոս (2) 1/3-5)

Այնուհետ նա գրառում է իր անձնական կարիքներից մի քանիսը և խնդրում է Թիմոթեոսին ասել իր ընկերոջը Կորնթում: Նա

ասաց. «Վերադարձին ետ բերեք իմ վերարկուն, որը ես թողել եմ Կարպուսի մոտ, նույնպես գրքերը և վերը նշված բոլոր մագաղաթները: Ուղղեք իմ հարգանքները Ռիսկային և Աքիլային և Անիսի ֆիրուսի ընտանիքին: Ես լքել եմ Թրոֆիմուսին, երբ նա տկար էր: Վերադարձեք մինչ ձմեռ»: (Թիմոթեոս (2) 4/13-21) Պողոսի նամակը շարունակվում է միննույն կերպ ուղղելով ողջույններ և հարգանքներ իր ընկերներին և ազգականներին, որոնք երկար են, համարյա մեկ էջ: (Տես Հռոմեացիներ 16/1-21)

Տիտուսին նա նամակ է հղում ասելով. «Երբ ես ուղարկեցի քեզ մոտ Արթեմասին կամ Թիչիկուսին, փորձեք գալ ինձ մոտ Նիկոպոլիս, քանի որ ես որոշում եմ կայացնել ձմեռը այնտեղ անց կացնել: Փորձեք առաջ անցնել Զինաս փաստաբանին և Ապոդոսին իրենց ճանապարհին, համոզվեք, որ նրանք ոչնչի կարիք չունեն»: (Տիտուս 3/12-13) Ընթերցողը կարող է նկատել, որ Պողոսը – ում, ըստ նրանց, ներշնչել էին գրառել այս հատվածը, ովքեր հավատք են ընծայում նրա նամակների սրբությունը – տեղյակ չէին, թե իր ընկերներից ում է նա կարող կոչել Տիտուս դեպի Նիկոպոլիս, որտեղ նա պետք է անց կացնեք ձմեռը:

Նմանատիպ անձնական ողջունները բազմաթիվ են (Տես Կորնթացիներ (1) 16/20 Փիլիպ. (1)/21-24 և Փիլիպ. (2) /26-28, 4/21-22), արդյոք սա Ալլահի խոսքերն են, թե ոգեշնչանքը:

ՀԱՏՎԱԾՆԵՐ, ՈՐՈՆՅ ՈԳԵՇՆՉԱՆՔ ԼԻՆԵԼԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ

Երբ մենք ընթերցում ենք Ավետարանները, մենք ոչ մեկի մեջ չենք գտնում այն փաստը, որ հեղինակին ոգեշնչել են: Օրինակ Ղուկասը ասաց. «Հիսուսը, լինելով ենթադրյալ Հովսեփի որդին, սկսեց իր առաքելությունը, մոտ երեսուն տարեկան էր»: (Ղուկաս 3/23) նրա խոսքերը ենթադրաբար չեն կարող գալ մեկ մարդուց, ում ոգեշնչել էին, ով տեղյակ էր և համոզված էր իր գրառումների

մեջ: Այս խոսքերը անհանգստացնում էին Եկեղեցու գիտնականներին, այսպիսով նրանք հեռացրեցին դրանք Վերանայված Տիպական Տարբերակից:

Հովհաննեսը նույնպես տեղյակ չէր այն հեռավորությունից, որով աշակերտները թիավարում էին, մինչ Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) տեսնելը: Նա ասաց. «Երբ նրանք թիավարեցին երեք կամ չորս մղոն, նրանք տեսան Հիսուսին, ով քայլում էր ծովի վրա»: (Հովհաննես 6/19), եթե նրան ոգեշնչեին, նա տեղյակ կլիներ ճշգրիտ հեռավորության մասին:

Նույնպես, նա ասաց. «Նա այն աշակերտն է, ով վկայում է ամենը և ով գրառել է և մենք տեղյակ ենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է», նա ոչինչ չի ասում ոգեշնչման մասին և այնուհետ նա գրառում է այն, ինչը ապացուցում է, որ այս աշխատությունը մարդու աշխատանքն է: Նա ասաց. «Այսօր առկա են ևս շատ բաներ, որոնք գործել է Հիսուսը: Եթե գրառվեին դրանցից յուրաքանչյուրը, ես ենթադրում եմ, որ աշխարհը ինքնին չէր պարունակի գրքեր, որոնք կարելի էր գրառել»: (Հովհաննես 21/24-25) այս չափազանցությունը ակնհայտ է և մարդու ձեռքի աշխատանքը բերում է ընթերցողի ուշադրությունը:

Նամակների մեջ առկա են հատվածներ, որոնք իրենք խոստովանում են, որ հեղինակը խոսում է իրենից և իր կարծիքից և ոչ մի կապ չունի ոգեշնչման հետ: Տալով իր կարծիքը այդ մարդու մասին, ով կնության էր առել անհավատ կնոջը, Պողոսը ասաց. «Մնացածին ես ասում եմ, Ես ոչ թե Տերը»: (Կորնթացիներ (1) 7/12) Այս խնդրի հետ կապված նրա կարծիքը ոչ մի կապ չունի ոգեշնչման հետ, սակայն Քրիստոնյաները այն համարում են Ամենաբարձրյալ Ալլահի խոսքի մի մասը: Ինչ վերաբերվում է նշանված կնոջը նա ասաց. «Ինչ վերաբերվում է նշանվածին, ես ոչ մի պատվիրան չունեմ Տիրոջից, սակայն ես տալիս եմ իմ դատաստանը»: (Կորնթացիներ (1) 7/25) արդյո՞ք

մենք պետք է հավատք ընծայենք Պողոսին իր խոստովանությամբ, թե Քրիստոնյաներին, ովքեր ասում են որ սա Ամենաբարձրյալ Ալլահի խոսքերն են:

Պողոսը կրկին նշում է, որ այն ինչ նա ասում է, նրա անկեղծ մարդկային կարծիքն է: Նա ասաց. «Ես սա ասում եմ ոչ թե որպես պատվիրան, այլ մյուսների անկեղծության ապացույց ... Եվ այս խնդրի շուրջ ես տալիս եմ իմ դատաստանը»: (Կորնթացիներ (2) 8/8-10)

Նա նույնպես հայտնեց, որ այս խոսքերը սուրբ են հանդիսանում: Նա ասաց. «Այն, ինչ ես ասում եմ այսպիսի պարծենկոտ համոզվածությամբ, ես չեմ ասում Տիրոջ անունից, այլ որպես հիմար»: (Կորնթացիներ (2) 11/16-17) և փորձելով բարի լինել իր հանդիսատեսի նկատմամբ, նա ասաց. «Ես ցանկություն ունեմ, որ դուք հանդուրժեք իմ փոքրիկ հիմարությունը»: (Կորնթացիներ (2) 11/1) Արդյո՞ք նրան ոգեշնչել էին իրեն հիմար կոչել, թե Ամենաբարձրյալ Ալլահը ներողություն է խնդրում և վախենում է, որ նրա ոգեշնչումը բավական ծանր է նրանց համար, ովքեր ընթերցում են դա:

ԿԱՐՆՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՈԳԵՇՆՉՎԱԾ ՀԵՂԻՆԱԿԸ ՉՊԵՏՔ Է ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ՏՄ

Ինչը հերքում է հեղինակների ոգեշնչման պնդումը, այն է, որ նրանցից ոմանք չեն նշում կարևոր իրադարձություններ, նույնիսկ անկախ փաստի, որ նրանք նշել են շատ ոչ կարևոր իրադարձություններ:

Չորս ավետարանականները նշում են այն իրադարձությունը, երբ Հիսուսը հեծնել է և ավանակ և ջորի, սակայն նրանցից միայն մեկը, Հովհաննեսը նշում է Հիսուսի առաջին հրաշքը, որտեղ նա ջուրը փոխում է գինու (տես Հովհաննես 2/1-11) արդյո՞ք երկու կենդանի հեծնելը ավելի կարևոր է, քան հրաշքը:

Հովհաննեսը միակ ավետարանական է, ով նշել է Լազարիուսի հարության հրաշքը: Արդյո՞ք երկու կենդանի հեծնելը ավելի կարևոր է, քան Լազարիուսի հարությունը հսկայական ամբոխի առջև, այդ ամենից հետո ո՞վ էր կարող հավատք ընծայել Հիսուսին: (Տես. Հովհաննես 11/1-46)

Ավելին, Երուսաղեմի մուտքը երկու կենդանիներով, ամեն դեպքում, կարևոր չէ, քան Հիսուսի քարոզը ժողովուրդներին և մարդկանց մկրտությունը Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունից: Այս եզակի և կարևոր հատվածը հանդիսանում է Քրիստոնյաների կայմակալը, որպեսզի ապացուցի Երրորդությունը, ամեն դեպքում միայն Մատթեոսն է նշել դա: (Տես Մատթեոս 19/28)

Հիսուսի համբարձումը կարևոր իրադարձություն է: Ամեն դեպքում, երկու աշակերտները Մատթեոսը և Հովհաննեսը, ովքեր ենթադրաբար ներկա էին այդ ժամանակ և ականատես էին դրան, չեն նշում դա: Մարկոսը և Ղուկասը, ովքեր այդ օրը բացակա էին, ոգեշնչվել էին նշել այդ իրադարձությունը:

ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԺԽՏՈՂԱԿԱՆ ԴԻՐՔԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՈԳԵՇՆՉՈՒԹՅԱՆԸ

Վերոհիշյալ և այլ հատվածները ստիպում են գիտնականներին և հետազոտողներին ժխտել, որ Նոր Կտակարանի հեղինակները ստացել են ոգեշնչություն: Էկումենիկ Թարգմանության հեղինակները ասում են. «Ավետարանականները հավաքագրել և գրառել են ըստ իրենց կարծիքի այն, ինչ ստացել են բանավոր ավանդույթից»: Այսպիսով, գոյություն չունի ոչ մի ոգեշնչում:

Ինչ վերաբերում է Ջեյմսի Նամակին, Լյութերը, Բողոքական Քրիստոնեական աղանդի հիմնադիրը ասաց. «Այն հանդիսանում է չնչին, նույնիսկ եթե Ջեյմսից է: Աշակերտները ոչ մի լիազորություն չունեն իրենցից ներկայացնել որևէ կրոնական

դրույթ, սա միայն Հիսուսի դիրքն է»: Լյութերի խոսքերից մենք ընկալում ենք, որ նա Ջեյմսին չի համարում ոգեշնչված:

Իր հանրագիտարանի մեջ Ռիիարը ասում է. «Միքայելը համարում է, որ այն գրքերը, որոնք գրառել են աշակերտ հետևորդները Մարկոսը, Ղուկասը և Գործքը, ոգեշնչանք չեն»:

Նշելով մի կարևոր և ճշմարիտ փաստ կապված Պողոսի հետ, Հաբիիբ Սաիդը ասաց. «Երբ Պողոսը գրառեց իր նամակները, նա տեղյակ չէր, կամ կարծում էր, որ իր խոսքերը արժեք չեն ներկայացնի հետագա սերունդների համար»: Ջարմանալիորեն ինքը Պողոսը, տեղյակ չէր իր խոսքերի սրբությանը, սակայն Քրիստոնյաները պնդում էին դա:

Վատիկանում, Հովհաննես Պապը ձևավորեց մի խորհուրդ, որը ղեկավարում էր գիտնական Հանս Քոմբը, ով մանրակրկիտ ուսումնասիրեց Ավետարանները, որից հետո խորհուրդը եզրակացրեց. «Ավետարանները հանդիսանում են մարդու խոսքերը և առկա չէ որևէ ապացույց, որ դրանք եկել են անմիջապես Աստծուց»:¹⁶

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՐԳԱՐԵ ԼԻՆԵԼՈՒ ԺԽՏՈՂԱԿԱՆ ԴԻՐՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին հերթին Մահմեդականները աշակերտներին չեն համարում մարգարեներ: Ավելին, նրանցից ոչ մեկը չի հայտարարել դա, բացառությամբ Պողոսի: Ոչ էլ մահմեդականները հավատք են ընծայում վկայություններին, որոնք Քրիստոնյաներին ստիպել են հայտնել այդ հեղինակների մարգարեությունը:

¹⁶Ճշմարտությունը Հայտնվել է, Ռահմաթուլլահ Ալ-Հինդի հատոր 2 էջ.356-379 Երկու բանավեճ, որոնք տեղի ունեցան Ստոկհոլմում, Ահմեդ Դիդաթ էջ.27

Մահմեդականները հավատք չեն ընծայում, որ Հիսուսի համբարձումից հիսուն օր անց Սուրբ Հոգին իջավ աշակերտներին, այդ տարօրինակ իրադարձություն է, որը նշում է Ղուկասը: Նա ասաց. «Եվ նրանք բոլորը Երկրի Սուրբ Հոգով և սկսեցին խոսել այլ լեզուներով, ինչպես Հոգին էր տալիս նրանց»: (Գործք 2/4) Ավելին Պողոսը և Ղուկասը այդ օրը դեռ հավատացյալներ չէին:

Մահմեդականները նույնպես հավատք չեն ընծայում այն հրաշքներին, որոնք Նոր Կտակարանը վերագրում է աշակերտներին, քանի որ դրանք ոչ մի ապացույց չունեն: Նոր Կտակարանի ուսումնասիրությունները և փնտրտուքները ապացույց են, որ այդ աշակերտները մարգարեներ չէին: Նրանք բոլորի նման մարդ էին, բացառությամբ նրա, որ գտնվում էին Հիսուսի կողքին և նա խնդրում էր նրանց իրենից հետո քարոզել իր ուղերձը:

ԱՌԱՋԻՆ, ԱՐԴՅՈ՞Ք ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ ԷՆ

Ավետարանները և Նամակները լի են հատվածներով, որոնք չեզոքացնում են այս հայտարարությունը: Այս հեղինակների մարգարեությունը կարելի է նժարի վրա դնել, որ Հիսուսի աշակերտները վերցրել են իրենց տիրոջից: Հովհաննեսի Առաջին Նամակի մեջ մենք ընթերցում ենք. «Միրելիներ, հավատք մի ընծայեք յուրաքանչյուր հոգուն, սակայն փորձեք հոգիները տեսնելու, թե արդյոք նրանք Աստծուց են, քանի որ շատ կեղծ մարգարեներ դուրս են եկել աշխարհ»: (Հովհաննես (1) 4/1)

Ինչպե՞ս են կարող Քրիստոնյաները Պողոսին կամ աշակերտներին համարել անսխալական և վստահելի ոգեշնչմանը և մարգարեությանը, մինչ դավաճան Հուդան նրանց մեջ էր: Հուդան հանդիսանում էր Հիսուսի տասներկու

աշակերտներից մեկը, մարգարեները և առաքյալները նման կերպ չեն դավաճանում:

Մարգարեները և առաքյալները չեն գործում այնպես, ինչպես Պետրոսը, երբ նա երեք անգամ հրաժարվեց Հիսուսից գրավման գիշերը, որը շատ ծանր գիշեր էր: (Տես Ղուկաս 22/34)

Մեջ բերելով Հիսուսին, Ղուկասը ասաց. "սակայն նա, ով ժխտում է ինձ մարդկանց առջև, կենթարկվի ժխտման Աստծո հրեշտակների առջև»: (Ղուկաս 12/9), այս ժխտումը ստիպեց Քահանա Իբրահիմ Սաիիդին նկարագրել Պետրոսին ինչպես «նիհարը անհավատարմության ծովի մեջ»¹⁷ և նրա ընկերակցությունը Հիսուսի հետ միջնորդ չի հանդիսանում:

Ինչպե՞ս է կարող անհատը, ով լի է Սուրբ Հոգով, ժխտել Հիսուսին և ինչպե՞ս ենք մենք կարող համարել մի մարդու, ում Հիսուսը կոչել է «Մատանա» մարգարե: «Սակայն նա շրջվեց և ասաց Պետրոսին», Անցիր ետ, Մատանա: Դու խոչընդոտ ես ինձ: Քանի որ դուք մտածում եք, ոչ թե Աստծո գործերի, այլ մարդկայինի մասին»: (Մատթեոս 16/23)

Ավետարանների հատվածները ստիպում են մեզ կասկածի տակ առնել Հիսուսի ամենամոտ աշակերտների հավատքը, որը նրանց արժանի է դարձրել քարոզելու իր ուսմունքները, սակայն երբեք ընդդեմ մարգարեության: Ըստ Մատթեոսի, Հիսուսն ասաց Պետրոսին, «Օվ դու, ով տկար է հավատքի մեջ, ինչու՞ ես դու կասկածում»: (Մատթեոս 14/31) սա ստիպեց Սուրբ Էքսստեյնին նկարագրել Պետրոսին ասելով. «Նա անհաստատուն էր, որովհետև նա երբեմն հավատ էր ընծայում, և երբեմն կասկածում»:¹⁸

¹⁷ «Բացատրելով Ղուկասի Ավետարանը» Իբրահիմ Սաիիդ էջ.580

¹⁸ «Հայտնված Ճշմարտությունը» Ռահմաթուլլահ Ալ Հինդի հատոր 1, էջ.234

Եթե այս խոսքերը վերաբերվում են Պետրոսին, ապա արդյո՞ք մյուս աշակերտները ավելի լավ էին: Շատ հաստիքների մեջ Նոր Կտակարանը մեզ ասում է, որ նրանք նույնպես տկար էին հավատքի մեջ: Հիսուսը նրանց նկարագրեց շատ անգամներ: Մատթեոսն ասաց. «Եվ նրանք գնացին և արթնացրին նրան ասելով, «Փրկեք մեզ, Տեր; մենք անհայտանում ենք»: Եվ, նա ասաց նրանց, «Ինչու՞ եք դուք վախենում, օվ դուք հավատքի մեջ տկարներ»: (Մատթեոս 8/25-26) և նա նույնպես ասաց, «Սակայն Հիսուսը տեղյակ լինելով ասաց. «Օվ դուք տկարներ հավատքի մեջ, ինչու՞ եք դուք ձեր մեջ քննարկում փաստը, որ դուք հաց չունեք»: (Մատթեոս 16/8)

Ղուկասն ասաց. «Սակայն, եթե Աստված այսպես է հազցնում խոտը, որը այժմ կենդանի է դաշտի մեջ և հաջորդ օրը շարտում են վառարանի մեջ, որքան շատ է նա հազցնում ձեզ, օվ հավատքի մեջ տկարներ»: (Ղուկաս 12/28)

(Տես նույնպես Մարկոս 4/40 Մատթեոս 6/30), արդյո՞ք մենք պետք է հավատք ընծայենք նմանատիպ մարդկանց պատմություններին, առանց հաշվի առնելու նրանց ոգեշնչանքը:

Այս օրինակներից ամենահզորը այն է, երբ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) նկարագրեց նրանց, երբ նրանք բոլորովին հավատք չունեին: Մատթեոսն ասաց. «Ինչու՞ մենք չենք կարող այն դուրս գցել: Նա ասաց նրանց», Ձեր տկար հավատքի պատճառով: Քանի որ իրապես, ես ասում եմ ձեզ, եթե դուք ունեք մանանեխի չափով հավատք, դուք կարող եք ասել այս լեռանը «շարժվիր այստեղից այնտեղ» և այն կշարժվի և ոչ մի անհնար բան չի լինի ձեզ համար»: (Մատթեոս 17/19-20) արդյո՞ք նրանք, ովքեր չունեն մանանեխի չափ հավատք մարգարեներ են կամ արժանի են Ամենաբարձրյալ Ալլահի գրերի ոգեշնչմանը:

ԵՐԿՐՈՐԴ . ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ ԶԵՆ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ, ՈՐ ՆՐԱՆՔ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԵՆ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Եթե, ի շնորհիվ հրաշքների Քրիստոնյաները աշակերտներին համարում են առաքյալներ կամ մարգարեներ, ապա դա այդպես չէ: Մուրբ հատվածը մեզ ասում է, որ նույնիսկ կեղծ մարգարեները կարող են ներկայացնել հրաշքներ և նշաններ: Հիսուսն ասում է. «Քանի որ կեղծ հիսուսներ և կեղծ մարգարեներ կբարձրանան և կներկայացնեն մեծ նշաններ և հրաշքներ, որպեսզի շեղեն, եթե հնարավոր է, նույնիսկ նորընտիրը: Տեսեք, ես ասում եմ ձեզ նախօրոք»: (Մատթեոս 24/24-25)

Ավելին, Նոր Կտակարանը չի նշում Մարկոսի կամ Ղուկասի որևէ հրաշք:

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) զգուշացնում է այդ կեղծ մարգարեներից և ասում, որ նրանք պետք է հավատք ընծայեն իր ուղերձին: Նա ասաց. «Այդ օրը շատերը կասեն ինձ. «Տեր, Տեր, արդյո՞ք մենք չենք մարգարեացել քո անունից և դուրս մղել սատանաներին քո անունից և շատ հրաշքներ ենք գործել քո անունից»: Եվ այնուհետ ես նրանց կհայտարարեմ, «Ես երբեք չեմ ճանաչել ձեզ, հեռացեք ինձանից, դուք անօրինականության գործիչներ»: Զգուշացեք կեղծ մարգարեներից, ովքեր գալիս են ձեզ մոտ գառան հագուստով... Դուք կճանաչեք նրանց իրենց պտուղներով»: (Մատթեոս 7/5-23)

Ամեն դեպքում հրաշքները չեն հանդիսանում ավելի ամուր հավատքի ապացույց: Ըստ Ավետարանի, յուրաքանչյուր հավատացյալ ի վիճակի է հրաշք ներկայացնել: Մեջ բերելով Հիսուսին, Մատթեոսը ասում է. «Նա ասաց նրանց. «Ի շնորհիվ ձեր տկար հավատքի: Քանի որ իրապես, ես ասում եմ ձեզ, եթե դուք ունեք մանանեխի չափով հավատք, դուք կարող եք ասել այս լեռանը, «Շարժվիր այստեղից այնտեղ» և այն կշարժվի և անհնար ոչինչ չի լինի ձեզ համար»: (Մատթեոս 17/20)

Մեկնաբանելով այս հատվածը Ջեյսուֆ Փրիսթհուդը ասում է. «Հավատացյալը ի վիճակի է շարժել լեռը, ինչպես Աստվածը»:

Հիսուսը նույնպես ասաց. «Իրոք, իրոք ես ասում եմ ձեզ, ով հավատք է ընծայում նա պետք է նույնպես անի այն, ինչ ես եմ անում և ավելի լավ գործեր, քան այն ինչ նա է գործում»:
(Հովհաննես 14/12)

Ըստ այդմ, յուրաքանչյուր Քրիստոնյա ի վիճակի է ներկայացնել Հիսուսի հրաշքները, ներառելով տկարի բժշկությունը, հարությունը և ավելի մեծ հրաշքներ: Ի շնորհիվ այս հատվածի քրիստոնյա գիտնականները շփոթմունքի մեջ են, քանի որ անհարմար է ասել, որ աշակերտները և հավատացյալները կարող են ներկայացնել ավելի մեծ հրաշքներ, քան Քրիստոսը: Ամեն դեպքում, նրանք ասում են. «Տերը, Քրիստոսը, չի ասել, որ իր աշակերտները կարող են ներկայացնել ավելի մեծ հրաշքներ, քան ինքը, և հարություն տալը առավելագույնն է, որը մենք ի վիճակի ենք անել»:¹⁹

Ամենը, ինչ նրանք ի վիճակի են, հանգուցյալի հարությունն է:

ԵՐՐՈՐԴ, ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ – ԸՍՏ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ- ՈՐԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ՔԱՐՈՋԻ ԱՆՍԽԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Քրիստոնեական հավատքի, համարել, որ աշակերտները մարգարեներ էին, չի նշանակում, որ նրանք անսխալական են խոսելու և նույնիսկ ստելու ունակությունից: Թագավորաց Ա մեջ մենք ընթերցում ենք. «Այժմ այնտեղ, բնակվում է ձեր մարգարե Բեթելում; և նրա որդիներից մեկը եկավ և ասաց նրան բոլոր գործերը, որ Աստծո մարդը գործել է այդ օրը Բեթելում... Եվ նա հետևեց Աստծո մարդուն և գտավ նրան նստած կաղնու ծառի

¹⁹ Մուրթ Աստվածաշնչի Կիրառական մեկնաբանություն, Մի քանի աստվածաբաններ, էջ.2222

տակ: Եվ նա ասաց նրան. «Արդյո՞ք դուք Աստծո մարդն եք, ով եկել է Հուդայից»: Եվ նա ասաց. «Ես եմ: Այնուհետ նա, Մարգարեն, ասաց նրան, «Տուն արի ինձ հետ և կիսիր հացը»: Եվ նա ասաց. «Ես չեմ վերադառնա քեզ հետ, կամ գա քեզ հետ, ոչ էլ ես հաց կկիսեմ, ոչ էլ ջուր կխամեմ քեզ հետ այս վայրում. Քանի որ ինձ ասել է Տիրոջ խոսքը, «Դու չպետք է հաց կիսես, ոչ էլ ջուր խամես այնտեղ, ոչ էլ վերադառնաս նույն ճանապարհով»: Եվ նա ասաց նրան, «Ես նույնպես մարգարե եմ քեզ պես և հրեշտակը խոսեց ինձ հետ Տիրոջ խոսքով, ասելով. «Ետ բեր նրան քեզ հետ քո տուն, որ նա ի վիճակի լինի հաց կիսել և ջուր խմել: Նա ստեց նրան: Այսպիսով նա վերադարձավ նրա հետ և նրա տանը կիսեց հացը և խմեց ջուր»:(Թագավորաց Ա 13/11-19) Այնուհետ գլուխը շարունակում է նշել այդ աղքատ մարգարեի պատիժը, ով ենթարկվեց կեղծ մարգարեին, հավատք ընծայելով, որ նա ասում է նրան Աստծո պատվիրանները և ոգեշնչանքը:

Մեկ այլ օրինակ է Թագավորաց Բ: Երբ Բեն Հադադը, Ասորեստանի արքան Հազաելին ուղարկեց Մարգարե Եղային, խնդրելով նրան իր տկարության համար, Մարգարեն Եղիան, (թող նա հեռու լինի ամեն ստից) ասաց իր պատասխանի մեջ: Նա ասաց. «Գնացեք ասեք նրան.«Դու անշուշտ կապաքինվես» սակայն Տերը ինձ ցույց տվեց, որ նա անշուշտ կկնքի մահկանացուն»: (Թագավորաց Բ 8/10)

Ճշմարիտ Ուղղորդության մեր նախորդ դրվագի և շարքի մեջ մենք քննարկել ենք շատ ամոթալի արարքներ, որոնք Թորան վերագրել է մարգարեներին, որոնք մեզ ստիպում են հավատք չընծայել, որ Քրիստոնյաները հավատում են այդ մարգարեների սխալականությանը, այստեղ կարելի է դեռ մի կողմ դնել աշակերտներին:

ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ և ԹՂԹԵՐԻ ՄԵՋ ՆՇՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԶՐՈՑԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Նոր Կտակարանի քսանյոթ գրքերը պատկանում են ութ հեղինակներին, յուրաքանչյուրը գրառել է որոշակի հատված: Մինչ Հուդայի նամակը երկու էջ է, Պողոսին վերաբերվող գրառումները ավելի քան 100 էջ են:

Ավելին, Հիսուսի և այս հեղինակների միջև եղած հարաբերությունները տարբեր են: Մինչ Հովհաննեսը, Պետրոսը, Հուդան և Հակոբը տասներկու աշակերտներից էին, Ղուկասը և Մարկոսը չեն հանդիպել նրան և Պողոսը Քրիստոնեություն է ընդունել Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) համբարձումից հետո:

Քրիստոնյաները այս ութ հեղինակներին համարում են ոգեշնչված մարդ արարածներ և որ նրանք գրառել են այն, ինչ թելադրել էր Սուրբ Հոգին, յուրաքանչյուրը իր իսկ ոճով: Մենք ապացուցել ենք, որ Նոր Կտակարանի հեղինակներին չեն ոգեշնչել գրառումները:

Ամեն դեպքում ճիշտ է վերագրել Նոր Կտակարանի գրքերը այս ութ հեղինակներին, առանձնապես Մատթեոսին, Հովհաննեսին և Պետրոսին, ովքեր համարվում են Հիսուսի յուրօրինակ աշակերտները, կամ արդյո՞ք այն նույնպես կեղծիք է: Հնարավոր է արդյո՞ք որ խոսքերը, որոնք առկա են Նոր Կտակարանի մեջ, եկել են Հիսուսի աշակերտներից, որոնց նա դաստիարակել է իր առաքելության տարիների ընթացքում և ում գովերգում է Ղուրանը:

Նոր Կտակարանի մանրակրկիտ ուսումնասիրությունը գիտնականներին ստիպում է կասկածի տակ առնել, որ Հիսուսի աշակերտները, հավատացյալներն են և գրառել են այս գրքերը: Ուստի, նրանք ուշադիր ուսումնասիրեցին նրանց առնչությունը այս գրքերին:

Մենք չենք դիտարկի որոշ գրքերի վավերականությունը, որովհետև նրանք, ովքեր գրառել են, չեն հանդիսացել Հիսուսի

աշակերտները: Ըստ այդմ, կարևոր չէ, թե արդյոք Մարկոսը և Ղուկասն են գրառել նրանց վերաբերվող գրքերը, թե այլ Քրիստոնյաներ, ովքեր ապրել են առաջին դարի վերջին: Նրանցից ոչ մեկը անսխալական, ոգեշնչված չէր, կամ ուներ Հիսուսի գովասանքը կամ խորհուրդը: Նույնը վերաբերում է Հիսուսի թշնամի Պողոսի նամակին, ով հայտնեց իր մարգարե և անսխալական լինելը, նույնիսկ անկախ այն փաստի, որ նա երբեք չի հանդիպել Հիսուսին:

ԱՌԱՋԻՆ. ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Այն հանդիսանում է Նոր Կտակարանի առաջին գիրքը: Բաղկացած է քսանութ գլուխներից, որոնք պատմում են Հիսուսի կյանքի և ուսմունքների մասին սկսած ծնված օրից, մինչ համբարձումը:

Եկեղեցին այս գիրքը վերագրում է Մատթեոսին, տասներկու աշակերտներից մեկին, ում ընտրել էր Հիսուսը: Եկեղեցին հայտնեց, որ այս գիրքը Մատթեոսը գրառեց Սուրբ Հոգու ոգեշնչությամբ: Հավանական է, որ Մատթեոսի գրքի հղումները ուղղված են Պաղեսիսի ժողովրդին, ովքեր Հրեաներ էին, և ոչ թե Քրիստոնյաներ: Հղումները տարբերվում են իրենց ամսաթվերով, սակայն նրանք համամիտ են, որ գրառումները տեղի են ունեցել 37-100 Մ.Թ տարիների ժամանակահատվածում:

Մատթեոսի Ավետարանի ներածության մեջ վանական տարբերակը ասում է. «Շատ հեղինակներ այս գիրքը թվագրում են 80-90 թվականներին, կամ միգուցե մի փոքր ավելի վաղ ժամանակաշրջանի, սակայն մենք չենք կարող համոզված լինել»:

Ֆենթոնը, Մատթեոսի Ավետարանի մեկնաբանը (էջ.11) համարում է, որ «Այն գրառել են 85 և 105 Մ.Թ ժամանակահատվածում», որը մոտ է Պրոֆեսոր Հարինգի գնահատականին, երբ նա ասաց. «Մատթեոսի գիրքը գրառվել է

80 - 100 Մ.Թ. ժամանակահատվածում»:²⁰ Ինչ վերաբերում է գրքի լեզվին, բոլոր գիտնականները համամիտ են, որ այն Եբրայերեն է, մինչ դեռ ոմանք կարծում են, որ այն ասորերեն կամ հունարեն է:

Ամենակարևոր պատմական վկայությունը կապված այս Ավտարանի հետ, Պապիաս Հիերափոլիսի վկայությունն է (155 թ.) Այն Ասում է. «Մատթեոսը գրառել է Եբրայերեն և այնուհետ, նրա յուրաքանչյուր թարգմանիչ ուժերի ներածի չափով Հունարեն»: Իր «Հերետիկության դեմ» գրքի մեջ Իրենաուս Լյոնեսիին (200 թվ.) ասաց. «Մատթեոսը գրառել է Հրեաների համար իրենց իսկ լեզվով»:²¹

Գոյություն ունեցող Ավետարանական ձեռագրերը բոլորը Հունարեն են, ուստի, գիտնականները զարմանում են, թե ով է հանդիսանում Եբրայերենից Հունարեն թարգմանության հեղինակը: Այս առումով գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ, սակայն նրանք բոլորովին չունեն աջակցող ապացույցներ: Մեկնաբանելով դա, Հայր Մաթթա Ալ Մասկիինը ասաց, որ դրանք «ենթադրություններ են առանց վկայության»: Մյուսները ասում են, որ թարգմանիչը ինքը Մատթեոսն էր, Հովհաննես ավետարանիչը և այլոք:

Փաստը այն է, ինչ ասել է Մուրբ Ջերոմը (420 Մ.Թ): Նա ասաց. «Մատթեոսի գրքի Եբրայերենից Հունարենի թարգմանիչը անհայտ է»: Ավելի հավանական է, որ այն ունի ավելի քան մեկ թարգմանիչ, ինչպես ասել է Պապիասը:

²⁰ «Թորան, Ավետարանը, Ղուրանը և Գիտությունը» Մորիս Բուքեյլ էջ.8-12: Եկեղեցու Պատմությունը, Յուսաբիուս, էջ.146. «Քրիստոսը Քրիստոնյաների Համոզմունքի Աղբյուրներում» Ահմեդ Աբդուլ Ուահաբ, էջ.59

²¹ Եկեղեցու Պատմությունը, Թասբիուս էջ.146-214

Նորթոնը, ով հայտնի է որպես «Ավետարանի պահապան», ասաց այս անհայտ թարգմանիչի մասին «Նա, ով թարգմանել է Մատթեոսի գիրքը այն մարդն է, ով գիշերը փայտ էր հավաքում, ով չէր տարբերակում թաց և չոր փայտը: Նա թարգմանեց ճիշտը և սխալը»:²²

ՄԱՏԹԵՈՍԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԸ

Ո՞վ էր Մատթեոսը: Ո՞րն է նրա կապը աստվածաշնչի հետ, որը նրան են վերագրում: Արդյո՞ք այդ Աստվածաշունչը բաղկացած է Աստծո խոսքից և ոգեշնչանքից:

Պատասխանելով այն հարցին, թե ինչ մենք գիտենք Մատթեոսի մասին, այն է, ինչ մեզ ասել են Քրիստոնյա գիտնականները: Նա հանդիսանում էր տասներկու աշակերտներից մեկը, Նահուն գյուղի հարկահավաքը որից հետո նա հետևում է Հիսուսին:

Պատմական աղբյուրները նշում են, որ Մատթեոսը գնաց Աբիսինիա և նրան այնտեղ սպանեցին (70 Մ.Թ). Նոր Կտակարանը նրան հիշատակում է միայն երկու անգամ: Առաջին դեպքում, երբ Հիսուսը կոչեց նրան աշխատանքային վայրում (տես Մատթեոս 9/9) և երկրորդ դեպքում նրան հիշատակել են տասներկու աշակերտների անունների հետ: (տես Մատթեոս 10/3, Ղուկաս 6/15)

Մենք պետք է այստեղ նշենք, որ Մարկոսը և Ղուկասը ասացին, որ հարկահավաքը, ով հանդիպեց Հիսուսին հարկային խցիկում, Ալփեոսի որդի Լեվին էր: (Տես Մարկոս 2/14 և Ղուկաս 5/27), նրանք չեն նշում Մատթեոսին: Ամեն դեպքում, եկեղեցին անապացույց հայտնում է, որ Ալփեոսի որդի Լեվին հանդիսանում է հարկահավաք Մատթեոսի անունը:

²² «Հայտնված Ճշմարտությունը» Ալ Հինդի հատոր 2 էջ.523-533
Մատթեոսի Ավետարանը, Մաթթա Ալ Մասկիին էջ.29

Ջոն Ֆենթոնը, Մատթեոսի գրքի մեկնաբանը և Լինչֆիլդ Աստվածաբանական բաժանմունքի Դեկանը ասաց, որ գոյություն չունի որևէ վկայություն, որ Մատթեոսը հանդիսանում է Լեվի անվան Քրիստոնեական անվանումը: Նա հավատում է, որ ավելի հավանական է, որ «կապ գոյություն ունեք Մատթեոսի, աշակերտի և եկեղեցու միջև, որի պատճառով նա գրառել է Ավետարանը: Ուստի, այս ավետարանի հեղինակը վերագրում է իր աշխատանքը տվյալ եկեղեցու հիմնադրին կամ ուսուցչին, ում անունը Մատթեոս էր: Հավանական է, որ Ավետարանի հեղինակը ստանձնել է Մարկոսի տրված հնարավորությունը, երբ նա խոսում էր իր աշակերտներից մեկի մասին և նա կապում է այդ Մատթեոսի հետ, քանի որ նա հանդիսանում էր եկեղեցու ուսուցիչը, որին նա հետևում էր»:²³

ԵԿԵՂԵՑՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՎԵՐԱԳՐԵԼ ԵՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՆ

Հիմնվելով որոշ հարցերին, եկեղեցին պնդում է, որ Մատթեոսը հանդիսանում է Ավետարանի հեղինակը:

Առաջին, «Գոյություն ունեն նշաններ և պարզ վկայություն, որ հեղինակը հանդիսանում էր մի Հրեա, ով ընդունեց Քրիստոնեությունը»:

Երկրորդ. «Անիմաստ է, որ նմանատիպ կարևոր ավետարանը-ավետարաններից առաջինը- կարելի է վերագրել անհայտ մեկին, այլ ոչ թե Հիսուսի աշակերտին»:

Երրորդ, Պապիաքը նշեց, որ «Երկրորդ դարում Մատթեոսը հավաքագրեց Հիսուսի խոսքերը»:

²³ Քրիստոսը Քրիստոնեական Դավանանքի Աղբյուրների մեջ, Ահմեդ Աբդուլ Ուսահաբ էջ.58

Վերջապես. «Անվիճելի է, որ հաշվապահները պետք է պահպանեն բոլոր ֆայլերը, որովհետև այն հանդիսանում է ամենակարևոր պարտականությունը ենթարկվելու հաշիվներին, որպես այդպիսին, ավետարանականները ճշգրտորեն պահեցին Հիսուսի բոլոր խոսքերը»:²⁴

ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՆՇՈՒՄՆԵՐԸ

Աչքի անց կացնելով նախորդ Քրիստոնեական վկայությունը, գիտնականները հավատք են ընծայում, որ Քրիստոնյաները չունեն ոչ մի հստակ վկայություն, այս ավետարանը Մատթեոսին վերագրելու համար: Կարևոր չէ, որ հաշվապահը գրառի իր կրոնական նշումները այնպես, ինչպես իր աշխատությունը: Ի լրացում, Հիսուսի խոսքերի, Մատթեոսի գրառումները չեն աջակցում այսօր ավետարանի վրագրմանը: Շատ վկայություններ ցույց են տալիս, որ այս ավետարանի հեղինակը չի հանդիսանում Հիսուսի աշակերտներից մեկը, ինչպես նշում են ավետարանի շատ հատվածներում, որ հեղինակը աշակերտ Մատթեոսը չէ:

- Մատթեոսը հիմնվել էր Մարկոսի ավետարանի վրա, քանի որ նա կրկնօրինակեց նույն ավետարանի 612 հատվածներից 600 -ը: Ինչպես նաև նա հիմնվել է այլ փաստաթղթերի վրա, որոնք գիտնականները կոչում են M, (Մ):

Մատթեոսի Ավետարանի իր ներածության մեջ, Անգլիկան եկեղեցու աստվածաբանության պրոֆեսոր Ջ.Բ Ֆիլիփսը ասում է. «Սուրբ Մատթեոսը մեջ է բերել Սուրբ Մարկոսի ավետարանից և նա վերանայել է դա, փորձելով հասնել Աստծո ավելի լավ պատկերի»:

²⁴ Սուրբ Աստվածաշնչի Բառարան էջ.832

Իր «Ավետարանի Ներածություն» գրքի մեջ Պաստոր Ֆահիիմ Ազիզն ասաց, որ Մատթեոսի կողմից Մարկոսի ավետարանի որդեգրությունը հայտնի է բոլոր նրանց, ովքեր ուսումնասիրել են աստվածաշունչը: Եթե Մատթեոսը, աշակերտը հանդիսանար ավետարանի հեղինակը, ինչու նա պետք է կրկնօրինակեր Մարկոսից, ով Հիսուսի ժամանակ տաս տարեկան էր: Ինչու՞ պետք է տասներկու աշակերտներից մեկը կրկնօրինակեր նրանից: Արդյո՞ք նա, ով ականատես էր իրադարձություններին, կարիք ուներ կրկնօրինակել որևէ մեկին, ով չէր տեսել այն:²⁵

- Մատթեոսի ավետարանը երկու անգամ նշել է հարկահավաք Մատթեոսի մասին և ոչ մի կերպ դուրս չի նշում, այն, որ նա է հեղինակը: Հեղինակը իր անունը նշել է, որպես տասներկու աշակերտներից մեկը, նա իրեն չի դրել առաջին կամ վերջին տեղում: Այնուհետ, երբ նա իր մասին խոսում է հետևելով Հիսուսին, նա նշում է անունը երրորդ անձով: Նա ասում է. «Երբ Հիսուսը անցավ այստեղից, նա մի մարդ տեսավ, ում անունը Մատթեոս էր և ով նստած էր հարկատանը և նա ասաց նրան, «Հետևիր ինձ» և նա ոտքի կանգնեց և հետևեց ինձ»: (Մատթեոս 9/9)

Եթե Մատթեոսը հանդիսանար հեղինակը, նա կասեր. «նա ասաց ինձ» «ես հետևեցի նրան», «նա տեսավ ինձ» և այս ամենը նշում է, որ Մատթեոսը հեղինակը չէ:

- Ուշադրությամբ ընթերցելով Ավետարանը, դուք կարող եք գիտակցել հեղինակի հսկայական գիտելիքները Թորայի շուրջ, որը նրան համարում է Թորայի մեջ գետեղված Հիսուսի մարգարեությունների ամենահետաքրքրված անձը: Այն չի

²⁵ Երկու բանավեճ Ստոկհոլմում, Ահմեդ Դիդաթ, էջ.66: Հուդայականությունը և Քրիստոնեությունը, Մուհամմեդ Ալ-Սաթամի էջ.321

կարող էլնել հարկահավաքից, ուստի հեղինակը Մատթեոս հարակահավաքը չէր:

Նոր Կտակարանի մեկնաբանության մեջ, Ա. Թրիքոթը (1960) ասում է, որ այլևս անընդունելի է հավատալ, որ Մատթեոսը հանդիսանում էր հարկահավաք Նահոմ գյուղից և ում Հիսուսը կոչեց ուսումնասիրելու, այդ այն չէ, ինչ հայտնում են եկեղեցու հայրերը:²⁶

ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ՀԵՐՔՈՒՄ ԵՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատ հնագույն և ժամանակակից Քրիստոնյա գիտնականներ ժխտում են Ավետարանի վերագրությունը Մատթեոսին: Չորրորդ դարում, Ֆեսթուսը ասում է. «Ավետարանը, որը վերագրել են Մատթեոսին, նա չի գրառել», և Սուրբ Ուիլյամը և Հայր Դե Դոնը իր «Քրիստոսի կյանքը» գրքի մեջ հավատում է դրան:

Մատթեոսի Ավետարանի իր ներածականի մեջ Ջ.Բ Ֆիլիփսը ասում է, «Հին ավանդույթը վերագրում է այս ավետարանը Մատթեոս աշակերտին, սակայն ժամանակակից գիտնականների մեծամասնությունը հերքում է այս կարծիքը»:

Պրոֆեսոր Հարինգը ասում է. «Մատթեոսի Ավետարանը չի գրառել Մատթեոսը, այլ անհայտ հեղինակը, ով որոշակի պատճառներով թաքցրել է իր ինքնությունը»:

Մատթեոսի Ավետարանի կրոնական ներածությունը ասում է. «Ինչ վերաբերում է հեղինակին, ավետարանը ոչինչ չի նշել նրա մասին: Եկեղեցու հնագույն ավանդույթը (Պապիաս Հիերապոլիսը 155 թվ). վերագրել է այն Մատթեոս Առաքյալին... Ամեն դեպքում, Ավետարանի ուսումնասիրությունը

²⁶ Թորան, Ավետարանը, Ղուրանը և Գիտությունը, Մորիս Բուքելլ էջ.80-80

չի ապացուցում կամ գրոյականացնում տեսակետը: Քանի որ մենք համոզված չենք, թե ով է հեղինակը, մենք պետք է բավարարվենք որոշակի հատկանիշներով, որոնք կարող ենք գտնել Ավետարանի մեջ...»:

Իր «Ավետարանի ներածություն» գրքի մեջ Պաստոր Ֆահին Ազիզը Մատթեոսի Ավետարանի անհայտ հեղինակի մասին ասում է, «Մենք չենք կարող նրան անուն տալ, հեղինակը կարող է լինել Մատթեոս Առաքյալը կամ որևէ այլ մեկը»: Այս Ավետարանի իր մեկնաբանության մեջ (էջ.136) Ջոն Ֆենթոնը ասում է. «Նրա ինքնությունը իր աշակերտի հետ անշուշտ գրեթե գեղարվերստ է»:²⁷

Էբիոնիթները և Ունիտարանականները, հնագույն Քրիստոնեական աղանդները, կասկածի տակ են դրել Մատթեոսի Ավետարանը: Նրանք հավատում են, որ առաջին երկու գլուխները ավելացրել են և որ Ավետարանի իրական սկիզբը հետևյալն է. «Այդ օրերին Հովհաննես Մկրտիչը եկավ» (Մատթեոս 3/1) այսպիսով, ավետարանը սկսվում է Հովհաննես Մկրտիչի պատմությամբ, ինչպես Մարկոսի և Հովհաննեսի Ավետարաններն են:

Ավելին, նրա «Այդ օրերին» խոսքերը չեն վերաբերվում երկու նախորդող գլուխներին, քանի որ երկրորդ գլխի ավարտը պատմում է Հերոդոտոսի մասին, ով սպանում էր մանկահասակ երեխաներին Հիսուսի ծնունդից հետո: Դա և Հիսուսի և Հովհաննեսի մանկության ժամանակաշրջանն էր, ով Հիսուսից վեց ամիս մեծ էր: Մինչդեռ երրորդ գլուխը պատմում է Հովհաննեսի քարոզին, երբ նա երիտասարդ էր- որը նշանակում

²⁷ Սուրբ Մատթեոս Ջ.Ս. Ֆենթոն էջ.136

է, որ մինչ երրորդ գլուխը առկա է մի ջնջում, կամ այն հանդիսանում է ավետարանի իրական սկիզբը:²⁸

Ո՞Վ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԻՐԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ

Եթե Մատթեոսը չի հանդիսանում իր անունը կրող ավետարանի հեղինակը, ապա, ո՞վ է իրական հեղինակը:

Պատասխանելով այս հարցին, մենք ասում ենք, որ արևմտյան ուսումնասիրությունների արդյունքները ապացուցում են, որ ավետարանի հեղինակը չի հանդիսանում է աշակերտ Մատթեոսը: Իրական հեղինակը, ով կարող էր լինել Մատթեոսի աշակերտներից մեկը, որը սկսած երկրորդ դարից վերագրել են Մատթեոսին:

Եկում ենք թարգմանության մեկնաբանները և Քոլեմանը փորձում են բացահայտել իրական հեղինակի առանձնահատկությունները: Հեղինակը, ինչպես երևում է իր ավետարանի մեջ, հրեա քրիստոնյա է, ով կապել է Թորան Հիսուսի կյանքի հետ: Նա, ինչպես նկարագրել է Քոլեմանը, ցանկություն ուներ իր կապը կտրել հուդդայականության հետ, ջանալով շարունակել Հին Կտակարանի գիծը: Նա հանդիսանում է Հրեա հեղինակ, ով հարգում է Օրենքը և հեռու է համարվում Պողոսից, ով չի հարգել Օրենքը: Ավետարանի հեղինակը ասում է. «Հետևաբար, նա, ով հանգստանում է այդ պատվիրաններից ամենանվազը մեկով և ուսուցանում է այլոց անել նույնը կկոչվի վերջինը երկնքի արքայության մեջ»: (Մատթեոս 5/19)²⁹

²⁸ «Հայտնված Ճշմարտությունը» Ռահմաթուլլահ Ալ Հինդի հատոր 2 էջ.538

²⁹ Թորան, Ավետարանը, Ղուրանը և Գիտությունը, Մորիս Բուքեյլ, էջ.8-12

Ծանրակշիռ ապացույցը, որ Մատթեոսը չի գրառել ավետարանը այն է, որ շատ գիտնականներ հավատք են ընծայում— ինչպես նշել ենք— որ ավետարանը գրառել են 70 թվականից անց, այն տարիներին, երբ Մատթեոսը կնքել է մահկանացուն:

Այժմ մենք զարմանում ենք, թե որտեղ է ավետարանը, որը գրառել է Մատթեոսը, ինչպես նշել է Պապիասը:

Պատասխանելով հարցին, մենք ասում ենք, որ Պապիասը նշեց, որ Մատթեոսը գրառեց և հավաքագրեց Հիսուսի խոսքերը: Ամեն դեպքում, ինչ մենք տեսնում ենք ավետարանի մեջ, Հիսուսի կյանքի կատարյալ պատմությունն է, ոչ թե նրա խոսքերի հավաքածուն: Ավելին, եթե ապացուցեն, որ Մատթեոսը չի գրառել այս ավետարանը, չի նշանակի, որ այն չի գրառել որևէ մեկը: Կարևոր է նշել, որ այն ավետարանների մեջ, որը ժխտել է եկեղեցին գտնվում է "Մատթեոսի Ավետարանը" և միզուցե Պապիասը դա նկատի ունեք:

Ինչ մենք նշել ենք, հեռու չէ գիտնականի Մայորի խոսքերից, քանի որ նա եզրակացրեց իր հետազոտությունը ասելով, որ այն ինչ գրառել է Մատթեոսը հանդիսանում են Հիսուսի խոսքերը, որը թարգմանել են հունարեն և ավելի ուշ խմբագրել են այն ձևով, որը մենք այժմ ունենք:³⁰

Ուստի, գիտնականները հավատում են, որ գոյություն ունեն բազմաթիվ փաստեր, որոնք կանխում են այն, որ այս ավետարանը հանդիսանում է Ամենաբարձրյալ Աստծո խոսքը և ոգեշնչությունը: Ինչպես ասել է գիտնական Աբու Ջահրան. «Այն ավետարան է, որը գրառել է անհայտ հեղինակը: Մենք տեղյակ չենք, թե երբ են այն գրառել, որ լեզվով, որտեղ և ով: Մենք տեղյակ չենք հեղինակի կերպարին, նրա կրոնական գիտելիքներին և երկու լեզուներին, մեկը, որից թարգմանել են և մեկը, որով

³⁰ Մատթեոսի Ավետարանը, Մաթթա Ալ Մեսկիին էջ. 28

թարգմանել են և այս ամենը հանդիսանում են գիտական հետազոտության կորուսյալ կետեր»:³¹

ԵՐԿՐՈՐԴ. ՄԱՐԿՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Այն հանդիսանում է Նոր Կտակարանի երկրորդ ավետարանը, որը քրիստոնյաները վերագրում են Մարկոսին: Ի՞նչ մենք գիտենք այս ավետարանի հեղինակի մասին: Արդյո՞ք ճիշտ է վերագրել այն Մարկոսին:

Մարկոսի ավետարանը բաղկացած է տասնվեց գլուխներից, որոնք պատմում են Հիսուսի պատմությունը սկսած այն պահից, երբ Հովհաննես Մկրտիչի մկրտեց նրան, մինչ մահը, խաչելությունը և հետո հարությունը:

Ի տարբերություն այլ ավետարանների, այն ամենից կարճն է և քննադատները այն համարում են՝ ինչպես ասաց Ուիլյամ-ամենաճշգրիտ ավետարանը, որը պատմում է Հիսուսի կյանքը: Քննադատները համամիտ են, որ այն հանդիսանում է առաջին գրավոր ավետարանը և Մատթեոսը և Ղուկասը կրկնօրինակել են դրանից:

«Մուրբ Աստվածաշնչի ներածությունը» գրքի հեղինակները ասում են. «Միգուցե Մարկոսի ավետարանը հանդիսանում է չորս ավետարաններից ամենահինը: Այն գրառել են 65-70 թվականներին, մինչ Երուսաղեմի տաճարի կործանումը: Կարծես Մատթեոսը և Ղուկասը կրկնօրինակել են Մարկոսի ավետարանը»:³²

Գերմանացի գիտնական Ռոյսը ասում է. «Այս ավետարանը հանդիսանում է բնօրինակը, որից Մատթեոսը և Ղուկասը կրկնօրինակել են: Այն մեկ և միակ ավետարանն է, որը կոչվում է

³¹ Զրույցներ Քրիստոնեության մասին Մուհամմեդ Աբու Չահրա էջ.54

³² «Մուրբ Աստվածաշնչի ներածություն» Ջոն Փալքին և այլոք

Քրիստոսի Ավետարան, քանի որ այն սկսվում է «Հիսուս Քրիստոսի, Աստծո Որդու ավետարանի սկիզբը» խոսքերով: (Մարկոս 1/1)

Քրիստոնեական աղբյուրները հայտնում են, որ Մարկոսը իր ավետարանը գրառեց Հռոմում, կամ միգուցե Ալեքսանդրիայում: Ըստ տարբեր աղբյուրների, այն գրառել են 39-75 թվականների միջև եղած ժամանակահատվածում: Ավելի հավանական է, որ այն գրառել են 44-75 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, հիմնվելով պատմաբան Իրենաուսի վկայության, ով ասում է. «Մարկոսը գրառել է ավետարանը Պողոսի և Պետրոսի մահից հետո»:

Պատմաբան Պապիրուսը (140 թվ.) հանդիսանում է առաջինը, ով հիշատակել է այս ավետարանը, երբ ասել է, «Մարկոսը գրառել է իր ավետարանը հիմնվելով հուշերին, որոնք փոխանցել է Պետրոսը»:³³

Ո՞Վ Է ՄԱՐԿՈՍԸ.

Հետազոտողները փոխանցել են այն, ինչ նշել են քրիստոնեական աղբյուրները Մարկոսի կենսագրության մասին, որը առկա է Սուրբ Աստվածաշնչի բառարանի մեջ: Նրան կոչել են Մարկոս, նրա իրական անունը Հովհաննես էր և նա ուղեկցում էր Բարնաբային և Պողոսին իրենց ճանապարհորդության ընթացքում և այնուհետ նա հեռացավ նրանցից և վերադարձավ ավելի ուշ ուղեկցելու Պողոսին:

Կենսագիրները համամիտ են այն կարծիքին, որ նա հանդիսանում էր Պետրոսի թարգմանիչը, ով կապված էր այդ ավետարանի հետ: Պատմաբան, Ջոզեֆուսը նշում է, որ

³³«Մարկոսի Ավետարանի քննադատական ուսումնասիրությունը» Մուհամմեդ Աբդուլալիմ Աբու Ասսադ, էջ.265-267 Սուրբ Աստվածաշնչի Բառարանը էջ. 854

Մարկոսը առաջինն էր, ով Ալեքսանդրիայում քարոզեց ավետարանը, որտեղ էլ որ սպանվեց:

ՄԱՐԿՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՆՇՈՒՄՆԵՐԸ

Գիտնականները խորապես ուսումնասիրել են այս ավետարանը և հեղինակին և որոշ նշումն են կատարել.

Մարկոսը ոչ թե Հիսուսի, այլ Պողոսի և Պետրոսի աշակերտներից էր: Դենիս Նայնհամը Մարկոսի Ավետարանի իր բացատրության մեջ ասում է. (Էջ.39) «Այդ անուններից ոչ մեկը հայտնի չէ, մեր Տիրոջ հետ սերտ հարաբերությամբ կամ նշանավոր է եղել վաղ եկեղեցում»:

Պատմաբան Պապիասը տվել է մեկ այլ հստակ վկայություն, երբ ասել է. «Հովհաննես երեցը սովորաբար ասում էր. «Մարկոսը դարձավ Պետրոսի թարգմանիչը, նա մանրամասն գրառում էր Պետրոսի խոսքերը: Սակայն այն, ինչ նա գրառում էր նմանատիպ չէր Հիսուսի խոսքերին և արարքներին, որովհետև նա երբեք չէր հանդիպել կամ լսել Հիսուսից, սակայն, ինչպես նշեցի, միանում է Պետրոսին, ով ձևավորում է Հիսուս Քրիստոսի ուսմունքները, որոնք համապատասխանում էին ունկնդրի պահանջներին: Իր ճառերի մեջ նա չի կերտում պատմություն, որը կապված էր Հիսուսի հետ կամ նրա մասին է»:

Դենիս Նիյնհամը ասում է (էջ.39) «Անորոշ է, թե արդյոք Մարկոսի ավետարանի հեղինակը հանդիսանում է Հովհաննես Մարկոսն, ում մասին նշել են Գործքը (12/12,25) կամ արդյոք նա հանդիսանում էր Մարկոսը, ում մասին նշել էր Պետրոսի առաջին նամակը (15/13), կամ արդյոք Մարկոսը, ում մասին նշել են Պետրոսի նամակները...»

Վաղ եկեղեցին սովորություն ուներ ենթադրել, որ Նոր Կտակարանի տվյալ անվան բոլոր դեպքերը վերաբերում են մեկ անհատի: Սակայն, երբ մենք հիշում ենք, որ Մարկոսը

հանդիսանում էր Հռոմեական Կայսրության ամենատարածված լատինական անունը և որ վաղ եկեղեցին ուներ անհամար Մարկոսներ, մենք գիտակցում ենք, թե որքան անորոշ է որևէ ենթադրություն, որը կապված է դեպքի անորոշ նույնականության հետ»:

Ամենակարևոր տարաձայնությունը, որը գրավում է հետազոտողի ուշադրությունը ավետարանի ավարտն է: Այս ավետարանի ավարտը (16/9-20) առկա չէ այնպիսի հին կարևոր ձեռագրերի մեջ, ինչպիսիք են Վատիկանյանի և Սինայթիկոսի Կոդեքսները:

Ուիլյամ Փերքլին ասում է. «Հայտնի ավարտը – ի լրում բնօրինակների միջի բացակայության- ունի մի ոճ, որտեղ լեզուն տարբերվում է ավետարանի մյուս հատվածներից»:

Ռահմաթուլլահ Ալիինդին մեջ բերեց հինգերորդ դարի Սուրբ Ջերոմից այն, որ վաղ հայրերը կասկածի տակ էին դրել այս ավարտը:

Վերանայված Տիպական Տարբերակը կասկածելի կերպով հատվածները համարում է անվստահելի, որոնք էլ ջնջել է իր 1951 թվականի հրատարակությունից:

Ջերայութ Փրիսհուդի հրատարակության Մարկոսի ավետարանի ներածությունը ասում է. «Ընդհանուր առմամբ անժխտելի է, որ այսօր առկա ավարտը (16/9-20) ավելացրել են մեղմելու տարբերակ 8-ի գրքի կտրուկ դադարի ավարտը»:

Այս ավարտի մասին Հայր Քիսինջերը ասում է. «Հավանական է, որ մարդիկ, ովքեր ստացել և ընդունել են Մարկոսի ավետարանը, ջնջել են վերջին տարբերակները: Մատթեոսի, Ղուկասի և Հովհաննեսի նմանատիպ գրվածքները փոխանցելուց հետո, Մարկոսի ավետարանի ավարտը գրառել են այստեղից և

այնտեղից... որը տալիս էր այն գաղափարը, թե ազատորեն են վերաբերվել ավետարաններին»:

Մեկնաբանելով այս խնդիրը Մորիս Բուքեյլն ասում է. «Ինչպիսի ակնհայտ խոստովանությունն է, որ մարդիկ կատարել են շատ փոփոխություններ սուրբ հատվածների»:³⁴

ԵՐՐՈՐԴ. ՂՈՒԿԱՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Այն հանդիսանում է երրորդ և ամենաերկար ավետարանը, որը բաղկացած է քսանչորս գլուխներից: Առաջին երկու գլուխները պատմում են մարգարե Հովհաննեսի և Հիսուսի ծնունդի մասին: Մնացյալ գլուխները պատմում են Հիսուսի պատմությունը, խաչելությունը և հաջորդող հարությունը: Աղբյուրները տարբերվում են, որոնք որոշում են ավետարանի գրառման իրական ամսաթիվը, որը տատանվում է 53-80 թվականների միջև: Այս ավետարանի հեղինակը որպես հիմք է վերցնում Մարկոսի ավետարանը, նա այնտեղից կրկնօրինակում է երեք հարյուր հիսուն հատված, նա նույնպես կրկնօրինակում է Մատթեոսից կամ նա և Մատթեոսը միասին կրկնօրինակում են միևնույն աղբյուրից:³⁵

Ո՞Վ Է ՂՈՒԿԱՍԸ

Եկեղեցին այս ավետարանը վերագրում է Ղուկասին, մինչդեռ Քրիստոնեական աղբյուրները քիչ տեղեկություններ են տալիս նրա կենսագրությունից: Ամեն դեպքում, եկեղեցին համամիտ է,

³⁴ «Հայտնված Ճշմարտությունը» Ռահմաթուլլահ ԱլՀինդի, հատոր 1, էջ.152, Թորան, ավետարանը և Ղուրանը և Գիտությունը, Մորիս Բուքեյլ, էջ.85-86 «Քրիստոսը Քրիստոնեական դավանանքի աղբյուրների մեջ» Ահմեդ Աբդուլվահաբ էջ.56

³⁵ «Թորան» Ավետարանը և Ղուրանը և Գիտությունը՝ Մորիս Բուքեյլ էջ.87-90 Քրիստոսը Քրիստոնեական Դավանանքի աղբյուրներում Ահմեդ Աբդուլուահաբ էջ.64-65, 150

որ նա Հիսուսի աշակերտներից չէր, ինչպես երևում է ավետարանի սկզբի հատվածում, «Քանի որ շատերը ձեռնարկել են կազմել պատմությունները, որոնք կատարվել են մեր մեջ: Ճիշտ այնպես, ինչպես նրանք, ովքեր իսկզբանե եղել են ականատեսներ և գրագիրները, ովքեր դրանք հասցրել են մեզ»: (Ղուկաս 1/1-2)

Աղբյուրները նմանապես համամիտ են, որ նա ազգությամբ հրեա չէր, նա հանդիսանում էր Պողոսի ուղեկիցը, ում մասին նշել են Կորնթացիներ 4/14 և այլոք և նա գրառել էր իր ավետարանը իր ընկեր Թեոֆիլիոսի համար: «Գրառելով անբիծ հաշիվ ձեզ համար, ամենապատվելի Թեոֆիլիոս, որ դուք համոզված լինեք այն բանի մեջ, ինչ ուսուցանել եք»: (Ղուկաս 1/3-4)

ՂՈՒԿԱՍԻ ԱՎԷՏԱՐԱՆԻ ՆՇՈՒՄՆԵՐ

Հետազոտողները բազմաթիվ բաներ են նշել Ղուկասի ավետարանի մեջ: Դրանցից ամենակարևորներն են.

1. Մարկոսի ավետարանի սկզբի հատվածը խոսում է անձնական նամակի մասին, որը հիմնված է իր իսկ աշխատանքների և ոչ թե Աստծո ներշնչանքի վրա: Շատ քրիստոնյանա գիտնականներ նշում են դա և նրանք ժխտում են, որ այս ավետարանը հանդիսանում է ներշնչանք: Նրանց թվին են պատկանում Պարոն Քիդելը, իր «Ներշնչանքի նամակը» գրքով, Ուաթսոնը և այլ հին գիտնականներ: Սուրբ Ագուստինը ասում է. «Ես երբեք հավատք չէի ընծայի այս ավետարանին, եթե ես այն չվերցնեի սուրբ եկեղեցուց»:

2. Շատ հետազոտողներ կասկածի տակ են առնում այս ավետարանի երկու գլուխները: Որպես լրացում, կասկածը, ինչպես նշել է Ջերոմը, սկիզբ է առել եկեղեցու վաղ հայրերից և

Մարիկոնի աղանդի կրկնօրինակից, որի մեջ առկա չեն այս երկու գլուխները:

Գիտնականները հաստատում են, որ Ղուկասը չի գրառել այս երկու գլուխները, որովհետև Գործք գրքի մեջ նա ասում է. «Առաջին գրքի մեջ, օվ Թեոֆիլիուս, ես գործ եմ ունեցել ամենի հետ, ինչից սկսել է Հիսուսը»: (Գործք 1/1), ի նկատի ունեն նրա հրաշքները, որը ապացուցում է հատվածի ավարտը. «Գործել և ուսուցանել: Մինչ օրը, երբ նա կհամբարձվի»: (Գործք 1/2) Առաջին երկու գլուխները խոսում են Հիսուսի ծննդի մասին, ոչ թե արարքների: Ուարդ Կաթուղիկը մեջ բերեց Ջերոմից իր խոսքերը. «Մի քանի հին գիտնականներ կասկածի տակ են առել այս ավետարանի գլուխ քսաներկուսը»:

Ուստի, մենք տեսնում ենք որ այս ավետարանը ունի չորս հեղինակ, ովքեր հերթականությամբ գրառել են հատվածները և գլուխները:

3. Հեղինակի կերպարը պարուրված է անորոշությամբ: Ոչ որ տեղյակ չէ նրա քաղաքից, գործունեությունից, ում համար է նա գրառել իր ավետարանը և տարեգրությունը: Ինչ մենք գիտենք այն, որ նա հանդիսանում էր Պողոսի հետևորդներից մեկը և երբեք չի հանդիպել Հիսուսին: Այդ դեպքում ինչպե՞ս ենք մենք կարող այս գիրքը բերել որպես վկայություն և ինչպես ենք մենք կարող այն սուրբ համարել:

ՉՈՐՐՈՐԴ. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Չորրորդ ավետարանը հանդիսանում է Հովհաննեսի ավետարանը: Այն բոլոր ավետարաններից ամենակարևորը և հուզիչն է, քանի որ նրանք, ովքեր հայտնել են Հիսուսի աստվածայնությունը որոշ հատվածներին վերաբերվում են որպես վկայություն:

Այն բաղկացած է քսանմեկ գլուխներից, որոնք մյուս երեք ավետարաններից տարբերվող կերպով պատմում են Հիսուսի մասին: Գիտնականները հավատք են ընծայում, որ այն գրառել են 68-98 թվականների ժամանակահատվածում և ումանք պնդում են, որ ավելի ուշ: Եկեղեցին այս ավետարանը վերագրում է ձկնորս Հովհաննեսին:

Նա Հովհաննեսն էր, Ջարդիի որդին, ձկնորսը Գալիլեայից: Նա և նրա եղբայր Հակոբը հետևեցին Հիսուսին, նույնպես նրա մայրը հանդիսանում էր Հիսուսի մերձավորներից մեկը: Աստվածաշնչի բառարանի խմբագիրները կարծում են, որ հնարավոր է, որ նա հանդիսանում է Հիսուսի մորաքույրը, Հիսուսի մոր, Մարիամի քույրը: Նա ապրել է մինչ առաջին դարի ավարտը, սակայն պատմաբան Երանեմուսը հավատում է, որ նա ապրել է մինչ 98 թվականը: Եկեղեցին ասում է, որ նա գրառել է ավետարանը Եփեսուսում, մինչ իր մահը:³⁶

ՀՈՎՀԱՆՆԵՍԻՆ ՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս կարծիքի աջակցության համար, եկեղեցին հիմք է ընդունում Սուրբ Աստվածաշնչի բառարանի խմբագիրների վկայությունը: Դրանք են.

1. Ավետարանի հեղինակը Պաղեստինցի Հրեա էր: Դա ի հայտ է գալիս Պաղեստինի աշխարհագրության նրա գիտելիքներից և Երուսաղեմից, Հրեական ավանդույթներից և ավետարանի Հունական ոճից, որոշ Սեմական հետևանքներից:

2. Հեղինակը Հիսուսի աշակերտներից մեկն էր, որը պարզ է դառնում հոգնակի թվի կիրառությունից, որոնք մանրամասնորեն նշում են Հիսուսի արարքները և

³⁶ Սուրբ Աստվածաշնչի Բառարան էջ, 110-111

աշակերտների զգացմունքները: Այն պարզ է դառնում Հովհաննես 21/24, որ այս ավետարանի հեղինակը հանդիսանում էր աշակերտներից մեկը: «Նա աշակերտն էր, ով վկայում է, այս ամենի մասին և ով գրառել է դրանք և մենք գիտակցում ենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է»: (Հովհաննես 21/24)

3. «Այս ավետարանի հեղինակը աշակերտ էր, ում սիրում էր Հիսուսը և նա հանդիսանում էր ինքը Հովհաննեսը»:³⁷

Այս ավետարանը կտրականապես դեմ է կանոնական ճանաչվելու համար: Ուստի, Դոկտոր Փոսթը շարունակեց պաշտպանել այն, սուրբ Աստվածաշնչի բառարանի մեջ ասելով. «Անհավատներից ոմանք ժխտեցին այս ավետարանի վավերականությունը, որովհետև նրանք ատում են դրա հոգևոր ուսմունքները և Հիսուսի աստվածայնության պարզ արտահայտությունը: Ամեն դեպքում, նրա իսկ վկայությունը բավարար է: Պետրոսը դիմում է այս տարբերակին, այս ավետարանից, ինչպիսիք են Պետրոս Բ 1/14, Հովհաննես 21/18 տարբերակները, Իգնատիուսը և Փոլիքրիսը, ինչպես նաև Դյուքինթիսի, Բասիլոսի, Ջուսթին նահատակի Տանիսաի նամակները մեջ են բերում այնտեղից: Այս վկայությունը հասնում է մինչ երկրորդ դարի կեսը: Հիմնվելով վկայությանը և Հովհաննեսի ավետարանին, որը համամիտ է Հովհաննեսի կենսագրությանը, մենք կարող ենք ասել, որ Հովհաննեսը գրառեց իր ավետարանը: Այլապես հեղինակը բավական խորամանկ և խարդախ անձ էր և անհավատալի է, որովհետև ով մտադրված էր խաբել աշխարհը, չէր կարող հոգևոր լինել»:³⁸

**ԱՎԵՏԱՐԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍԻՆ ՎԵՐԱԳՐԵԼՈՒ
ԱՆՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

³⁷ Սուրբ Աստվածաշնչի Բառարանը էջ.110-111

³⁸ Սուրբ Աստվածաշնչի Բառարան էջ.110-111

Գիտնականները ջանքերն են գործադրել ուսումնասիրել ճշմարտությունը, որը վերաբերվում է այս ավետարանի Հովհաննեսին վերագրելը և իրական հեղինակի բացահայտելը: Նրանք ժխտում են վերագրել ավետարանը Հովհաննեսի առաքյալին հիմնվելով.

1. Գոյություն ունի հին ժխտում, որը կապված է Ավետարանի վերագրումը Հովհաննեսին: Ժխտումը կատարել են Քրիստոնեական աղանդները, որոնց թվին են պատկանում երկրորդ դարի Ալոգեն աղանդը: «Փառքի Արքա գրքի հեղինակը ասում է. «Հիսուս Քրիստոսի աստվածայնության ժխտողները գտել են, որ Հովհաննեսի Ավետարանը մեծ խոչընդոտ և գայթակղության քար է հանդիսանում իրենց ուղղում, ինչպես ժխտել են Հովհաննեսին այլակրոն առաջին սերունդները»:

Քրիստանիկա Հանրագիտարանը ասում է. «Գոյություն ունի դրական վկայություն նրանց համար, ովքեր քննադատում են Հովհաննեսի Ավետարանը: Դա այն է, որ Փոքր Ասիայում գոյություն ունեւ Քրիստոնեական մի աղանդ, որը ժխտում էր ճանաչել Հովհաննեսին, որպես ավետարանի հեղինակ, մոտավորապես 165 թվականին, և այն վերագրում էր Սիրենթոնին, աթեիստին: Առանց կասկածի դա հանդիսանում էր կեղծ վերագրություն:

Ամեն դեպքում, հարց է ծագում այս մեծ աղանդի շուրջ: Սուրբ Էփիվախուսը 374 մինչ 377 թվականների ընթացքում հարկ համարեց խոսել նրանց մասին: Նա կոչեց այն «Ալոգի» այսինքն Խոսքի Ավետարանի Հակասություն:

Եթե Հովհաննեսի Ավետարանի վերագրումը վեր էր բոլոր կասկածներից, արդյո՞ք նմանատիպ աղանդը կարող էր ներկայացնել այդ տեսությունները այդ դարաշրջանի ընթացքում և նմանատիպ երկրում: Կատարելապես ոչ»:

Ավետարանը Հովհաննեսին սխալ վերագրելու վկայություն է հանդիսանում այն, որ Ջասթին Մարթիրը խոսեց Հովհաննեսի մասին երկրորդ դարի կեսերին և չնշեց, որ նա գրառել է ավետարանը: Ի լրացում, 165 թվականին, Փիլեմոնը մեջ բերեց Հովհաննեսի Ավետարանից և չվերագրեց այդ նրան:

Հովհաննեսին Ավետարանի վերագրելը ժխտել են Իրենաուսի ներկայությամբ, Փոլիքարփի աշակերտը, ով էլ հանդիսանում էր Հովհաննեսի աշակերտը: Ամեն դեպքում, Իրենաուսը չի պաշտպանել Հովհաննեսի ավետարանը, վիճաբանել կամ վիճել ժխտման մասին: Անհավանական էր, որ նա Փոլիքարփից լսել էր, որ Հովհաննեսը ուներ ավետարան և այնուհետ նա չէր պաշտպանում դա:³⁹

Գիտնականները դարեր ի վեր շարունակում են ժխտել տվյալ Ավետարանի վերագրությունը Հովհաննեսին: Այդ վկայություններից էլ հասել են Ֆրանսիական Հանրագիտարանը. «Այս ավետարանը և այլ երեք գլուխները Նոր Կտակարանից վերագրվել են Հովհաննեսին: Ամեն դեպքում, գիտական հետազոտությունները աստվածաբանության մեջ չեն աջակցում այս գաղափարին»:

Իր «Խաչի դրոշը և մուրը ճշմարտությունը» գրքի մեջ, հնդիկ քահանա Բարաքաթ Ալլահը ասում է. «Գիտնականները այլևս հավատք չեն ընծայում, այն փաստին, որ Հովհաննեսը, Ջոբադիի որդին առանց հետազոտությունների և ուսումնասիրությունների, գրառեց չորրորդ ավետարանը: Ավելին, բոլոր քննադատները ընդհանուր առմամբ համամիտ չեն այս տեսության հետ»:

³⁹ «Ճշմարտությունը հայտնված է» Ռահմաթուլլահ Ալ Հինդի, հատոր 1 էջ.155-156 «Արարչի և Արարածի տարբերությունը» Աբդուլառահման Բաջի Ալ Բադադի էջ.560-561

Բրիտանիկա Հանրագիտարանը ասում է. «Ինչ վերաբերում է Հովհաննեսի ավետարանին, անկասկած այն կեղծ ավետարան է: Հեղինակի ցանկությունն է հայտնել, որ երկու առաքյալները Մատթեոսը և Հովհաննեսը ընդդիմանան միմյանց: Մենք խղճում ենք նրանց, ովքեր ջանք են գործադրում կապել նույնիսկ նվազագույն չափով այն փիլիսոփային, ով երկրորդ դարում գրառել է այս ավետարանը Գալիլեացի ձկնորս Հովհաննես հետ, որովհետև նրանց ջանքերը զուր են. վարվել այսպես առանց կապ ունենալու առաջնորդության հետ»:⁴⁰

Ավելին, անշուշտ ավետարանի ընթերցումը կարող է ցույց տալ, որ ինքնին ավետարանը անվավեր է համարում իր կապը Հովհաննես աշակերտի հետ: Այն գրառել են Ագնոստիկ կերպով. որը խոսում է Լոգոսի և Ֆիլոսի մասին, Ալեքսանդրիասի տեսությամբ:

Հնարավոր չէ, որ Հովհաննես ձկնորսն է գրառել է դա, որովհետև և ըստ Գործք Գրքի, նա անուսում էր: «Այժմ, երբ նրանք տեսան Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունը և ընկալեցին, որ նրանք եղել են անուսում, հասարակ մարդիկ, նրանք զարմացել են»: (Գործ 4/13)

Ավետարանի եզրակացությունը. «Նա աշակերտ է, ով վկայել է այս ամենը և ով գրառել է դրանք և մենք տեղյակ ենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է»: (Հովհաննես 21/24), որը հանդիսանում է վկայություն նրա,,որ Հովհաննեսի ավետարանը ճշմարիտ չէ,քանի որ այն երրորդ անձով է խոսում Հովհաննեսի մասին:

⁴⁰ «Արարչի և Արարածի միջև տարբերությունը» Աբդուլուահմեն Բաշի Ալ Բադդադի էջ.561, «Քրիստոսը փաստերի և երևակայության միջև», Մուհամմեդ Ուսաֆի էջ.41-42: «Մուրբ Աստվածաշնչի թարգմանությունների տարբերությունները», Ահմեդ Աբդուլ Ուահաբ, էջ.87-88

Արևմտյան գիտնականը հավատում է, որ այս հատվածը լուսանցքում էր և այնուհետ այն ավելացրել են տեքստին: Հնարավոր է, որ դրանք հանդիսանում են Եփատսի ավագանու խոսքերը և արքեպիսկոպոս Գորը աջակցեց նրան, քանի որ հնարավոր չէր գտնել այն Սինայթիկուսի Կողեքսի մեջ: Հիսուսականների քահանայության ներածությունը այս հատվածի մասին հետևյալն է. «Դրանք լրացումներ են, որոնք ճանաչել են մեկնաբանները»:

«Չորս Ավետարաններ» գրքի մեր գիտնական Բուրնեթ Հիլման Սթրիթերը հավատում է, որ «գրքի այս լրացումների նպատակը և Հովհաննեսի ավետարանի ավարտը հանդես է գալիս քաջալերելու և համոզելու մարդկանց հավատալ, որ հեղինակը Հովհաննեսն էր. Տեսություն, որը ժխտել են այս դարաշրջանի որոշ մարդիկ»:⁴¹

Ի լրացում, որոշ պատմաբաններ, ինչպիսիք են Չարլզ Ալֆրեդը և Ռոբերտ Իսելլը և այլոք ասում են, որ Հովհաննեսին ենթարկել են կախադանի 44 թվականին, Ագրիպպա առաջինի հրամանով: Ուստի, նա ավետարանի հեղինակը չէ, քանի որ այս ավետարանը գրառել են առաջին դարի վերջում, կամ երկրորդ դարի սկզբին:⁴²

Ո՞Վ Է ԳՐԱՌԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Եթե Հովհաննեսը չէր հանդիսանում այս ավետարանը հեղինակը, ապա ո՞վ էր իրական հեղինակը:

⁴¹ «Սուրբ Գրքերը ճշմարտության և Փովոխություններ» Եղիա Ռաբիի էջ.155: «Ինչ է քրիստոնեությունը» Մուհամմեդ ԱլՕթմանի էջ.150-152. «Հուդդայականությունը և Քրիստոնեությունը» Մուհամմեդ Դիա Ալ-Աթամի էջ.329: «Արդյո՞ք Աստվածաշունչը Աստծո Խոսքն է Ահմեդ Դիդայթ էջ.79

⁴² «Թողություն Իսլամի և Քրիստոնեության միջև» Իբրահիմ Խալիլ Ահմեդ էջ. 18, «Քրիստոնեությունը» «Մուսթաֆա Շահին» էջ.85

Տվյալ ավետարանի իր ներածության մեջ Քահանա Ֆահեմ Ազիզը պատասխանում է. «Մա դժվար հարց է և պատասխանը պահանջում է ծավալուն ուսումնասիրություն, որը հաճախ ավարտվում է «միայն Աստված գիտե, թե ով է գրառել այս ավետարանը» արտահայտությամբ»:

Որոշ գիտնականներ փորձեցին պատասխանել այս հարցին սահմանելով ավետարանի հեղինակի բնութագրերը առանց որոշակի անուն նշելու: Գրանթը ասում է. «Նա քրիստոնյա և ազնուստիկ էր: Ակնհայտ է, որ նա հրեա չէր, այլ արևմուտքից ելած կամ հույն: Եվ հրեական քաղաքի կործանումը որի մասին նա գրառեց, չանհանգստացրեց նրան»:

Ավետարանի ներածության մեջ մենք տեսնում ենք նմանատիպ քննադատություն. «Մի նշեք հեղինակի անունը և նկարագրեք նրան որպես Քրիստոնյա, ով Ասիական եկեղեցիներում հունարեն է գրառել »:

Հովհաննեսի ավետարանի մեկնաբան Ջոն Մարշը, ասաց. (Էջ.81) «Ակնհայտ է, որ առաջին դարի վերջին տաս տարիների ընթացքում գոյություն ունեւ Հովհաննես անունով մի անհատ: Հնարավոր է, որ նա Հովհաննես Մարկուսն էր, ոչ թե Զիբադիի որդի Հովհաննեսը, ինչպես հայտնի է»: Նա Հիսուսի մասին շատ տեղեկություններ հավաքեց և հնարավոր է, որ նա տեղյակ էր մեկ կամ ավելի սինոպտիկ ավետարաններին: Այնուհետ նա նորովի գրառեց Հիսուսի պատմությունը, որը համապատասխանում էր իր աղանդի, որն էլ համարվեց միջազգային և Հովհաննես Մկրտիչի աշակերտի ազդեցությամբ»:

Գիտնական Ռիչրունդերն ասաց. «Որպես ամբողջականություն այս ավետարանը և Հովհաննեսի նամակները, նա չի գրառել: Երկրորդ դարի սկզբին դրանք գրառել է ինչ որ մեկը և վերագրել է Հովհաննեսին, որպեսզի մարդիկ հավատք ընծայեն»:

Սթեղիինը համամիտ է նրան: Նա հավատք է ընծայում, որ հեղինակը. «Ալեքսանդրիայի դպրոցի աշակերտ էր»: Իր «Տոհֆաթ Ալջել» գրքի մեջ Յուսուֆ Ալքհորին ասում է. «Ավետարանի հեղինակը Պրոկլոսն էր, Հովհաննեսի աշակերտը»:

Այնպիսի գիտնականներ ինչպիսիք են Ջեյմս Մաքքիննոն և Բուրնեթ Հիլման Սթրիթերը «Չորս Ավետարաններ» գրքի մեջ հավատք են ընծայում, որ Հովհաննեսը Հիսուսի մեկ այլ աշակերտն էր, որն էլ Հովհաննես Իմաստունն էր: Իրենիուսը, ով ավետարանը վերագրեց Ջաբադիի որդի Հովհաննեսին, շփոթել էր երկու աշակերտներին:

Իր «Հովհաննեսի Ավետարանի Վկայության» գրքի մեջ, Ջորջ Էլթոնը նշեց, որ տվյալ ավետարանի հեղինակը երեքից մեկն է Հովհաննես աշակերտի ուսանողը, Հովհաննես Ավագը, աշակերտը կամ Եփեսոսի անհայտ գիտնականը:

Էլթոնը, ով մինչ այժմ Հովհաննեսի ավետարանը սուրբ է համարում, համոզված չէ, որովհետև, «Ինչպիսի էլ որ լինի տվյալ ավետարանի տեսությունների հեղինակը, մեզ պարզ է, որ այն մարդը, ով գրառեց այն ուներ Մարգարեի գաղափարը: Եթե նրա աշակերտներից մեկն է գրառել դա, անկասկած նրա վրա ազդեցություն են ունեցել և նա լցվել է նրա ոգով»:

Գիտնականները հավատք են ընծայում, որ տվյալ ավետարանը ունի ավելի քան մեկ հեղինակ: Նրանցից է հանդիսանում Քոլեմանը, երբ նա ասում է. «Ամենը մատնանշում է այն փաստը, որ ներկայիս տպագրված տեքստերը պատկանում են ավելի քան մեկ հեղինակի: Հնարավոր է, որ ավետարանը տպագրել է հեղինակի ուսանողներից մեկը և հնարավոր է, որ նա կատարել է լրացումներ»: Հովհաննեսի Ավետարանի ներածությունը տալիս է միևնույն գաղափարը:

Այս ամենը ապացուցում է, որ Հովհաննես առաքյալը չի գրառել Հովհաննեսի Ավետարանը և իրական հեղինակը անհայտ է: Ճիշտ չէ անձանոթ հեղինակին վերագրել սրբություն և անսխալականություն:

Անկախ այն փաստի, որ առկա չէ որևէ տեղեկություն հեղինակի մասին և սրբությունը հնարավոր չէ, գիտնականները տվյալ ավետարանի մեջ նշել են բազմաթիվ խնդիրներ: Այդ խնդիրներից են.

Տվյալ ավետարանը տարբերվում է երեք ավետարաններից, չնայած չորս ավետարանների առարկան հանդիսանում էր Քրիստոսի պատմությունը և կյանքը: Երեք սինոպտիկ ավետարանների մեջ Քրիստոսի պատմությունը միևնույնն է, մինչդեռ չորրորդ ավետարանի մեջ այն այլ է:

Իր «Ավետարանի Ներածություն» գրքի մեջ Հայր Ռոջերթըն ասում է. «Սա այլ աշխարհ է. այն մյուս ավետարաններից տարբերվում է թեմաների, ճառերի, ոճի, աշխարհագրության, պատմության և նույնիսկ աստվածաբանական տեսակետի ընտրությամբ»:

Մյուս երեք ավետարանների մեջ առկա այս տարբերությունները նրան ուղղորդեցին ներկայացնել Քրիստոսի բավական տարբեր կերպարներ, որոնք ոմանք կոչում են «Սինոպտիկ» կամ «նմանատիպ»: Այս առումով Ամերիկյանա Հանրագիտարանը ասում է. «Դժվար է երեք ավետարանները կապել տվյալ ավետարանի հետ, որը նշանակում է, որ եթե երեք ավետարանները ճիշտ են, ապա այս ավետարանը պետք է որ կեղծ լինի»:

Իր «Ընդլայնված Տիեզերք» գրքի մեջ մեկնաբանելով այս տարբերությունները, Սըր Արթուր Ֆինդլեյը ասում է. «Հովհաննեսի Ավետարանը ոչ մի արժանի արժեք չունի,

որպեսզի նշի ճշմարիտ իրադարձությունները: Մա նշանակում է, որ բովանդակությունը ելնում է հեղինակի երևակայությունից»:

Տվյալ ավետարանի խնդիրներից մեկը այն է, որ այն փոփոխված է: Անառակ կնոջ պատմությունը ավելացրել են դրան: Տես Հովհաննես 8/1-11, որի մասին Ջեյուիթ Փրիսթհուդը ներածության մեջ ասում է, «Գոյություն ունի մի համաձայնություն, ըստ որի այն վերցրել են անհայտ հղումից և ավելի ուշ ավելացրել են»: Այս պատմությունը հեռացրել են Վերանայված Տիպական Տարբերակից, որովհետև այն համարում են ավետարանի լրացված հայտարարություն»:⁴³

Ի լրացում, բազմաթիվ գիտնականներ հավատք են ընծայում, որ Ավետարանի հեղինակը չի գրառել վերջին գլուխը: Քրոնը ասում է. «Ավետարանը բաղկացած է քսան գլուխներից, իսկ Եփեսոսի եկեղեցին քսանմեկերորդ գլուխը ավելացրեց Հովհաննեսի մահից հետո»:⁴⁴

Անժխտելի է, որ Ջերսույթ քահանայության ներածության հեղինակները, հավատք են ընծայում, որ քսաներորդ գլուխը Ավետարանի վերջին գլուխն է և քսանմեկերորդը ավելացրել են: Նրանք ասում են. «Տվյալ գլուխը, որը գալիս է 20/30-31 –ից հետո, պետք է որ լինի ցուցանիշ և աղբյուրը մինչ այժմ հանդիսանում է վեճերի առարկա: Այս գլուխը պետք է որ ավելացրած լինեն Հովհաննեսի մի քանի աշակերտները»:

Ուստի, մենք հանգում ենք ակնհայտ եզրակացության, որ ավետարանի վերագրությունը Քրիստոսի աշակերտներին «Առաջ է բերում բազմատեսակ դժվարություններ: Այսօր, մենք

⁴³ Մուրբ Աստվածաշնչի ընթերցումներ, Աբդուրոսահիմ Մուհամմեդ, Հատոր 2 էջ.272: Քրիստոսի Խաչելությունը, Ահմեդ Դիդաթ, էջ.68: Թորան, Ավետարանը, Ղուրանը և Գիտությունը, Մորիս Բուրթլլ էջ.91:

⁴⁴ «Ճշմարտությունը Հայտնված է»; Հատոր 1 էջ.156

դիտում ենք ավետարանները, ինչպես անձանոթ հեղինակների գրվածք»,⁴⁵ և սա հանդիսանում է ճշմարտությունը:

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հետևելով չորս ավետարաններին, որտեղ առկա են նամակներ, մասնավորապես (Գործք Գիրքը, - Պողոսի տասնչորս նամակները, - Հակոբի Նամակը, - Պետրոսի երկու նամակները, - Հովհաննեսի երեք նամակները - Հուդայի Նամակը - Հայտնությունը):

ԱՌԱՋԻՆ. ԳՈՐԾՔ ԳԻՐՔԸ

Այս գիրքը բաղկացած է քսանութ գլուխներից, որոնք խոսում են Առաքյալների և աշակերտների կատարած աշխատանքների մասին: Այն վերաբերվում է Ղուկասին, երրորդ ավետարանի հեղինակին, քանի որ սկիզբը ասում է. «Առաջին գրքի մեջ օվ, Թեոֆիլիոս, ես կապ եմ ունեցել այն ամենի հետ, որը սկսել էր կատարել Հիսուսը...» (Գործք 1/1)

ԵՐԿՐՈՐԴ. ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Տասնչորս նամակները վերաբերվում են Սուրբ Պողոսին և լի են հատվածներով, որոնք ցույց են տալիս, որ նա է հանդիսանում հեղինակը: Դրանք նույնպես հանդիսանում են անձնական նամակներ, որոնք բնույթով աստվածաբանական չեն, այլ անձնական նամակներ ներածությամբ և եզրակացությամբ:

Գոյություն չունի որևէ համաձայնություն, որը ապացուցում է Պողոսի նամակների վավերականությունը, քանի որ ըստ Բրիտանիկա Հանրագիտարանի, որոշ գիտնականներ

⁴⁵ Կրոնական Պատմության ամփոփում, Ֆիլսիան Չալի էջ.230 և նա վերագրում է դա Մոնթ պատմաբանին իր «Սուրբ Աստվածաշնչի Պատմությունը» գրքի մեջ, էջ.156

մտադրված են հավատալ, որ նրա աշակերտներից ոմանք գրառել են այդ նամակներից չորսը:

Հովհաննեսի Ավետարանի մեկնաբանության մեջ Արգոնը կասկածի տակ է դնում այն, որ բոլոր նամակները պատկանում են Պողոսին: Նա ասում է. «Պողոսը ոչինչ չի գրառել եկեղեցիներին, նա միայն գրառել է երկու կամ չորս տող»:

Ամենամեծ տարբերությունը Հրեաների նամակների հակամարտությունն է: Մինչ Արևմտյան Եկեղեցին այն վերագրում է Պողոսին, Լյութերը այն վերագրում է Ապոլոսին: Տերտուլիան, երկրորդ դարի պատմաբանը, ասում է. «Այն գրառել է Բարնաբան»: Ռագուսը, Բողոքական գիտնականը, ասում է. «Բողոքական մի քանի գիտնականներ հավատք են ընծայում, որ Հրեաների նամակը կեղծ է»:⁴⁶

Ջեսույթ Փրիսթիուդի ներածությունը ասում է. «Անկասկած գոյություն ունեն շատ վկայություններ, որոնք դեմ են նամակը Պողոսին վերագրելուն: Կարելի է կարծել, որ Պողոսի ընկերն է գրառել դա, սակայն հնարավոր չէ գտնել հեղինակի անունը: Ի վերջո, մենք պետք է վկայենք, որ մենք չգիտենք հեղինակի անունը»:

«Սուրբ Աստվածաշնչի Ներածությունը» աշխատության հեղինակները ասում են. «Մենք ուղղակի տեղյակ չենք, թե ով է հեղինակը, չնայած նամակները ավարտվում են ջերմ ողջույններով, այն չունի վերնագիր: Ամեն դեպքում, ընդհանուր ենթադրություն է, որ Պողոսն է գրառել այն: Հնարավոր է, որ հեղինակը Բարնաբան է (Գործք 4/36), ով պետք է որ տեղյակ

⁴⁶ «Ճշմարտությունը Հայտնվել է» Ռահմաթուլլահ Ալ Հինդի հատոր 1 էջ.163-165 «Արարչի և Արարածի տարբերությունը» Աբդուլբահման Բաջի Ալ Բադդադի էջ.306 «Հուդայականությունը և Քրիստոնեությունը» Մուհամմեդ Դիհա Ալ Աթամի էջ.325-327 Սուրբ Աստվածաշնչի Բառարանը էջ.599

լիներ քահանաների և նրանց աշխատանքների մասին: Երրորդ հնարավորությունը այն է, որ Ղուկասն է հանդիսանում հեղինակը, ի շնորհիվ Հրեաների, Ղուկասի Ավետարանի և Գործք Գրքի ոճի միջև գոյություն ունեցող նմանության: Գոյություն ունի չորրորդ հնարավորությունը, որն ասում է, թե Ապոլոսն է հեղինակը, ով լավ տեղյակ էր Տիմոթեոսից (13/23): Գործք 18/24 մեզ պատմում է, որ Ապոլոսը գիտակ էր գրառմանը և վարժ էր խոսքի մեջ և անհատը, ով գրառել էր այս նամակը նման էր նրան: Գոյություն ունեն բազմաթիվ այլ հնարավորություններ և վերջապես մենք պետք է ասենք, որ ոչ ոք տեղյակ չէ, թե ով է գրառել այս նամակը:»⁴⁷

Հայր Օրեգանոսը համամիտ է վերջին հայտարարության հետ, երբ նա ասաց. «Աստված գիտե, թե ով է իրականում գրառում այս նամակը: Որոշ վաղ մարդիկ ասում են. Քլեմենթը, Հռոմի եպիսկոպոսն է գրառել դա և մյուսները ասում են. այն գրառել է Ղուկասը:»⁴⁸

ԵՐՐՈՐԴ. ԿԱԹՈՒԼԻԿ ՆԱՄԱԿՆԵՐԸ և ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

Այդ նամակները յոթն են, երեքը վերագրում են Հովհաննեսին, երկուսը Պետրոսին, մեկը Հուդային և մեկը Հակոբին, այնուհետ, Նոր Կտակարանի վերջին գիրքն է հանդիսանում Հայտնությունը: Գիտնականները այս նամակները վերագրում են մարդկանց, ովքեր ըստ նրանց հանդիսանում են Հիսուսի տասներկու աշակերտներից:

Պետրոսը Նահում գյուղի ձկնորսն էր, ով հայտնի էր Միմոն անունով: Գիտնականները հավատք են ընծայում, որ նա հանդիսանում էր Հովհաննես Մկրտիչի աշակերտներից մեկը, մինչ քրիստոսին ուղեկցելը և ով էլ դարձավ նրա լավագույն

⁴⁷ «Սուրբ Աստվածաշնչի Ներածությունը» Ջոն Բակլան և այլք էջ.556

⁴⁸ «Եկեղեցու Պատմությունը» Եսեփուս էջ.276

աշակերտներից մեկը: Նա քարոզեց Անտիոքում և այլ վայրերում և այնուհետ առաջին դարի կեսերին նրան սպանեցին:

Հակոբը Ջաբադի ձկնորսի որդին էր – Հովհաննես Ավետարանչի եղբայրը - և մոտ էր Քրիստոսին: Նա ուղղորդեց Երուսաղեմի ժողովը 34 թվականին և մահապատժի ենթարկվեց Ագրիպպա առաջինի հրամանով, մոտավորապես 44 թվականին: Մյուսները ասում են. «Հրեաները սպանեցին նրան, երբ նրանք նետեցին նրան տաճարից և քարկոծեցին 62 թվականին»:

Ինչ վերաբերվում է Հուդային, աղբյուրները ոչինչ չեն պատմում նրա մասին, բացառությամբ թե արդյոք նա Հակոբի կրտսեր եղբայրն էր, այսինքն Ջաբադիի որդին, թե Լեբոսի աշակերտը, ով հայտնի էր ինչպես Թադդաեուս: Սակայն ոմանք ասում են, որ նա մեկ այլ Հուդան էր:⁴⁹

Իրենց բովանդակությամբ այս նամակները ուսուցողական են, իրենց ոճով անձնական, ներածականի մեջ հաճախ նշում են հեղինակի անունը: Ամեն դեպքում, Քրիստոնեության առաջին դարում այս նամակների վերագրությունը հանդիսանում էր երկար վեճերի առարկա: Ինչ մենք նշել ենք Հրեաներին ուղղված նամակի մասին, դա վերաբերվում են դրանց մեծամասնությանը: Այդ տեղի է ունեցել մինչ չորրորդ դարի կեսերը, Պետրոսի երկրորդ նամակը, Հովհաննեսի երկրորդ և երրորդ նամակները, Հակոբի երկու նամակները, Հուդայի և Հայտնության գիրքը, որոնք էլ հանդիսանում են բազմաթիվ հակասության առարկա էր մինչ հաստատման ճանաչումը:

Հայտնության գիրքը պարունակում է տարօրինակ երազանք, որի նպատակն է հաստատել Քրիստոսի աստվածայնությունը,

⁴⁹ «Մուրբ Աստվածաշնչի Բառարանը» էջ.174-176,1075 : Ինչպես են Ավետարանականները մտածում Քրիստոսի Հավատքի հիմքերի մասին, Վայնե Գերդոմ էջ.46

նրա հզորությունը երկինքներում և հրեշտակների հնազանդությունը նրան, ինչպես ապագա կանխատեսումները, որոնք ձևավորվել են խորհրդանշական և երկիմաստ կերպով: Հովհաննեսը տեսավ այս տեսիլքը իր երագի մեջ, որը էլ քսանյոթ էջ է: Նմանատիպ երզաները տարօրինակ են և իրականությունից հեռու:

Վաղ եկեղեցու հայրերը կասկածի տակ են առնում այս գիրքը: Քիս Բրիսթերը (212 թվ). ասում է. «Հայտնության Գիրքը գրառել է աթեիստ Սիրենթուսը», նույնը կրկնել է Դիոնիսուսը, հին գիտնականներից մեկը:

Դիոնիսուսը, հանդիսանում էր Ալեքսանդրիայի Դպրոցի ղեկավարը (250 թվական), ով կապված էր որոշ նախկին գիտնականների հետ, ովքեր ուսումնասիրել էին Հայտնության Գրքի գլուխները և գտել էին, որ «Այն անիմաստ կամ առանց վկայության է և ունի կեղծ վերնագիր: Այն չի գրառել Հովհաննեսը... ոչ էլ որևէ այլ աշակերտը, քահանաները կամ եկեղեցականները: Կորինթիուսը, այսպես կոչված Կորինթացիների աղանդի հիմնադիրը, ցանկություն ուներ աջակցել իր կեղծ պատմությանը և գիրքը վերագրեց Հովհաննեսին»:

Կորինթուսը հավատք էր ընծայում, որ Քրիստոսը հանդիսանում էր երկրի արքան, որն էլ համապատասխանում է գրքի երկրի վերջին օրերի իրադարձությունների գաղափարին:

Հիսուսը պատասխանում է իր աշակերտների առաջին հարցին, թե ինչպես նա նկարագրեց տաճարի կործանման նշանները: Այնուհետ անցնում է պատասխանել իր գալստյան երկրորդ հարցի և ժամանակի ավարտի մասին, նա ասում է. «Անմիջապես այդ օրերի դժբախտությունից հետո, արևը կխավարի և լուսինը չի տա իր լույսը և աստղերը կընկնեն երկնքից և երկինքների ուժերը կշարժվեն: Այնուհետ, երկնքում երևան կգա Մարդու Որդին և այնուհետ երկրի վրա գոյություն ունեցող բոլոր ցեղերը կողբան և նրանք կտեսնեն Մարդու Որդուն, ով գալիս է երկնքի ամպերից հզորությամբ և մեծ փառքով... Ճշմարիտ, ես ասում եմ ձեզ այս սերունդը չի հեռանա, մինչ այս ամենը տեղի չունենա:»⁶⁵ Երկինքը և երկիրը կանհայտանան, սակայն իմ խոսքերը չեն անհայտանա»: (Մատթեոս 29/35 տես Մարկոս 13/24-31)

Ղուկասի գրքի մեջ «Եվ Երուսաղեմը ոտնատակ կտան հեթանոսները, մինչ հեթանոսների ժամանակները կլրացվի»: Եվ կլինեն արևի, լուսնի և աստղերի նշաններ և երկիրը կշփոթվի ազգերի վշտից, ծովի և ալիքների գոյունից: Մարդիկ կորցնում են գիտակցությունը վախից և կանխագագացումից, թե ինչ է գալու աշխարհ: Քանի որ երկինքների ուժերը կտատանվեն: Եվ այնուհետ, նրանք կտեսնեն Մարդու Որդուն, ով գալիս է ամպի վրա հզորությամբ և մեծ փառքով... Ճշմարիտ, ես ասում եմ ձեզ այս սերունդը չի հեռանա, մինչ ամենը տեղի չունենա: Երկինքը և

⁶⁵Թարգմանիչները և մեկնաբանները փորձում են լուծել ամենը, Իրինեմուսը ասաց, որ «սերունդ» բառը վերաբերվում է մարդ արարածին, Օրեգանոն ասում է, որ այն վերաբերվում է Քրիստոնյա եկեղեցուն և ոմանք էլ ասում են, որ այն վերաբերվում է Հրեական կանոնին: Ամեն դեպքում, գոյություն ունեն ոմանք, ովքեր խոստովանում են, որ այն վերաբերվում է 70-100 թվականներին: Տես, Ղուկասի Ավետարանի մեկնաբանությանը, Պաստոր Իբրահիմ Սաիդ էջ.525

երկիրը կանցնեն, սակայն իմ խոսքերը չեն անցնի»: (Ղուկաս 21/24-33)

Հայր Մաթթա Ալմիսկիինը ասում է. «Բոլոր գիտնականները համամիտ են, որ այս տարբերակը վերաբերվում է Երուսաղեմի և տաճարի կործանմանը, որը փաստացի տեղի է ունեցել նրա սերնդի ժամանակաընթացքում»:⁶⁶

Արագ վերադարձի և մոտալուտ հարության գաղափարը հեղեղեց նամակների հեղինակներին: Նրանց թվին էր պատկանում Պողոսը, ով ասաց. «Սակայն նրանք գրառել են մեր ուսուցման համար, ում համար պետք է գա դարերի ավարտը»: (Կորնթացիներ Ա 10/11)

Թեսաղոնիկցիներին ուղղված իր նամակի մեջ, Պողոսը խոսում է, թե ինչպես նա պետք է հանդիպի Հիսուսին այն բանից հետո, երբ Հիսուսի հավատացյալները հարություն կառնեն: Նա ասում է. «Այդ պատճառով մենք հայտարարում ենք ձեզ Տիրոջ խոսքը, որ մենք, ովքեր կենդանի ենք, ովքեր մնում են մինչ Տիրոջ գալը, չեն նախորդել նրանց, ովքեր ննջել են: Քանի որ ինքը, Տերը կիջնի երկնքից պատվիրանի գոչունով, հրեշտակապետի և Աստծո շեփորի ձայնով: Եվ հանգուցյալ Քրիստոսը առաջինը կբարձրանա: Այնուհետ, մենք, ովքեր կենդանի ենք, ովքեր ներկա ենք, միասին կբռնենք նրանից ամպերի մեջ, որպեսզի հանդիպենք Տիրոջը օդի մեջ և այսպիսով մենք միշտ կլինենք Տիրոջ հետ»: (Թեսաղոնիկցիներ 4/15-17)

Նա իր հավատքը հաստատեց այս գաղափարի մեջ ասելով. «Տեսեք, ես ասում եմ ձեզ առեղծվածը: Մենք բոլորս քուն չենք մտնելու, սակայն մենք բոլորս փոխվելու ենք, մեկ րոպեում, աչքի ակնթարթում վերջին շեփորին: Քանի որ շեփորը կհնչի և

⁶⁶ Ղուկասի Ավետարանը, Հայր Մաթթա Ալմիսկիին էջ.674

հանգուցյալները հարություն կառնեն առանց անհայտանալու և մենք կվոխվենք»: (Կորնթացիներ Ա 15/51-52)

Ջեյուրթ Փրիսթիուդը մեկնաբանում է այս վերջին տեքստը ասելով. «Պողոսը խոսում է, որպես անհատ, ով պետք է որ կենդանի լինի Քրիստոսի գալստյան ընթացքում»:

Աստվածաբանության Բառարանը ասում է. «Թվում է, թե Եկեղեցու սկզբնական շրջանում հավատացյալները կարծել են, որ Հիսուսը անմիջապես կգա... Պողոսը չի ասել, որ երկրորդ փառահեղ գալուստը կլինի երկար ժամանակ անց, սակայն ընդհակառակը նա հույս ուներ, որ նա կենդանի կլինի»:

(Թեսաղոնիկցիներ Ա 4/17)

Հովհաննեսը ասում է. «Ձավակներ, արդեն վերջին ժամն է, և ինչպես դուք լսել եք, որ նեռը գալիս է, այսպիսով այժմ շատ նեռեր են եկել: Ուստի, մենք տեղյակ ենք, որ այն վերջին ժամն է»:

(Հովհաննես Ա 2/18)

Ջեյուրթ Փրիսթիուդը մեկնաբանում է այս տարբերակը. «Ակնարկելով պատմության վերջին ժամը, առաջին Քրիստոնյաները, ներառյալ Հովհաննեսը, համոզված էին, որ ժամը մոտ է, սակայն նրանք հավատք էին ընծայում, որ իրոք փառքով գալուստը կնախորդի կոռուպցիան. Կեղծ Քրիստոսը»:

Այս և նմանատիպ խոսքերը նշում են, որ հարության դեպքը և Հիսուսի վերադարձը մինչ այդ, տեղի կունենա առաջին սերնդի ժամանակաընթացքում: Ամեն դեպքում, շատ դարեր են անցել, սակայն դա տեղի չի ունեցել: Այս ցույց է տալիս, որ տվյալ մարգարեացումները հանդիսանում են ավետարանականների սխալները:

ՀԱՎԱՏԱՅՑԱԼՆԵՐԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Իրականությունը ապացուցում է մեկ այլ ավետարանականի սխալը: Հիսուսը չի ստել և հնարավոր չէ, որ նա ասի այն խոսքերը, ինչ նրան են վերագրում ավետարանականները այս հատվածների մեջ:

Մարկոսի գրքի ավարտը հայտնում է, որ Հիսուսը իր աշակերտներին հայտնվեց խաչելությունից հետո: Այնուհետ նա ասաց նրանց. «Եվ այս նշանները կուղեկցեն նրանց, ովքեր հավատք են ընծայել, իմ անունից նրանք դուրս կմղեն սատանաներին, նրանք կխոսեն նոր լեզուներով, նրանք կարող են իրենց ձեռքը սողուններ վերցնել և եթե նրանք ըմպեն ցանկացած մահացու թույն, չեն վնասվի, նրանք կդնեն իրենց ձեռքերը հիվանդի վրա և նրանք կբժշկվեն»: (Մարկոս 16/17-18)

Իմաստային առումով, Մարկոսը ասում է, որ Հիսուսը ասել է իր աշակերտներին. «Հավատք ընծայեք Աստծուն: Ճշմարիտ ես ասում եմ ձեզ, ով ասի իր լեռանը «Անցիր և ծովը ընկիր» և կասկած չունի իր սրտի մեջ, հավատացեք, որ ինչ նա ասում է կիրականանա, այն տեղի կունենա նրա համար»: (Մարկոս 11/22-23)

Ի լրացում, Մատթեոսի գիրքը ասում է. «Եվ ինչ դուք խնդրեք աղոթքի մեջ, դուք կստանաք, եթե դուք հավատք ունեք»: (Մատթեոս 21/22)

Երբ մի տղամարդ մոտեցավ Հիսուսին և խնդրեց նրան բժշկել իր որդուն ընկնավորությունից, նա ասաց. «Մակայն, եթե դուք ի վիճակի եք որևէ բան անել, գթա մեզ և օգնիր: Եվ Հիսուսը ասաց նրան. «Եթե դու ի վիճակի ես. Ամենը հնարավոր է յուրաքանչյուրին, եթե նա հավատք է ընծայում»: Անմիջապես, զավակի հայրը ողբաց և ասաց. «Ես հավատք եմ ընծայում, օգնիր իմ անհավատությանը»: (Մարկոս 9/22-24) Հիսուսը ստիպեց նրան ընկալել, որ հավատացյալները կարող են հրաշք գործել, բոլոր տեսակի հրաշքներ: Ուստի, Հիսուսը խնդրեց նրան

հավատք ընծայել, որպեսզի բժշկի նրա որդուն: Տղամարդը խոսք տվեց հավատալ և Հիսուսը բժշկեց նրա որդուն, քանի որ տղամարդը դեռ հավատացյալ չէր:

Հովհաննեսը Հիսուսին մեջ բերեց ասելով. «Ճշմարիտ, ճշմարիտ ես ասում եմ ձեզ, ով հավատք ընծայի ինձ, նույնպես կանի այն, ինչ ես եմ անում և ավելի լավ արարքներ, քան այն ինչ կանենք»: (Հովհաննես 14/21) Ուստի, յուրաքանչյուր հավատացյալ կարող է գործել ազդեցիկ հրաշքներ, ինչպիսիք են Հիսուսինը, ինչպես հանգուցյալի վերակենդանացումը և տկարի բժշկությունը և փորձը լավագույն ապացույցն է:

Նրանք, ովքեր կասկածի տակ են դնում այս փորձի հաջողությունը պետք է ընթերցեն հետևյալ տողերը, որոնք գրառել է Հայր Մաթթա Ալմիսկիինը: Նա ասում է. «Ծնկի եկեք և հավատքի անկեղծ սրտեր տվեք Հիսուսի խոստումով և դուք կտեսնեք, թե ինչպես են կույրերը տեսնում, խուլերը լսում և վերջույթները քայլում, վագում և պարում: Բոլոր տեսակի ախտերը կարելի է բժշկել նույնիսկ խրոնիկ, քաղցկեղը, լյարդի ցեռոզը և երիկամների անբավարարվածությունը և սրտի հիվանդությունը, քանի որ Հիսուսը Հիսուս է, երեկ, այսօր և հավերժ»:⁶⁷

Նրանք, ովքեր հավատք են ընծայում այս հատվածների սրբությանը և ի վիճակի չեն հրաշքներ գործել, հավատք չունեն: Մատթեոսը խոսում է աշակերտների մասին, ովքեր եկան անհատականորեն եկան Հիսուսի մոտ որպեսզի հարցնեն նրան, թե ինչու են նրանք ձախողել բորոտի բժշկությունը: Նա պատասխանեց նրանց. «Քանի որ ճշմարիտ, ես ասում եմ ձեզ, եթե դուք մանանեխի չափով հավատք ընծայեք, դուք կասեք լեռանը. «Շարժվիր այստեղից այնտեղ» և այն կշարժվի և

⁶⁷ Մատթեոսի Ավետարանը, Հայր Մաթթա Ալմիսկիին էջ.514

անհնար ոչինչ չի լինի ձեր համար»: (Մատթեոս 17/20) Ուստի, յուրաքանչյուր հավատացյալ կարող է հանգուցյալին հարություն տալ, բժշկել հիվանդին, դուրս բերել սատանաներին, սակայն, եթե նա ձախողի դա, նա հավատացյալ չէ:

Այս հատվածները խոսում են հրաշքների մասին, որոնք կարող են գործել հավատացյալները: Արդյո՞ք գոյություն ունի որևէ հրաշք, որը տեղի ունեցավ նրանց կյանքում, ովքեր հավատք են հայտնում Քրիստոսին:

Արդյո՞ք եկեղեցու հայրերը, ինչպես նաև հավատարիմները գործել են նմանատիպ հրաշքներ կամ ավելի լավ, քան Քրիստոսը, արդյո՞ք նրանք վերակենդանացրել են հանգուցյալին, բժշկել հիվանդին, արդյո՞ք նրանք տիրապետել են լեզուների և խոսել են, կամ արդյո՞ք նրանք չեն հանդիսանում հավատացյալներ և ձախողել են գործել նմանատիպ հրաշքներ:

Ահմեդ Դիդաթի և Շվեդիայի գլխավոր քահանա Սթենլի Սջոբերգի միջև տեղի ունեցած բանավեճի ընթացքում հանդիսատեսներից մեկը ոտքի կանգնեց և ընթերցեց Մարկոսի ավետարանի մի հատված պատվելի Սջոբերգին (Մարկոս 16/16-18) Այնուհետ տղամարդը խնդրեց նրան ըմպել մեկ շիշ թույն ասելով. «Ընայիր այս մահացու թույնը, սակայն դու չես մահանա, որովհետև դու հավատք ես ընծայում Հիսուսին և դու ունես ճշմարիտ հավատք»:

Այնուհետ Սջոբերգի դեմքի արտահայտությունը փոխվեց և նա կմկմալով ասաց. «Մենք չենք մահանա, եթե մենք ըմպենք թույնը: Սա տարօրինակ է: Ես հավատք եմ ընծայում Աստծուն և Սուրբ Հոգուն: Սուրբ Հոգին ասում է մեզ, թե ինչ կպատահի մեզ հետ: Երեսուն օր առաջ իմ կինը ասաց ինձ. «Սթենլի, զգուշացիր, ինչ որ մեկը կթունավորի քեզ»... Ես տեսնում եմ քո մեջ գտնվող սատանան, ես ցուցադրության ցանկություն չունեմ...»:

Այնուհետ, նա վերցրեց թույնը և լցրեց այն բույսերի զամբյուղի մեջ:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ԱՐԱԳ ՊԱՐԳԵԱՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՅՍ ԿՅԱՆՔՈՒՄ

Իրականությունը և կյանքը կրկին ապացուցում է մեկ այլ ավետարանականի սխալը: Մարկոսը նշում է, որ Պետրոսը ասում է Հիսուսին. «Տեսեք, մենք լքել ենք ամեն ինչ և հետևել ենք քեզ»: Հիսուսը ասում է. «Ճշմարիտ, ես ասում եմ ձեզ, գոյություն չունի որևէ մեկը, ով լքել է տունը կամ եղբայրներին կամ քույրերին կամ մորը կամ հորը կամ զավակներին կամ երկիրը հանուն ինձ և ավետարանի, ով չի ստանա հարյուրապատիկը այժմ և այնուհետ, տներ և եղբայրներ և քույրեր և մայրեր և զավակներ և երկրներ հալածանքներով և զալիք դարաշրջան, հավերժ կյանք»:(Մարկոս 10/28-30) Մատթեոսի գրքի մեջ «Կստանա հարյուրապատիկը և կժառանգի հավերժ կյանք»:(Մատթեոս 19/29) Ղուկասի գրքի մեջ «կստանա բազմաթիվ անգամ ավելին, այս ժամանակ»:(Ղուկաս 18/30)

Գիտնականները չեն ընկալում, թե ինչպես ստանալ այս պարզևները, ինչպե՞ս են կարող մարդիկ ունենալ շատ մայրեր և հայրեր ... Եթե ընկալումը, որ ծնողները և եղբայրները և մայրերը փոխաբերական արտահայտություն են, ապա ինչպես ընկալել դաշտերի և կանանց պարզևը: Ե՞րբ ենք մենք տեսել, թե ինչ է տեղի ունեցել նրանց հետ, ովքեր լքել են իրենց տները Քրիստոնեություն քարոզելու համար: Նրանք լքում են իրենց մայրերին, իրենց քույրերին և իրենց գումարը: Ե՞րբ են նրանք ստացել հարյուրապատիկ պարզև:

Տարբերակը պարզորեն խոսում է «հալածանքներով», երկրային պարզևի մասին և որը տեղի կունենա «այդ ժամանակ» և այնուհետ հանդերձյալ կյանքի հավերժ կյանք:

Այս տարբերակը սուտ է, եթե դա ճիշտ լիներ, մարդիկ կշտապեին պատասխանել կանչին և փորձը կբացահայտեր փաստեր և բաներ, որպեսզի մարդիկ նրանց համար մրցեն և պայքարեն միմյանց հետ:

Ամեն դեպքում, Հայր Մաթթա Ալմիսկիինը նկարագրեց խոստումը տարօրինակ սիմվոլիզմով: Նա ասում է. «Հոր փոխարեն, Հիսուսը կտա նրան երկրային հոր որդու հոգին և մոր փոխարեն կզգա եկեղեցու մայրությունը: Կնոջ փոխարեն այստեղ փոխանակում են տղամարդկանց և կանանց միմյանց կարիք ունենալու զգացումը... երկնքի կարիք դարձավ ծնունդ տալ հոգով զավակներին, ովքեր ժառանգում են երկնային արքայությունը: Ինչպես նաև զավակների կարոտը դառնում է բաղձանք նրանց համար, որպես Աստծո զավակների»:⁶⁸

ԱՐԴՅՈ՞Ք ԵՐԿԻՐԸ ԳՆՂԱՁև Է, ԹԵ ՀԱՐԹ

Հայտնության գիրքը խոսում է Հովհաննեսի տեսիլքի մասին, երբ նա երկիրը հարթ տեսավ չորս անկյուններով և յուրաքանչյուր անկյունում կանգնած հրեշտակ: Հովհաննեսը ասում է. «Դրանից հետո, ես տեսա չորս հրեշտակներ, ովքեր կանգնած էին երկրի չորս անկյուններում, պահելով երկրի չորս քամիները, որպեսզի ոչ մի քամի չփչի երկրի կամ ծովի կամ ընդդեմ ծառի»: (Հայտնություն 7/1) Հովհաննեսը կրկին նշում է երկրի չորս անկյուններ, երբ նա ասում է. «Եվ երբ հազարավոր տարիներ ավարտվեն, Մատանան դուրս կգա իր գնդանից: Եվ, դուրս կգա ստելու ազգերին, որոնք երկրի չորս անկյուններում են»: (Հայտնություն 20/7-8)

Մատթեոսը հաստատեց երկրի այս ընկալումը, երբ խոսեց Քրիստոսին ուղղված սատանայի փորձության մասին: Երբ սատանան ցանկություն հայտնեց ցույց տալ Հիսուսին երկրի

⁶⁸ Մատթեոսի Ավետարանը Հայր Մաթթա Ալմիսկիին էջ.553

բոլոր թագավորությունները, նա տարավ նրան ամենաբարձր լեռը և ցույց տվեց երկրի բոլոր թագավորությունները: «Կրկին, սատանան տարավ նրան ամենաբարձր լեռը և ցույց տվեց նրան աշխարհի բոլոր թագավորությունները»: (Մատթեոս 4/8)

Նա ի վիճակի էր տեսնել բարձր լեռան վրայից, որը պետք որ այդպիսին լիներ, եթե երկիրը հարթ էր, սակայն հնարավոր չէր այն դեպքում, երբ երկիրը գնդաձև էր, ինչպես մենք տեղյակ ենք:

ԵՐՈՐՐԴ.ՄԵԱԼՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՑՈՒՑԵԼ Է ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանականությունը ապացուցել է գոյություն ունեցող սխալներ, որոնք ոգեշնչություն չեն: Բանականությունը կարող է գիտակցել, որ դրանք սխալ են և գիտակցեն Ամենաբարձրյալ Ալլահի օրենքների բնույթի հեղինակների տգիտությունը:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՐԿՆՔԻ ԱՍՏՂԸ

Մատթեոսը նշեց Մագիի պատմությունը, ով եկավ Քրիստոսի մոտ, երբ նա ծնվեց, որպեսզի երկրպագի նրան: Նա ասաց. «Այժմ, երբ ծնվեց Հիսուսը Բեթհեղեմում, Հուդայի Հերոդոտոս արքայի կառավարության օրոք, տեսեք, որ արևելքի իմաստունները եկան Երուսաղեմ ասելով. «Որտե՞ղ է նա, Հրեաների արքան: Քանի որ մենք տեսանք նրա աստղը, երբ այն բարձրացավ և եկանք երկրպագելու նրան»...նրանք շարունակեցին իրենց ճանապարհը: Եվ տեսեք, աստղը, որը նրանք տեսել են բարձրանալիս, առաջնորդում էր նրանց մինչ այն վայրը, որտեղ ծնվել էր մանուկը: Երբ նրանք տեսան աստղը, նրանք մեծ հրճվանք ապրեցին»: (Մատթեոս 2/1-10)

Բազմաթիվ պատճառաբանությունների շնորհիվ բանականությունը ժխտում է այս պատմությունը:

- Մատթեոսը խոսում է շարժվող աստղի և նրա շարժումների մասին – չնայած այն բավական հեռու է, երկրից հնարավոր է տեսնել այն, նշելով Երուսաղեմի որոշակի տարածքը, որոշակի տունը, որտեղ գտնվում է Քրիստոսը: Այնուհետ աստղը կանգնում է, քանի դեռ երկնքում է: Ինչպե՞ս է այն շարժվում, ինչպե՞ս է այն ուղղորդում նրանց տուն, ինչպե՞ս է այն կանգ առնում և ինչպե՞ս են նրանք տեսնում ամենը: Սրանք անպատասխան հարցեր են:

- Ինչպե՞ս կարող էր Մագին իմանալ Քրիստոսի և նրա աստղի մասին, եթե նրանք նույնիսկ չգիտեին Աստծուն: Ինչպե՞ս էին նրանք կարող տարածվել մարգարեի առջև, որի կրոնին նրանք հավատք չէին ընծայում: Այս ամենը սուտ է, որովհետև ոչ ոք հնագույն Մագիից և նրանց պատմաբաններից չնշեցին այնպիսի բան, ոչ էլ այլ ավետարանականներ, ներառյալ Ղուկասը, ով ճշգրտորեն հետևեց ամենին:

- Այնուհետ, ինչու՞ Մագի եղբայրը երկար ճանապարհորդում է, արդյո՞ք այդ ուղղակի նրան խոնարհվելու, նվերներ տալու և այնուհետ վերադառնալու համար էր:

- Հատվածը խոսում է նորածնի հանդեպ Հերոդոտեսի հետաքրքրության մասին և որ նա մտադրվել էր սպանել նրան: Նա խնդրեց Մագիին պատմել իրեն, եթե նրանք գտնեն նորածնին, այսպիսով նա նույնպես կարող էր խոնարհվել նրան: Մագին երագում էր, որ նրանք չեն վերադառնա Հերոդոտոսի մոտ և նրանք այդպես վարվեցին, որովհետև, եթե Հերոդոտոսը հետաքրքրվեր, նա կարող էր նրանց հետ Բեթհեղեմ գնալ, որը մոտիկ էր Երուսաղեմին, կամ նա կարող էր իր մարդկանց

ուղարկել նրանց հետ, քանի որ խնդիրը շատ հրատապ էր նրա համար:

- Մատթեոսը նշեց Հերոդոտոսի նորածինների սպանողը, այն բանից հետո, երբ Մագին հեռացավ, մինչ նա կարող էր գտնել նորածնին: Այս պատմությունը կեղծ է, որովհետև պատմաբաններից ոչ մեկը անկախ կարևորության, չի նշել այս իրադարձությունը: Այստեղ մենք պետք է նշենք, որ ըստ պատմական աղբյուրների մեծն Հերոդոտոսը մահկանացուն կնքեց Հիսուսի ծնունդից չորս տարի առաջ:

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՄՏՐՈՒԿԻ և ԱՎԱՆԱԿԻ ՀԵԾՆԵԼԸ

Միտքը չի կարող ընկալել այն է, ինչ ասել է Մատթեոսը, երբ խոսել է Քրիստոսի Երուսաղեմ մտնելու մասին: Նա ասում է. «Նրանք բերեցին ավանակ և մտրուկ և դրեցին իրենց թիկնոցները և նա, Քրիստոսը հեծնեց »: (Մատթեոս 21/7), Քրիստոսը չէր կարող հեծնել ավանակը և մտրուկը միաժամանակ: Դա սխալ և սուտ է, ըստ որի Մատթեոսը ցանկություն ուներ լրացնել Թորայի մարգարեությունը: «Մա տեղի է ունեցել լրացնելու այն, ինչ խոսել էր մարգարեն, ասելով. «Ասացեք Չիոնի դաստերը», Տես, ձեր արքան գալիս է ձեզ, խոնարհ և հեծած ավանակ և մտրուկ, քուռակ մի բեռնակիր անասուն»: (Մատթեոս 21/4-5)

ՄԱՏԹԵՈՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՊՎԱԾ ԵՆ ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նմանապես, միտքը չի կարող ընդունել հրաշքները, որոնց մասին ասել է Մատթեոսը կապված Քրիստոսի մահվան հետ: Նա ասում է. «Եվ ավանդեց իր հոգին: Եվ տես, տաճարի վարագույրը պատռվեց երկու մասի, վերից վար: Եվ երկիրը ցնցվեց և ժայռերը ձեղրվեցին: Նույնպես բացվեցին շիրիմները:

Եվ շատ սրբերի մարմիններ, ովքեր քնած էին արթնացան: Եվ, հարությունից հետո դուրս գալով շիրիմներից, նրանք գնացին սուրբ քաղաք և հայտնվեցին շատերին»: (Մատթեոս 27/50-53)

Այնուհետ, ի՞նչ պատահեց նրանց հետ, արդյո՞ք նրանք վերադարձից հետո ամուսնացան, արդյո՞ք նրանք վերադարձան իրենց տները, կամ դրանից հետո կնքեցին մահկանացուն: Ո՞րն էր Հրեաների, Պիղատոսի և աշակերտների հակազդեցությունը, երբ տեղի ունեցավ այս մեծ իրադարձությունը:

Պատասխանը «ոչինչ» է, որովհետև ոչ Մատթեոսը, ոչ էլ նրանք, ովքեր պատմում են այս հրաշքների մասին, պատասխանեցին այս հարցերին: Եթե այս հրաշքները իրական էին, յուրաքանչյուրը պետք է խոսի այդ մասին և մարդիկ պետք է հավատք ընծայեն Քրիստոսին: Հայր Քեննինգսերը ասում է. «Մենք չպետք է ծաղրենք, որովհետև Մատթեոսի մտադրությունը շատ հարգալից էր, նա իր գրառումների մեջ ներառում էր հին պատմության բանավոր խոսքերը, սակայն պատմությունը մինչ այժմ համապատասխանում է Հիսուս Քրիստոսին, աստղին»:

Նորթոնը, ում կոչում են Ավետարանի պահապան, ասում է. «Այս պատմությունը կեղծ է և հնարավոր է, որ այս պատմությունները տարածված էին Հրեաների մեջ Երուսաղեմի կործանումից հետո: Միգուցե ինչ որ մեկը գրառել է այն Մատթեոսի գրքի կրկնօրինակի երբայերեն պատճենի լուսանցքում, այնուհետ հեղինակը ներառել է այն տեքստի մեջ և թարգմանիչը այդպես էլ թարգմանել է այն»:

Միգուցե գոյություն ունեն շատ հատվածներ, որոնք գրառվել են Նոր Կտակարանի լուսանցքներում, որոնք էլ սխալմամբ ներառել են տեքստի մեջ: Ինչպե՞ս ենք մենք կարող գտնել այս կեղծ հատվածները և գրքից վերցնել դրանք:

Կասկած չկա, որ եկեղեցու մարդիկ, ովքեր քողարկել են իրենց մտքերը ճշմարտությունից, ժխտել են ընդունել այն փաստը, որ Ավետարանը սխալներ ունի, որովհետև Սուրբ Հոգին սխալ չի գործում: Մինչ նրանք, ովքեր հարգանք են տաձում իրենց նկատմամբ կարող են ասել, որ այս գիրքը մարդկային է, ոչ թե Աստծո խոսք, իսկ վկայությունը արդեն ակնհայտ է:

ՆՈՐ ԿԱՏԿԱՐԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զարմանալի է, թե որտեղից են հայտնվել ավետարանի փոփոխությունները: Արդյո՞ք դրանք ավետարանականներն էին, թե նամակաների հեղինակները, կամ դպիրները, ովքեր կառավարում են տեքստերը ըստ իրենց դավանանքի, կամ նրանցից, ովքեր աշակերտների անձնական գրառումները սրբացրել են կամ բոլորը միասին վերցրած: Միգուցե վերջինս հանդիսանում է ճիշտ պատասխանը:

ԱՌԱՋԻՆ. ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԴՅՈ՞Ք ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԱԶՆԻՎ ԵՆ ԳՏՆՎԵԼ, ԵՐԲ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԵԼ ԵՆ ՄԻՄՅԱՆՑԻՑ

Ինչպես մենք նշել ենք անժխտելի է, որ Ղուկասը գրառել է Մարկոսի գրքի տեքստերի 51%, մինչդեռ Մատթեոսը 90%: Արդյո՞ք Մատթեոսը և Ղուկասը ազնիվ էին, երբ կրկնօրինակում էին Մարկոսից, կամ միգուցե նրանք կրկնօրինակում էին ըստ իրենց ցանկության:

Ճշմարտությունը այն է, որ նրանք երկուսն էլ կրկնօրինակել են Մարկոսին ըստ իրենց ցանկության, առանձնապես Մատթեոսը, ով միշտ չափազանցում էր իր կրկնօրինակած իրադարձությունները, որոնք համապատասխանում էին Քրիստոսի անձին, կամ փոխանցում էր Թորայի մարգարեության լրացումը, որն էլ չէր կարող փոխանցել Մարկոսի

պատմությունը: Գիտնականները նշել են բազմաթիվ օրինակներ, ինչպիսիք են.

Մարկոսը խոսում է խաչելության մասին. «Եվ նրանք առաջարկեցին նրան գինի, որը խառնված էր զմուռտով»: (Մարկոս 15/23)

Ամեն դեպքում, Մատթեոսը կրկնօրինակեց Մարկոսից և փոփոխեց տեքստը, նա ասում է. «Նրանք առաջարկեցին նրան թթու գինի ըմպել, որը խառնված էր լեղիով»: (Մատթեոս 27/34) Հայտնի է, որ թթու գինին, քացախը և գինին տարբեր են: Մատթեոսը նկատի ուներ փոփոխել Թորայի հայտնած մարգարեությունը, «Նրանք ինձ թույն տվեցին սնունդի փոխարեն և ծարավ հագեցնելու համար տվեցին ինձ թթու գինի ըմպել»: (Մաղմուսներ 69/21) Նա փոփոխեց «գինի» խոսքը «թթու գինով»:

Մարկոսը ասում է. «Ով կատարում է Աստծո կամքը, իմ եղբայրն է և քույրը և մայրը»: (Մարկոս 3/35)

Մինչդեռ Մատթեոսը կրկնօրինակեց այն ինչպես «Քանի որ նա, ով կատարում է Երկնքում գտնվող իմ Հոր կամքը, իմ եղբայրն է և քույրը և մայրը»: (Մատթեոս 12/50), «իմ հայրը» խոսքերը ավելացրել են ելնելով աստվածաբանական պատճառներից:

Նույնը առկա է մեկ այլ տարբերակի մեջ: Երբ Քրիստոսը հարցրեց իր աշակերտներին, թե ինչ են նրանք կարծում նրա մասին, Պետրոսը պատասխանեց. «Դու Քրիստոսն ես» (Մարկոս 8/29) Ամեն դեպքում Մատթեոսը փոփոխեց Պետրոսի պատասխանը: «Դու Քրիստոսն ես, կենդանի Աստծո Որդին»: (Մատթեոս 16/16)

Մատթեոսի փոփոխության օրինակ է, երբ նա Քրիստոսի մասին Մարկոսի խոսքերը, որ նա հրաշքներ չի գործել Գալիլեայում: Նա ասում է. «Եվ նա չէր կարող գործել որևէ հզոր աշխատանք

այնտեղ, բացառությամբ, որ նա դրեց իր ձեռքերը մի քանի տկար մարդկանց վրա և բժշկեց նրանց: Եվ նա զարմացավ, ի շնորհիվ նրանց անհավատության»: (Մարկոս 6/5-6) Նա չի գործել որևէ մեկ հրաշք, սակայն նա բժշկեց մի քանի տկար մարդկանց, սակայն մի քանի հոգու բժշկությունը բավարար չէր հավատք ընծայելու և նա զարմանում էր, որովհետև նրանք հավատք չեն ընծայել:

Ամեն դեպքում, Մատթեոսը չի խրախուսում այն գաղափարը, որ Քրիստոսը ոչ մի հրաշք չի գործել: Նա ասում է. «Եվ նա այնտեղ չի գործել շատ հզոր աշխատանքներ, ի շնորհիվ նրանց անհավատության»: (Մատթեոս 13/58) Նա գործել է հրաշքներ, սակայն ոչ շատ և նա արդարացրել է, որ Հիսուսը չի ներկայացրել շատ հրաշքներ, ի շնորհիվ նրանց անհավատության, անհավատությունը հանդիսացավ անարտադրողականության պատճառ, մինչդեռ Մարկոսի մոտ այն հանդիսանում էր ուղղակի պատճառ:

Ղուկասը, նույնպես փոփոխել է այն, ինչ կրկնօրինակել է Մարկոսից: Մարկոսը, ով ըստ Քրիստոնյա աղբյուրների, տրամադրում է Քրիստոսի իրական պատկերը, նշում է խաչելության վերջին խոսքերը: Այն հանդիսանում էր հուսահատ անհատի ճիշդ: «Իմ Աստված, իմ Աստված, ինչու՞ ես դու ինձ լքել»: (Մարկոս 15/34)

Ամեն դեպքում, Ղուկասը, - ինչպես Ուիլ Դյուրանթը հավատք է ընծայում, - չի խրախուսում Մարկոսի նախադասությունը, նա հավատք է ընծայում, որ այն չի համապատասխանում Փրկիչ Քրիստոսի Պողոսի ուսմունքներին, ով եկել էր խաչվելու և նա փոփոխեց դա: «Հայր, քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»: (Ղուկաս 23/46)

Մատթեոսը փոփոխեց շատ հատվածներ, որոնք կրկնօրինակել էր Մարկոսից: Նա ավելացրեց իր կարծիքը, որն էլ պետք է

բարձրացնել Բրիստոսի աստիճանը: Մարկոսը նշեց մեղսալի հոգիներով մարդկանց, ում Հիսուսը բժշկեց և դուրս բերեց սաստանաներին և ստիպեց, որ նրանք մտնեն խոզերի մեջ: Նա ասում է. «Նրանք եկան ծովի մյուս կողմը, Գերասենեսի երկիրը: Եվ երբ Հիսուսը դուրս եկավ նավակից, անմիջապես նրան հանդիպեց մեղսալի հոգով տղամարդ շիրիմից... Եվ երբ նա տեսավ Հիսուսին, շտապեց և ծնկի իջան նրա առջև: Եվ բարձրաձայն ողբալով ասաց. «Ի՞նչ ես անելու ինձ հետ Հիսուս, Ամենաբարձրյալ Աստծո Որդի: Ես ուրացել եմ քեզ Աստծով, մի տանջիր ինձ»: ... Այդժամ, խոզերի մեծ քանակ սնվում էին սարալանջին և նա խնդրեց նրան ասելով. «Ուղարկիր ինձ խոզերի մոտ, եկ մտնեմ»: Այսպիսով նա նրան թույլատրեց: Եվ մեղսալի հոգին դուրս եկավ և մտավ խոզերի մեջ»: (Մարկոս 5/1-13)

Մատթեոսը մեկի փոխարեն խոսեց երկուսի մասին: Նա ասում է. «Երբ նա հասավ մյուս կողմը, Գադարենների երկիր, սաստանա ունեցող երկու տղամարդ հանդիպեցին նրան, դուրս գալով շիրիմներից, կատաղի... Եվ տես, նրանք ողբացին. «Ի՞նչ ես դու անելու մեզ հետ, օվ Աստծո Որդի: Արդո՞ք դու եկել ես այստեղ տանջելու մեզ ժամանակից շուտ»: Այդժամ խոզերի երամակը սնվում էին որոշակի հեռավորության վրա նրանցից: Եվ սաստանաները խնդրեցին նրան ասելով. «Եթե դու մեզ դուրս հանես, ուղարկիր մեզ խոզերի հոտը»: Եվ նա ասաց նրանց. «Գնացե՛ք»: Այսպիսով, նրանք դուրս եկան և գնացին խոզերի մեջ»: (Մատթեոս 8/28-32)

Մատթեոսի Ավետարանի մեկնաբանության մեջ քահանա Թադրոս Յակոբ Մալաթին փորձեց հաշտեցնել այդ երկու պատմությունները: Նա ասում է. «Թվում է, որ երկու մարդկանցից մեկը այնտեղ հայտնի անհատ էր և ակնհայտ խելագար, ուստի Մատթեոսը և Ղուկասը կենտրոնացան նրան, արհամահելով մյուսներին»: Երկուսից մեկի հայտնիությունը

ստիպեց նրանց արհամարհել նշելու Հիսուսի հրաշքը մյուսներին բժշկելու, որովհետև նա խելագար էր, այլ ոչ թե հայտնի:

Մարկոսը և Ղուկասը խոսեցին կույրի բժշկության մասին, Մարկոսը ասում է. «Եվ նրանք եկան Երիթով: Եվ քանի որ նա հեռանում էր Երիթովից իր աշակերտների հետ և մեծ ամբոխով, Բարթիմեուսը, կույր մուրացիկը, Թիմաուսի որդին, նստած էր ճամփի եզրին: Եվ, երբ նա լսեց, որ նա Հիսուս Նագովրեցին էր, նա սկսեց բղավել և ասել. «Հիսուս, Դավիթի Որդի, գթա ինձ»... Եվ Հիսուսը ասաց նրան, «Ի՞նչ պետք է ես անեմ»: Եվ կույրը ասաց նրան. «Ռաբբի, թույլ տուր վերականգնել իմ տեսողությունը»: Եվ ասաց նրան, «Շարունակի, քո հավատքը քեզ օգնել է»: Եվ անմիջապես, նա վերականգնեց իր տեսողությունը և հետևեց նրան»: (Մարկոս 10/46-52) Տես (Ղուկաս 18/35-24)

Մատթեոսը պատմեց միևնույն պատմությունը, սակայն երկու կույրերի մասին: Նա ասում է. «Եվ քանի որ նրանք հեռացան Երիթովից, մեծ ամբոխի հետևեց նրան: Եվ, տես երկու կույր տղամարդ նստած էին ճամփեզրին և երբ նրանք լսեցին, որ Հիսուսը անցնում է, նրանք բղավեցին. «Տեր, գթա մեզ, Դավթի Որդի»... Հիսուսը կանչեց նրանց և ասաց. «Ի՞նչ էք ցանկանում, որ ես անեմ ձեզ համար»: Նրանք ասացին նրան, «Տեր, թող մեր աչքերը բացվեն»: Եվ Հիսուսը խղճմտանքով դիպչեց նրանց աչքերին և անմիջապես նրանք վերականգնեցին իրենց տեսողությունը և հետևեցին նրան»: (Մատթեոս 20/29-34) Մատթեոսը չափազենցնում է և փոփոխում է այն,ինչ կրկնօրինակել է Մարկոսից:

Այստեղ մենք պետք է նշենք, որ Ղուկասը պատմության ժամանակագրությունը տալիս է մինչ Քրիստոսը մուտքը Երիթով: Նա ասում է. «Երբ նա մոտեցավ Երիթով, մի կույր տղամարդ նստած էր ճամփեզրին մուրալով»: (Ղուկասը 18/35)

Արդյո՞ք Հիսուսը բժշկեց կույրին, մինչ նա մտավ Երեքո, թե երբ լքեց այն:

Ավետարանականները տալիս են մեկ այլ փոփոխություն, որը կապված է այս հրաշքի վայրի հետ, արդյո՞ք ըստ Մարկոսի, այն Գերասս երկրն էր (Մարկոս 5/1 և Ղուկաս 8/26) կամ արդյո՞ք այդ Գադարան էր ըստ (Մատթեոս 8/28): Երկու անուններն էլ նշում են երկու տարբեր վայրեր:

Առաջին – ըստ Սուրբ գրառումների հանրագիտարանի – այժմ «տեղադրված է Օմ Քայսում, Յարմուկ դաշտավայրի հարավային հատվածի սարալանջին, որը կոչվում է «Համմա», որը գտնվում է վեց մղոն Գալիլեայի Ծովի հարավ-արևելյան հատվածում»:

Մինչդեռ Գերասս երկիրը տեղակայված է Ջադրահից վաթսուն կիլոմետր հարավ և Հռոմեական քաղաքի մնացորդները մինչ այժմ գտնվում են Ջերաշում, Հորդանանում: Երկու քաղաքների տեղակայությունը պարզ են յուրաքանչյուրի համար, ով դիտում է Սուրբ Աստվածանշի քարտեզները: Կարելի է տեսնել մեկ այլ կարևոր բան. Երկու քաղաքներն էլ չեն գտնվում ծովեզերքին, ուստի, նրանք չեն հանդիսանում այս հրաշքի ճշմարիտ վայրերը:

Գիտնականները չգիտեն ինչպես մոտեցնել այս երկու վայրերը: Հանրագիտարանի հեղինակները համամիտ են այն ենթադրությանը, որը ոչ մի ապացույց չունի: Նրանք ասում են. «Հաստատուն է, որ Ջեդրահի գերակայությունը- ինչպես շրջանի հիմնական քաղաք – երկարաձգվել է ծովի արևմտյան հատվածի ամբողջ տարածքով, ներառելով Գերասս քաղաքը»:⁶⁹

Այս ճկուն ուղղով, Գադարա և Գերասս քաղաքները դառնում են մեկ քաղաք:

⁶⁹ Սուրբ Գրեթի Հանրագիտարան, Գադարա

Մարկոսը մեզ պատմում է մտրուկի վրա Հիսուսի Երուսաղեմ գալստյան մասին: Նա ասում է. «Հիսուսը ուղարկեց իր երկու աշակերտներին: Եվ ասաց նրանց. «Գնացեք ձեր դիմացի գյուղը և անմիջապես երբ մուտք գործեք կգտնենք կապված մտրուկի, որը ոչ ոք չի հեծնել: Բացեք այն և բերեք...Եվ նրանք բերեցին մտրուկը Հիսուսին և շարտեցին իրենց թիկնոցները և նա հեծնեց այն»: (Մարկոս 11/1-7)

ՄինչՄատթեոսը չափազանցնում է պատմելով այս միևնույն պատմությունը, նա ասում է, որ Հիսուսը հեծնեց միաժամանակ և ավանակ և մտրուկ: Մատթեոսը ասում է. «Այնուհետ Հիսուսը ուղարկեց երկու աշակերտ ասելով նրանց. «Գնացեք ձեր դիմացի գյուղը և անմիջապես դուք կգտնեք կապված ավանակ և մտրուկ դրա հետ: Բացեք և բերեք ինձ...Նրանք բերեցին ավանակը և մտրուկը և դրեցին իրենց թիկնոցները և նա հեծնեց»: (Մատթեոս 21/1-7)

Մատթեոսը մեզ չի ցույց տալիս, թե ինչպես է Հիսուսը միաժամանակ ավանակ և մտրուկ հեծնել: Դա կարևոր չէ, կարևորը այն է, որ այն կարող է լրացնել Թորայի մարգարեությունը, որն էլ Ջաքարիայի գիրքն է: «Տեսեք, ձեր արքան գալիս է ձեզ մոտ. Արդար և փրկությամբ, նա համեստ է և ավանակ, մտրուկ, ավանակ և մտրուկ հեծնած»: (Ջաքարիա 9/9) և Մատթեոսը հայտնեց դա: (Մատթեոս 21:4)

Երբ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) խոսեց հարության օրվա մասին, նա ասաց, որ նա տեղյակ չէ, թե երբ է այն տեղի ունենալու: Մարկոսը ասում է. «Մակայն ինչ վերաբերում է այդ օրվան կամ ժամին, ոչ ոք տեղյակ չէ, ոչ էլ նույնիսկ երկնքի հրեշտակները, ոչ Ռդդին, սակայն միայն Հայրը»: (Մարկոս 13/32)

Մատթեոսը նույնպես փոփոխեց իրադարձությունները, որոնք ըստ իր երևակայության տեղի են ունեցել խաչվածի մահվան ընթացքում. «Եվ Հիսուսը բարձրաձայն կրկին բղավեց և

ավանդեց իր հոգին: Եվ տեսեք, տաճարի վարագույրը պատուվեց երկու մասի, վերից վար: Եվ երկիրը ցնցվեց և ժայռերը ճեղքվեցին: Շիրիմները նույնպես բացվեցին: Եվ շատ սրբերի մարմիններ, ովքեր ննջում էին, բարձրացան և դուրս գալով շիրիմներից հարությունից հետո, նրանք գնացին սուրբ քաղաք և հայտնվեցին շատերին»: (Մատթեոս 27/50-53)

Մատթեոսը ոչ պատմում է մեզ, թե ինչ են արել նրանք, ովքեր հարություն են առել, ոչ էլ մարդկանց հակազդեցության մասին այդ մեծ իրադարձությունների: Անկախ դրանց կարևորության, Մարկոսը չի նշել այդ մեծ իրադարձությունները: Եթե նրանք ճշմարիտ լինեին, նա չէր վարանի նշել: Ոչ Ղուկասը, ով գրառեց յուրաքանչյուր բան ճշգրտորեն, ոչ էլ Հովհաննեսը չնշեցին դրանք, որը նշանակում է, որ ամենը հանդիսանում է Մատթոսի երևակայությունը:

Ավետարանականները փոփոխեցին Հիսուսի խոսքերը, երբ մեջ բերեցին աշակերտներին ուղղված իր խոսքերը: Ըստ Ղուկասի, նա նրանց ասում է «Դուք ավելի մեծ արժեք ունեք, քան շատ ճնճղուկներ»: Եվ ես ասում եմ ձեզ յուրաքանչյուրը, ով ընդունում է ինձ մարդկանց առջև, Մարդու Որդին նույնպես կընդունի Աստծո հրեշտակների առջև, սակայն նա, ով ժխտում է ինձ մարդկանց առջև, կժխտվի Աստծո հրեշտակների մոտ»: (Ղուկաս 12/7-9) Ղուկասը կազմեց հրեշտակների առջև Հիսուսի ընդունելությունը և ժխտումը:

Նա համամիտ չէ Մատթեոսի հետ, ով Աստծո, այլ ոչ թե հրեշտակների առջև կազմեց Հիսուսի ընդունելությունը և ժխտումը: Նա Հիսուսին մեջ է բերում ասելով. «Դուք ավելի մեծ արժեք ունեք, քան շատ ճնճղուկներ: Այսպիսով, յուրաքանչյուրը, ով ընդունում է ինձ մարդկանց առջև, ես նույնպես կընդունեմ իմ Հոր առջև, ով երկնքում է, սակայն նա, ով ժխտում է ինձ մարդկանց առջև, ես նույնպես կժխտեմ իմ Հոր առջև, ով

երկնքում է»: (Մատթեոս 10/31-33), ո՞ր խոսքերն է ասել Հիսուսը, թե մյուսը:

Մատթեոսի գրքի մեկնաբանության մեջ էջ.271 Ջոն Ֆենթոնը չէր կարող ժխտել փաստերը և ընդունել է պատմությունների փոփոխությունները: Փորձելով արդարացնել, նա ասում է.«Ավետարանների ձեռագրերը զգալիորեն փոփոխվել են այն հաստատվածներում, որտեղ նշել են Տիրոջ տիտղոսները»: Նա ընդունում է, որ առկա էին փոփոխություններ, սակայն նա մեղադրում է ձեռագրերի դպիրներին, ոչ թե հեղինակ Մատթեոսին:

Փաստորեն, ավետարանների հեղինակները, այլ ոչ թե դպիրները կազմեցին տեքստերի փոփոխությունը: Լրացումները միշտ առկա են Մատթեոսի գրքի մեջ, եթե դրանք առկա լինեին բնօրինակ ձեռագրերի մեջ, ապա չէին լինի Մատթեոսի գրքի մեջ: Գիտնական Քեյս Մանը ճիշտ էր, երբ ասաց. «Ղուկասը և Մատթեոսը դիտավորյալ կատարել են հարյուրավոր փոփոխություններ Մարկոսի գրքի տեքստի մեջ, որը ըստ կրոնական նպատակների, գտնվում էր նրանց լիազորության տակ»:

ԵՐԿՐՈՐԴ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՐԲ ՆՐԱՆՔ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԵՑԻՆ ԹՈՐԱՅԻ ԳՐՔԵՐԻՑ

Նոր Կտակարանի հեղինակները փոփոխեցին Թորայի գրքերը, երբ կրկնօրինակեցին այնտեղից.

- Պողոսը փոփոխեց տեքստը, երբ կրկնօրինակեց Սաղմոսների գրքից: Պողոսը ասում է.«Հնարավոր չէ մեղքերը քավել ցուլերի և այծերի արյամբ: Հետևաբար, երբ Քրիստոսը աշխարհ եկավ, նա ասաց.«Չոհաբերությունները և ընծաները ցանկալի չեն, սակայն մարմինը, որը դուք պատրաստել էք ինձ համար,

այրված և մեղքերի ընծաներով դուք ոչ մի հաճույք չեք ստանա»։ (Հրեաները 10/4-6)

Պողոսը կրկնօրինակեց Սաղմոսների գիրքը և փոփոխեց այն։ Սաղմոսների մեջ. «Ձոռաբերությունները և ընծաները ցանկալի չեն, սակայն դուք տվել եք ինձ բաց ընկալում։ Այրված ընծաներ և մեղքի նոխագներ չեն պահանջվում ձեզնից»։ (Սաղմոսներ 40/6) Նա փոփոխեց. «դուք տվել եք ինձ բաց ընկալում» արտահայտությունը «մարմին եք պատրաստել ինձ համար» արտահայտությամբ։

-Ավետարանականները նույնպես փոփոխեցին, քանի որ նրանք Թորային վերագրեցին այն, ինչ առկա չէր այնտեղ։ Մատթեոսը Քրիստոսի մասին ասում է. «Եվ նա գնաց և ապրեց քաղաքում, որը կոչվում է Նազարեթ, որպեսզի այն ինչ ասում էին մարգարեները հնարավոր լինի լրացնել. «Նրան կկոչեն Նազովրեցի»»։ (Մատթեոս 2/23) Մարգարեների գրքերի մեջ առկա չեն նմանատիպ բաներ։

Մատթեոսին պատկանող փոփոխությունը հաստատում է այն փաստը, երբ Ֆիլիպսը խոսեց Նազովրեցի Հիսուսի մասին Նաթանել աշակերտին, ով էլ զարմանք ապրեց, որ Քրիստոսը պետք է Նազարեթից գար։ «Նաթանելը ասաց նրան. «Արդյո՞ք որևէ բարիք կարող է գալ Նազարեթից»», (Հովհաննես 1/46), եթե մինչ այդ գոյություն ունենար Նազարեթի որևէ մարգարեություն, ապա նա չէր զարմանա։

Մեկնաբանելով այս տարբերակը, Ջեսյուֆ Փրիսթհուդի Հրատարակության տպագրիչները ասացին. «Մենք դժվարանում ենք տեղեկանալ, թե Մատթեոսը ճշգրտորեն որ հատվածը ի նկատի ունի»։ Ավելին, Սուրբ Աստվածաշնչի գիտնականները ասում են. «Հնագույն ժամանակաշրջանում Նազարեթը կարևոր դեր չուներ, ուստի, Հին Կտակարանը չի նշել այն, կամ

Հովսեփուսի կամ Եգիպտոսի, ասորերենի, իւթական արամերենի փյունիկացիների փաստաթղթերը այն չեն նշել մինչ Հիսուսի ծնունդը և առաջին անգամ այն նշել են Ավետարանի մեջ»:

- Փոփոխության մեկ այլ օրինակ է, երբ Հակոբը և Ղուկասը, Եղիա մարգարեի աղոթքների միջոցով, խոսեցին անձրևի պակասության մասին, նրանք ասում են, որ այն տևեց երեք տարի և վեց ամիս, փոփոխելով Նոր Կտակարանը, որը նշեց, որ անձրևը դադարեց նվազագույնը երեք տարի:Հակոբը ասում է. «Եղիան տղամարդ էր, մեր բնույթի և նա աղոթեց ջերմեռանդորեն, որպեսզի անձրև տեղի չունենա և երեք տարի և վեց ամիս երկրի վրա անձրև տեղի չունեցավ»: (Երեմիա 5/17) Ղուկասը համամիտ է նրա հետ և հայտնում է, որ Հիսուսը ասում է. «Ես ասում եմ ձեզ, Իսրայելում առկա էին շատ պատուհաններ Եղիա օրոք, երբ երկինքները փակվեցին երեք տարի և վեց ամիս և մեծ սով իջավ ամբողջ երկրի վրա:» (Ղուկաս 4/25)

Նրանք կրկնօրինակեցին և փոփոխեցին պատմությունը – ինչպես ես նշել եմ- Թագավորաց գրքից: Այն ասում է. «Այժմ, Եղիան ասում է ... չի լինի ոչ շաղ, ոչ էլ անձրև այս տարիների ընթացքում, բացառությամբ իմ խոսքով»: (Թագավորաց Գ 17/1)այնուհետ. «Շատ օրեր անց, Տիրոջ խոսքը եկավ Եղիային, երրորդ տարում, ասելով. «Գնա և ցույց տուր քեզ Ահաբին և ես երկիր անձրև կուղարկեմ»:(Թագավորաց Գ 18/1),երրորդ տարում անձրևեց, միգուցե երրորդ տարում,որը նշանակում է, որ անձրևը կանգ առավ նվազագույնը երեք տարի, ոչ թե երեք տարի և վեց ամիս, ինչպես նշել է Հակոբը և Ղուկասը:

- Պողոսը երկնքի նկարագրությունը, որը Աստված պատրաստել է հավատացյալների համար, վերագրում է

մարգարեների գրքերին: Նա ասում է. «Սակայն, ինչպես գրառվել է. «Ինչ ոչ մի աչք չի տեսել, ոչ էլ ունկ ունկնդրել, ոչ էլ մարդկային սիրտը երևակայել, թե ինչ է Աստված պատրաստել նրանց համար, ովքեր սիրում են նրան»»: (Կորնթացիներ Ա 2/9) Հին Կտակարանի մարգարեների գրքերի մեջ գոյություն չունի ոչ մի նմանատիպ տարբերակ կամ հատված:

- Իր ավետարանի հինգերորդ գլխի մեջ Մատթեոսը Հիսուսին է վերագրում այն, ինչ առկա չէ Թորայի մեջ: Նա ասում է. «Դուք լսել եք, որ այն ասում էր. «Դուք պետք է սիրեք ձեր դրացուն և ատեք ձեր թշնամուն»: Սակայն ես ասում եմ ձեզ. Սիրեք ձեր թշնամիներին և աղոթեք նրանց համար, ովքեր հալածում են ձեզ»: (Մատթեոս 5/43-44) Մատթեոսը անդրադարձել է տարբերակին Ղևիտացիների մեջ: «Դուք չպետք է վրեժ լուծեք կամ նեղանաք ձեր իսկ ժողովրդի զավակներից, սակայն, դուք պետք է սիրեք ձեր դրացուն ինչպես ձեզ. ես Տերն եմ»: (Ղևիտացիներ 19/18) Ոչ այս տարբերակը, ոչ էլ այլ որևէ մեկը, չեն նշում թշնամիների սիրո մասին. Մատթեոսը հայտնում է, որ այն, ինչ Հին Կտակարանի հնագույն գրքերի մեջ է, սուտ է և փոփոխություն: Ուստի, քահանա Սամուել Յուսուֆը ասում է. «Արդյո՞ք Աստված խնդրում է ատել: Կարելի է կարծել, որ սա տեղի է ունենում Հին Կտակարանի մեջ, սակայն գոյություն չունի ոչ մի նմանատիպ բան Աստծո պատվիրանների մեջ: «Համեմատեք Ղևիտացիներ 19/18 »»:70

Ավետարանականները մեջ են բերում Չաքարիայի մարգարեությունը, որը ասում է. «Հրճվիր խորապես, օվ Սիոնի դուստր: Բղավիր բարձրաձայն, օվ Երուսաղեմի դուստր: Տես, քո

⁷⁰ Հին Կտակարանի ներածությունը, Քահան Սամուել Յուսուֆ էջ.367

արքան գալիս է քեզ մոտ, առաքինի և որպես փրկություն, համեստ և ավանակ, մտրուկ և քուռակ հեծած»: (Ջաքարիա 9/9) Սակայն, սովորաբար, նրանք հարկ եղած դեպքում դժվարություն չեն գտել փոփոխելու խոսքերը: Մատթեոսը ասում է. «Ինչ խոսել է մարգարեն ասելով. «Ասա դու, Սիոնի դուստր, տես ձեր Արքան է գալիս ձեզ, հեզ և ավանակ հեծած և մտրուկ և քուռակ»»: (Մատթեոս 21/4-5) Մատթեոսը տեքստին շատ փոփոխություններ մտցրեց, նվազեցնելով և հեռացնելով այն, ինչը չի համապատասխանում Քրիստոսի անհատականությանը: Նա հեռացրեց «առաքինի և ունենալով փրկություն» արտահայտությունը, որովհետև նա գիտակցեց, որ Քրիստոսը սպասյալ Արքան չէ, ով առաքինի և հաղթական է և պահպանել է երկու բնույթները, հեզ և միաժամանակ ավանակ և մտրուկ հեծած:

Հովհաննեսը գործել է նմանապես և հեռացրել է այն, ինչ հեռացրել է Մատթեոսը և տեքստին ավելացրել է, որ Հիսուսը հեծնել է մեկ կենդանի, երկուսի փոխարեն: Նա տեսավ, որ միաժամանակ երկու կենդանի հեծելը չի համապատասխանում Հիսուսի հասուն անհատականությանը: Նա նույնպես փոխանցել է ուրախության և հաճույքի հայտարարված մարգարեությունը. «Խորապես հրճվիր, օվ Սիոնի դուստր» վախեցիր «Մի վախեցիր Սիոնի դուստր, տես քո Արքան գալիս է մտրուկ և ավանակ հեծած»: (Հովհաննես 12/15)

Պողոսը անգանիվ գտնվեց, երբ մեջ բերեց Իսահակի գրքից. «Քանի որ գրառվել է «Քանի դեռ ես գոյություն ունեմ, ասում է Տերը յուրաքանչյուրը ծունկ պետք է խոնարհի ինձ և յուրաքանչյուր շուրթ պետք է խոստովանի Աստծուն»»: (Հռոմեացիներ 14/11) Նա երկու անգամ փոխեց Հին Կտակարանի տեքստը, առաջինը երբ նա վերագրեց Աստծուն ասելով, որ նա գոյություն ունի: Երկրորդ, երբ նա ասաց, որ շուրթերը պետք է փառաբանեն Աստծուն, մինչդեռ Եսային

խոսում է լեզուների մասին, որոնք երդում կտան Աստծո անունով: Եսային ասում է. «Երդվում եմ անձով. իմ շուրթերից դուրս է եկել առաքինաբար խոսք, որը չի վերադառնա. «յուրաքանչյուր ծունկ պետք է խոնարհվի ինձ, յուրաքանչյուր շուրթ պետք է տա հավատարմության երդում»»: (Եսայի 45/23)

Ի լրացում, Մատթեոսը փոփոխեց Քրիստոսի նախահայրերին, նա հեռացրել է այն, ինչ նրան դուր չի եկել և այնուհետ փորձել ստել ընթերցողին: Մատթեոսը գիտակցեց, որ Յոհակիմ արքայի զավակներին արգելել են նստել Դավթի գահին, (տես Երեմիա 36/30-31), այսպիսով նա հեռացրեց իր անունը Քրիստոսի նախահայրերի ցանկից, վախ ունենալով, որ ընթերցողը կարող է տեղյակ լինել, որ Հիսուսին չեն սահմանի Դավթի գահին: Նա ասում է. «Եվ Յովսիան, Յեքոնասի հայրը և նրա եղբայրները Բաբելոն քաղաքի ժամանակ»: (Մատթեոս 1/11) Հայտնի է, որ Յեքոնասը Յոսիայի թոռն էր, ոչ թե որդին, նա հանդիսանում է արգելված արքա Յեհոյակիմի, Յոսիայի որդու որդին: (Տես Մնացորդաց Ա 3/14-15)

Ղուկասը հայտնում է, որ Շելահը հանդիսանում էր Քայնանի որդին, ով էլ հանդիսանում էր Արֆաքսադի որդին, ինչը տարբերվում է Թորայից: Ղուկասը ասում է. «Եբերը, Շելահի որդին, Քայնանի, որդին, Արֆաքսադի որդին»: (Ղուկաս 3/35-36) Ծննդոց գիրքը ասում է. «Արֆաքսադը հանդիսանում էր Շելահի հայրը»: (Ծննդոց 10/24) Այն դա հաստատում է հետևյալ գլխի մեջ, քանի որ ասում է, որ Արֆաքսադը 35 տարեկան հասակում ուներ իր Շելահ որդին: «Երբ Արֆաքսադը ապրել էր 35 տարի, նա հայրություն է արել Շելահին»: (Ծննդոց 11/12) (Տես Մնացորդաց Ա 1/18 և Մնացորդաց Ա 1/24) Թորան երբեք չի նշել Քայնան անունը, այն ինչ ասում է Ղուկասը փոփոխություն է, կամ նա հավատք է ընծայել, որ ավետարանները փոփոխված են, ուստի նա փոփոխել է այն:

Պատվելի Սամաան Քալիունը համամիտ է, որ առկա է փոփոխություն, սակայն նա համամիտ չէ պատասխանատուի հարցում: Նա հավատք է ընծայում, որ «Հին Կտակարանի Հրեաներ տարբերակը երբեք չի նշել Քայնան անունը, հնարավոր է որ այն պատահաբար ավելացրել են դպիրները»:⁷¹ Նա կարծում է, որ ոչ թե Ղուկասը, այլ դպիրն է պատասխանատու նմանատիպ փոփոխությունների համար: Ընթերցողը կարող է փոփոխությունը վերագրել յուրաքանչյուրին, դպիրին, կամ Ղուկասին սակայն, ես պնդում եմ, որ ընթերցողը պետք է համամիտ լինի Պատվելի Քալիունի և ինձ հետ այս հատվածի փոփոխության առաջացմանը համար:

Ղուկասը հայտնում է, որ Հիսուսը բացեց գիրքը և ընթերցեց նախադասությունը (Եսայի 61), որը մենք այսօր չենք կարող գտնել գրքի մեջ: Նա ասում է «Եվ մարգարե Եսայու փաթեթը տվեցին նրան: Նա բացեց փաթեթը և գտավ գրառության վայրը: Տիրոջ հոգին ինձ վրա է, որովհետև նա օժեց ինձ աղքատներին ավետելու: Նա ուղարկել է ինձ հայտնելու ազատություն գերիներին և բժշկելու կույրերի տեսողությունը, ազատագրել ճնշվածներին, հայտնել Տիրոջ շնորհի տարին»: (Ղուկաս 4/17-19) Նրա «կույրերի տեսողություն բժշկել, ազատագրել ճնշվածներին» արտահայտությունը առկա չէ այն հատվածի մեջ, որը ընթերցում էր Հիսուսը. (Տես Եսայի 61/1-3) և երկրորդ հատվածը կարելի է գտնել (Եսայի 58/6) մեջ:

Հայր Մաթթա Ալմիսկիինը նշում է գիտնականների անհանգստությունը կապված այս հատվածի հետ: Նա ասում է. «Գիտնականները ունեն տարբեր կարծիքներ այս լրացման հետ, ինչպես ումանք ասում են. այն ավելի ուշ ավելացրել են Քրիստոնյաները: Մյուսները, ինչպես գիտնական Քրոթթը,

⁷¹ Երկու Ավետարանականների Համձայնությունը, Սամաան Քալիուն էջ.86

ասում է, որ այս լրացումը հանդիսանում է Հրեական պատարագի երկու տեքստերի համախմբման արդյունք: Մինչդեռ գիտնական Բ Ռայքը համարձակորեն ասում է, որ ինքը, Մեսսիան է ավելացրել այն, ելնելով իր մարգարեի լիազորությունից»: ⁷² Բոլորը համամիտ են, որ այն լրացում է, ոչ թե Եսայու գրքի 61 գլուխը, սակայն նրանք համամիտ չեն այն անհատի հետ, ով լրացնել է այն, այսինքն Քրիստոսի, Հրեաների կամ ավելի ուշ Քրիստոնյաների կողմից:

Վերջապես, Մատթեոսը կատարեց որոշակի փոփոխություններ, երբ նա մեջ բերեց Միքիայի գրքից: Նա ասում է. «քանի որ այն գրառել է մարգարեն. «Եվ դու օվ Բեթհեղեմ, Հուդայի երկրում, ոչ մի նվազագույնը Հուդայի կառավարիչներից, քանի որ կգա մի կառավարիչ, ով կառաջնորդի Իսրայելի իմ ժողովրդին»»: (Մատթեոս 2/5-6) Միքիան չի ժխտում, որ Բեթհեղեմը Հրեական քաղաքներից ամենափոքրն էր, սակայն նա նկարագրում է այն ինչպես Հուդայի ամենափոքր քաղաքը: Նա ասում է. «Սակայն դուք, օվ Բեթհեղեմի Եփրաթա, ովքեր բավական քիչ եք քանակով, որպեսզի լինեք Հուդայի տոհմերի մեջ, ձեզանից պետք է ելնի ինձ համար մեկը, ով պետք է լինի Իսրայելի կառավարիչը»: (Միքիա 5/2)

ԵՐՐՈՐ. ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ և ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Տասնվեցերորդ դարում հայտնագործեցին տպագրությունը և հայտնվեց փոփոխության նոր տեսակը: Իր «Ավետարանները, նրանց ծագումը և նրանց Աճը» այս գրքի մեջ Ֆրեդերիկ Գրանտը և Ջորջ Քայրդը իր մեկնաբանության մեջ նշում է, որ 1516 թվականին Էրազմուսը թողրակեց իր առաջին տպագրությունը:

⁷² Ղուկասի Ավետարան, Հայր Մաթթա Ալ Միսկիին էջ.202

Անգլիայի և Շոտլանդիայի Արքա Ջեյսմ I օրոք, 1604 թվականին, տեղի ունեցավ կրոնական ասուլիս, որն էլ հանգեցրեց Բողոքականներից կազմված թարգմանչական կոմիտեի ձևավորմանը: Կոմիտեն պատասխանատու էր անգլերեն լեզվով Աստվածաշնչի պաշտոնական թարգմանության արտադրության համար և 1611 թվականին արքա Ջեյսմը կնքեց և հրատարակեցին այն:

Այս տարբերակը, հանդիսանում է Քրիստոնեության պատմության ամենահայտնի տարբերակը, որը թարգմանվել էր աշխարհի ամենաշատ լեզուներով, և որն էլ շարունակաբար ենթարկվել է քննադատության սկսած Արքա Ջեյսմի (Հակոբոս) ժամանակներից: Միջնորդագիրը ներկայացվում է Արքա Ջեյսմին, (Հակոբոսին) այն ասում է. «Տեքստերը, որոնք առկա են մեր աղոթքի գրքի մեջ, նվազ կամ ավել չափով տարբերվում են Հրեա տարբերակից, միգուցե փոփոխվել է երկու հարյուր առարկա»:

Բրեթոնը ասում է քահանաներին. «Ձեր հայտնի անգլերեն թարգմանությունը փոփոխել է Հին Կտակարանի խոսքերը ութ հարյուր և քառասուն ութ կետերով և պատճառ է հանդիսացել, որպեսզի մարդիկ ժխտեն Նոր Կտակարանը և գնան Դժոխքի կրակ»:

1881 թվականին Արքա Ջեյսմի (Հակոբոսի) Տարբերակը վերանայեցին և կոչեցին Վերանայված Տիպական Տարբերակ: Այնուհետ երեսուներկու աստվածաբաններ, խորհրդական կոմիտեի օգնությամբ, որը ներկայացնում էին հիսուն կրոնական աղանդներ, կրկին վերանայեցին այն 1951 թվականին և կոչեցին Վերանայված Տիպական Տարբերակ: Այն կրկին վերանայեցին 1971 թվականին և անվանեցին նույն կերպ: Հրատարակության ներածության մեջ մենք ընթերցում ենք. «Արքա Ջեյսմի տարբերակի տեքստերը ունեն լուրջ սխալներ...

այդ սխալները բազմաթիվ և լուրջ են, որոնք ունեն վերանայման կարիք»:

Վերանայված Տիպական Տարբերակը ջնջեց Հովհաննեսի Երրորդության հայտնի հատվածը: (Տես Հովհաննես Ա 5/7) և Մարկոսի Ավետարանի ավարտը (16/9-20):⁷³

Ինչպես հայտնել է կաթոլիկների Նոր Կտակարանի ներածությունը, հնարավոր է տեքստերի զարգացումը: Այն ասում է. «Այսօր, մենք կարող ենք ասել, որ Նոր Կտակարանի տեքստը կազմակերպված են լավագույն կերպով, ուստի վերանայման կարիք չունեն, մինչ այն պահը, երբ գտնվում են նոր փաստաթղթեր»:⁷⁴

Կաթոլիկները սովել են իրենց իսկ Լատինական տարբերակը, որը անվանել են «Դուայ»: Առաջին անգամ այն տպագրել են 1582 թվականին և այնուհետ 1609 թվականին: Այս տարբերակը շատ պարագաներում տարբերվում է Ժամանակակից Արքա Ջեյմսի (Հակոբոսի) Տարբերակից: Ամենակարևորը Թորայի յոթ գրքերի ավելացումն է, որը կոչվում է Ապոկիպա, որը առկա չէ Արքա Ջեյմսի (Հակոբոսի) Տարբերակի Բողոքական թարգմանության մեջ:

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

Նրանք, ովքեր փոփոխել են ավետարանները փորձել են անել դա տարբեր եղանակներով, նրանք տպագրված տեքստերին դիտավորյալ ավելացրել են որոշ լրացումներ և փակագծերի մեջ

⁷³ «Ճշմարտությունը Հայտնվել է՝ Ռահմաթուլլահ Ալ Հինդի հատոր 2 էջ. 572-573 Ժամանակակից Բանավեճ, Ահմեդ Դիդար էջ. 133-139 Արդյ ք Աստվածաունչը հանդիսանում է Աստծո խոսքը: Ահմեդ Դիդար էջ. 18-19

⁷⁴ Մուրբ Աստվածաշնչի Թարգմանությունների Տարբերությունները, Ահմեդ Արդոլ Ուսահաբ էջ. 26

տեղադրել են դրանք, որպեսզի նշեն հնագույն ձեռագրերի մեջ առկա բացակայությունները, որոնք էլ հանդիսանում են բացատրական լրացումներ:

Ամեն դեպքում, այլ տարբերակների մեջ փակագծերը անհայտանում են և այն ինչ այնտեղ էր, դառնում են սուրբ տեքստերի մաս: Այլ տարբերակների մեջ նրանք ջնջել են փակագծերի տեքստը և փակագծերը: Այս տեքստերից որո՞նք են հանդիսանում Աստծո խոսքը: Ո՞վ ունի իրավունք ավելացնել կամ ջնջել Սուրբ Աստվածաշնչից: Արդյո՞ք այն չի ավելացնում նրա պատիժը, երբ նա ավելացնում էր գրքին կամ ջնջում նրա անունը կյանքի գրքից և սուրբ քաղաքը, երբ նա ջնջում է որոշ գրքեր: (Տես Հայտնություն 22/18-19)

Որպես այս տարբերակների փոփոխության օրինակ, նշել է Հովհաննեսի Առաջին Նամակը. «Քանի որ գոյություն ունեն երեքը, որոնք վկայում են երկնքում, Հայրը, Խոսքը և Սուրբ Հոգին և այս երեքը մեկ են: Եվ գոյություն ունեն երեքը, ովքեր վկայում են երկրի վրա, Հոգին և ջուրը և արյունը և այս երեքը համամիտ են մեկին»: Առաջին հատվածը առկա չէ հին ձեռագրերի մեջ և այն չեն նշել Նիկիայի խորհրդի ընթացքում:

